Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.09
P4 5



NOV 2011

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑ.

ԹԱԳՆԻԱԾ

(ԳՐԱՄԱ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ահա մեր զարմանը.

Ներկայացիս համար բոլորատրուած է Պետերբուրգի բաժանտիկական ցենզուրայի կողմից 1903 թի փետր. 5-ին, № 1237.

Իրամանցիր անցամ դեմ դրելուց, պետք է ճանապարհ ստանալ հեղինակի կամ նրա ներկայացուցչի համաձայնությունից:

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1903

891.99
Թ-25

891.99
Թ-25
117
15556

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑ.

ԹԱԳՆԻԱԾ

(ԳՐԱՄԱ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Անտառ մեր գարունը.

Ներկայացիս համար բոլորտուած է Պետերբուրգի դրամատիկական գեղարուեստի խորհրդից 1903 թի վիճտ. 5-ին, № 1237.

Իւրաքանչիւր անգամ բեմ դնելուց, պետք է ցամոմիցիր մի կամ երկու վիկտորիայ ցուցնել բեմադրիչին:

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „Ս. ԲՕՐ“
1903

18 APR 2013

Дозволено цензурою, С.-Петербургъ 28 Мая 1903 года.

СКРЫТЫЯ ИСКРЫ, др. въ 5 д. 6 к. С. Тараянца къ представленію дозволено С.-П.Б. 1903 г. 5 февр. за № 1237.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Բժիշկ Գրիգոր Մանուէլեան։

Հեղինէ, նրա կինը։

Պաւղ, հարուստ մակլեր։

Մանուշակ, նրա կինը։

Շողակաթ, Հեղինէի մայրը։

Հռիփսիմէ, Շողակաթի ու Պաւլի մայրը։

Նազարով, վաճառական, Հեղինէի հայրը։

Միքայէլ, դեռահաս ենթապայ, Մանուշակի եղբայրը։

Մայոր, Մանուշակի ու Միքայէլի հայրը։

Մարտիրոս, ծերունի կոշկակար։

Յակոբ, երիտասարդ բանուոր։

Տէր-Գաբրիէլ։

Անահիտ, բժշկի աղջիկը, 3 տարեկան։

Լեւոնիկ, Մանուշակի որդին, 7 տարեկան։

Կարո, բժշկի ծառան, երիտասարդ։

Ծաղիկ, Մանուշակի նաժիշտը, դեռահաս աղջիկ։

Սարգիս, Պաւլի գործակատարը։

Պաշա, Հեղինէի նաժիշտը։

Դէպքը տեղի է ունեցել Անդրկովկասում ինքնասնական Թաղաններին։

Ո՛հ, անգո՜ւր են մարդիկ, անգո՜ւր է կեանքը.
Նա՛ է միայն իմ պահապան հրեշտակը...
Նա իմ հոգին կը պաշտպանէ վտանգից.
Նա չի թողլ տալ, որ ես զրկեմ իմ խնդից...
Մխիթարած նրա խօսքով արտակից,
Զեմ վախենալ ոչ մահից, ոչ սեւ հողից...

Շիլլէր:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

ՏԵՍԱՐԱՆ.

Դահլիճ բժշկի բնակարանում, բաւական շատ զարդարուած: Աջ կողմից դուռը դեպի բժշկի առանձնասենեակը: Ձախ կողմի առջեւի մասում դուռը դեպի ներքին սենեակները, իսկ հետեւի մասում՝ դուռը դեպի նախասենեակ: Ետեւի պատի վրա շուսամուտներ դեպի փողոց:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵԻՈՅԹ

Հեղինէ. (*Հայելու առաջ, հագին նոր, թանկագին զգեստ*)

Մամա, մէկ տես. էս հին շլեապան կը սազի՞ էդ զգեստին, որ առաջին անգամն եմ հագնում։

Շողակաթ.

Վա՛յ քա, էդ ի՞նչ է որ գլխիդ դնես. դէն գցի մէկ գնա էֆ։

Հեղինէ. (*փորձելով միւսը*)

Իսկ էդ շլեապան։

Շողակաթ.

Ի՜, էդ ի՞նչ թաւուր բան է, եարաբ։

Հեղինէ.

Պա՛շա... Պա՛շա...

Պաշա (*ներս վազելով*)

Что прикажете?

Հեղինէ (*անբաւական*)

Ты глуха? Принеси мою кремовую шляпу? (*Պաշան գնում է*)

Շողակաթ.

Էդ ջէր մի կենայ։ Դուն էն ասա. էսօր զոնաղներուդ ինչո՞վ պիտի պատուես։

Հեղինէ.

Ի՜հ. երանի՜ քեզ։

Շողակաթ.

Ի՞նչ է ասում Գրիշէն։

Հեղինէ.

Ոչի՞նչ չի ուզում։

Շողակաթ.

Բաս չ՚ասացէ՞ր, թէ էսօր Լուսաւորիչ է, իրա իմենինին է։

Հեղինէ (*ձայնը բարձրացնելով*)

Բաս չ՚ասեցէ՞։

Շողակաթ.

Իժում ի՞նչ ասաւ։

Հեղինէ.

Ես շատ եմ իմանում նրա ասածը, որ քեզ ասեմ։ Ասում է՝ երանի թէ հազար հալից մինը ըմբռնէր այս ասնի իմաստը։

Շողակաթ.

Իժում։

Հեղինէ.

Էլ ինչ իժում։ Ճաշ սարգելը, մարդիկ հրաւիրելը աւելորդ բան է համարում։

Ծողակաբ.

Բաս չասեցիր, թէ շնորհկոդներ կուգան, նրանց պատիւ է հարկաւոր։

(*Պաշան բերում է գլխարկները. Հեղինէն սկսում է փորձել*)

Հեղինէ.

Ասում է, կոֆէ կուներնանք, հերիք է էլի։

Ծողակաբ.

Էդ ինչ է որ, իսկի սաղ չի գալի։

Հեղինէ.

Паша, принеси шляпу съ колибри, знаешь?

Պաշա.

Если не понравится?

Հեղինէ.

Принесешь шляпу съ ландышами.

Պաշա.

Если и та не понравится?

Հեղինէ.

Принесешь большую шляпу съ красными перьями—понимаешь?

Պաշա.

А если и та не понравится?

Հեղինէ (*բարձր ու կոպիտ*).

Молчать! Вотъ нахалка!

Պաշա.

Извините-съ .. (*դնում է*)

Հեղինէ.

Տեսնում ես, մամա, սա էլ է երես առել... Ա՜խ, այս բոլորը Գրիշի մեղն է։ Այնպէս է վարուում քոծ ու բջի հետ, կասես իր քոյր ու եղբայրը լինեն։ Նրանք էլ ինձանից ոչ վախում են, ոչ էլ ամաչում։

Ծողակաբ.

Ի՜հ, ինչ ասեմ քո մարդին։ Քու հէրը էնէնց է բղաւում քոծ ու բջի վրա, վուր լեղապատառ են ըլում։

Հեղինէ.

Քո գատծ փեսան նրանից աւել խօմ չի լինիլ։

Ծողակաբ (*ձայնը բարձրացնելով*)

Վա՛ւյ քոռանամ. իս իմ գաթ . . . Քու մեղքը ուրիշներու վրա՝ ինչի ես գցում։ Ինձ էլ դուն չը ճանչեցրիր նրա հետ, դուն չէիր վուր «դիպլոմ ունի կոսէ, լաւ գոխտուր է» կոսէ . . .

Հեղինէ.

Ես որ ասեցի, բաս քո խելքը որտեղ էր. ինչի՞ հաւանեցիր։

Ծողակաբ.

Էհ հիմի ինչն է պակաս։ Ասենք թէ մի քիչ խելք չունի։ Խելք ունի, վունց թէ չունի. համա որ բանի պէտք չի գնում...

Հեղինէ.

Աբա, մամա, հիմա որ քեզ մի սեկրետ ասեմ, չես զարմանալ։

Ծողակաբ.

Ինչի՞ պիտի արմընամ։

Հեղինէ.

Դու ինչ ես նկատում. քո փեսան ինձանից առաջ ուրիշին ճանաչելիս է եղել, թէ չէ։

Ծողակաբ.

Հիմի ուր է էս վուխտին էն թաւուր տղա, վուր ազատ վախտը թռուկ էկած չըլի, ու անարատ ըլի մնացած։

Հեղինէ.

Համա Գրիշան նրանցից չի։

Ծողակաբ (*ինքնարաւական*)

Ո՜ւֆրօ լաւ. էլ ինչ ես ուզում։

Հեղինէ.

Էն որ ինձանից առաջ ուրիշին է սիրելիս եղել։ Ես էդ առաջ էլ գիտէի։ Նշան տալուց առաջ նա ինձ ասաց, որ մի ուրիշին շատ հաւանելիս է եղել։ Բայց չ'ասաց, թէ այդ ուրիշը ով է։ Զորս տարի է, որ մենք պսակւել ենք, բայց ես նոր եմ հասկանում թէ այդ ուրիշը ով է... էհ, գլուխը քարը։ (*Պաշան բերում է մի շարք կօրօրներ իրար վրա դարսած, եւ դնում է մէկ աթոռի վրա ու մէկ-մէկ վերցնելով ասում*)։

Պաշա.

Вотъ съ колибри, вотъ съ ландышами, вотъ съ перьями, и вотъ еще нѣсколько другихъ.

Հեղինէ (*բարկանալով*)

Кто у тебя другія просилъ? Вотъ дура!

Պաշա.

Если не нужно, отнесу (*կամենում է տանել*)։

Հեղինէ.

Куда же несешь? Убирайся! (*Պաշան մի կողմ է կանգնում։ Կօլիբրին փորձելով*)։

Ի՞նչպէս է սաղ գալիս, մամա։

Ծողակաբ.

Քա՛, դրա լենտերը խամ գիպ խունացել են։

Հեղինէ (*փորձելով լանդիշաւորը*):

Այս շլեապի էլ վարդերն են թառամել:

Ծողակաբ.

Ապա՛, էս դի գլխիդ:

Հեղինէ.

Ա՛յ, սա արդէն սազ է գալիս:

Ծողակաբ.

Քա, էդ մինչև քիվ պիտի ծածկես. չես բեզրէ:

Հեղինէ.

Բաս չեմ բեզրէլ: Պաշա, Убери! (*Պաշան անբաւականութիւնը զսպելով հաւաքում է տանում*): Պիտի անպատճառ գնամ Օ-բօն-Մարշէ, կամ Պարիժսկի մագազին ու մի օրինաւոր շլեապա առնեմ:

Ծողակաբ.

Փուղ կա՞յ ձեռիդ:

Հեղինէ (*փողամանը նայելով*):

Քիչ է, 15 մանէթ հազիւ լինի. սա էլ ինձ հարկաւոր է: Գրիշկից կուզեմ:

Ծողակաբ.

Կը տա՞յ:

Հեղինէ (*փոքր ինչ կոպիտ*):

Ինչպէս կարող է չտալ: Ասենք ով գիտէ...

Ծողակաբ.

Դուն ջէր փորձի. կուլի վուր տայ: Թէ վուր չի՛ տալ, էն վուխտը իս կուտամ—կառնես: Համա իրան կօսիս. նիսիա իս վի կալէ, որ իժում չունա տայ փուղը:

Հեղինէ.

Լաւ. յետոյ նրա աւածովն էլ ուրիշ բաներ կ'առնեմ:

Ծողակաբ.

Խասիաթդ է ախր. ձեռդ ընկածը բաց չես թողիլ: Համա խուսքդ կիսատ մնաց, դուն էն ասա—ով է էլի քու մարդի սիրեկանը:

Հեղինէ.

Սիրեկան իսօ չէ... Ա՛յնպէս հաւանելիս է եղել նրան: Ապա իմացիր, թէ ով կ'լինի:

Ծողակաբ (*փոքր բարձր*):

Քա՛, իս ի՞նչ գիտիմ:

Հեղինէ.

Քո սիրած եղբօր կնիկը:

Ծողակաբ (*զարմացած*)

Քիմէն չիմ արմնամ... Մանո՞ւշակը... Քա, ինչի՞ իս տուտուց—տուտուց դուս

Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

տալի։ Նա ինչ է վուր... դեղնած կոսես մեռել ըլի։

Հեղինե.

Միշտ խո այնպէս չի՞ եղել։

Ծողակաբ.

Նրանից խոմ իրան մարդն էլ է բեզրի։

Հեղինե.

Մարդը կըբեզրի, իսկ ուրիշները չեն բեզրիլ։

Ծողակաբ.

Ինչ, դուն վուրդանց գիտես վուր նա է. ես մէ գամ էլէ չիմ տեսէ նրանց մէկ-մէկու հետ խոսելիս, ան մէկ-մէկու վրա մտիկ տալիս։

Հեղինե.

Հէնց բանն էլ այդ է է... Դու Մանուշակին ինչպէս ես ճանաչում։ Ասած է, էն ջրից վախեցիր, որ ոչ խշշում է, ոչ վշշում է։ Կարծես թէ նրանք մէկ-մէկուց վախում են։ Եթէ սիրտները ուղիղ է, ինչի՞ են վախենում։

Ծողակաբ.

Ախր դուն ինչ ես տեսի նրանց մէջ։

Հեղինե.

Մի օր Գրիշին ասեցի, որ Մանուշակը էլի իր ամուսնուց նեղացել էր ու գնացել էր հոր տունը, մի շաբաթ խռով էր մնացել և տեսնելով որ իրան աղաչանք անող չկայ, քոռ ու փոշման յետ էր եկել։ Դու պիտի տեսնէիր, թէ Գրիշան ինչպէս տխրեց, այնպէս ախ քաշեց, կարծես իր ջան ու ջիգերը լինէր։

Ծողակաբ.

Ի՜հ, ինչ ես սիրտդ նեղացնում, դարդակ բան է։ Վունց որ էն Մամուրենց տղէն քեզ չէր ուզում։ Թէ որ Սիբիր չի ղրկէին, հիմի դու նրան կնիկը չէիր։

Հեղինե.

Ես բան չեմ ասում։ Գլխները քարը... Թող ինձ ուրախ պահի, ոչ մի բանից չի ղրկի, այնքան ախ քաշի որ... Գնանք, մամա, մի չաշկա սուրճ խմենք։ (*Լսում է Կարոյի սազի ձայնը*) Տեսնում ես, մամա, Կարօն այսքան ժամանակ գալը կարգի չի բերել, նստել է ու իրա համար հանգիստ սազ է ածում։ Ես նրան ցույց կը տամ, թէ սազ ածելը ինչպէս է լինում (*գնում են*)։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

(Ներս է մտնում Կարօն՝ մաքրելու պարագայքով եւ նրա ետեւից Հեղինէն, որի ձայնը դեռ նախասենեակից լսւում է)։

Հեղինէ *(բարկացած)*

Հազար անգամ ասել եմ, որ առաւօտները վաղ վեր կենաք, ու գործերդ կատարէք։ Ինչո՞ւ մինչև այժմ զալը կարգի չէք բերել։ Ոտներդ ձգած քնում էք. ամենքդ արիստոկրատ էք դարձել։

Կարօ *(քաղաքավարի)*

Չի մեղ չկայ, խաթուն. ես ազօթարանին եմ աքխել։

Հեղինէ.

Դու ասում ես «մեղաւոր չեմ», Պաշան ասում է «մեղաւոր չեմ», բաս ե՞ս եմ մեղաւոր։ Ինչո՞ւ զալը կարգի չես բերել մինչև այժմ. հիմա էլ նստել ու սաղ ես ածում։

Կարօ.

Ուզում ի՞ ներս իգեալ, ամա Պաշից իմացայ, գիւք բան ունէք էստեղ։

Հեղինէ.

Ինչո՞ւ առաջուց կարգի չէք դրել։

Կարօ.

Մզիք ջոկ պաներ կին անելու։

Հեղինէ.

Ձեմ ասի՞լ, որ ամենից առաջ զալը կարգի բերէք։

Կարօ.

Ասել էք։

Հեղինէ.

Ուրեմն։

Կարօ.

Ամա գիւք թամխել էք, որ զբակն լէ զմենից ռաջ ստկինք, զտանտուն լէ զմենից ռաջ ժողվինք և զմեն պան լէ զմենից ռաջ անինք, ամա էդ զիմ խելքի բան չի։

Հեղինէ.

Դո՞ւ էլ ես լեզու բացել։ Ոչովի խօսացնել չի լինում։ Մէկ խօսքին երկուսն էք պատասխանում։ Ինձանից շատ էք ուտում, ինձանից շատ էք խմում, փըշրում էք, թափում էք, այրում էք, փչացնում էք, բայց գործ կատարել չէք ուզում։ Ո՞վ ձեզ ձրի հաց կը տայ։ Մինչև հիմա քո բերանում լեզու չ'կար, հիմա դու էլ ես լեզու բացել։

Կարօ.

Ընդրա համար որ զիմ համբերութին լէ հատերի։ Զմեն կեախ էնէնց երէսիս կը զարկէք զիմ կեր, ինչխ որ զձեր հաց լոր կուտեմ։

Հեղինէ

Տեսնում ե՞ք, տեսնում էք... Հարամ լինի այն հացը, որ դու ուտում ես։

(Դուռը շպրտելով դուրս է գնում)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Կարօ *(շարունակում է կարգի բերել դահլիճը)։*

Էէ... Աշխարքի բանը էդէնց ի։ Անտէրը ծուռն ի շինած, ծուռն։ *(Անբաւական)* Բժիշկ Մանուէլեանցին էդէնց կնիկ... Էն տէրտէրի ճիթը կոտրուէր, որ իսոնց չի պսակիր։ *(Բռունցքը ցոյց տալով)* Թէ զիմ ձեռ կ'ընկնէր... ես զինոր կլէօխը կը ջարմի։ Մեղայ Բեգ Աստուած. իսոնց մէմկու ռատ բերողը Աստուած չի։ *(Մտածելով)* Ա՜յ, աղէկ կնիկ, ծաղիկի խաթուն, տիկին Մանուշակը, հանգի՞ստ, բարի՞... զմեն բանով խորոտ։ *(Յանկարծ իբր գիւտ անելով)* Ա՜յ թէ որն ի խարջ բժիշկ Մանուէլեանցի համար, գձիւն երկու տապակ երած։ Զիսо բժիշկ Մանուէլեանցին զ'տիկին Էլէնա — Պաւլին — էդ չար ստատնի ծննդին զտիկին Մանուշակ։ Տէնաս, ընդրանց որ սեակլէօխն է պսակի։ *(Զանգահարութիւն)* Զանգի ձէնից բիլա մարդ մահլիմ կընի *(գնում է)*։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Բժիշկ.

(Ներս է մտնում՝ մի շարք լրագիրներ ձեռին, որը դրում է բազմոցի վրա) Այո՛, լաւ եղանակ է այժմ։ Օդը թարմացաւ։ Մի փոքր որոտմունք, մի փոքր կարկուտ, մի փոքր անձրև ու ամեն բան փոխւում է, նոր կեանք է ստանում։ Ինչո՞ւ են դարձեալ լուսամուտները փակել. ծանր օդ է կանգնած։ *(Բացում է լուսամուտը. մի մեղմ շողք է ընկնում դահլիճի մէջ)* Որքա՜ն գեղեցիկ է բնութիւնը մանաւանդ գարնան նեարդալին օրերում, երբ նա սիրաբորբոք երիտասարդի նման մերթ ժպտում է, մերթ արտասւում, մերթ յուզւում է և մերթ անդորը ու հանգիստ արամադրութիւն ստանում։ *(Մտքի մէջ ընկղմելով)* Իսկ կեանքը... մարդը... բնութեան հրաշագործ ներկայացուցիչը... *(Մօտենալով բազմոցին)* Տեսնենք, թէ նա ինչ է անում։ *(Նստելով թերթում է լրագիրները)* «Խաղաղութիւնը պահպանելու համար եւրոպական մեծ պետութիւնները»... Ա՜խ, անտանելի՜ է այլ ևս... «Մի նշանաւոր գիւտ *(մտքում կարդում է ու տեղից վերկենում)* Ահա՛ մի զօրեղ գիւտ... Այո՛, այդ գիւտից հրաշքներ կարելի է սպասել։ *(Զախ կողմի սենեակի դռնից լսւում է Հեղինէի ձայնը. «Դէ՛ ներս կորիր, տեսնեմ»)*։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Հեղինէ *(ներս հրելով Անահիտին)*։

Ո՜ւֆ, հոգիս հանեց։ Զանգակի ձայ-

նը լսեց թէ չէ, նստած տեղից վեր թռաւ, ոուրճի չաշկան վայր գցեց—կոտրեց։

Ռժիշկ (*սկսում է փայփայել Անահիտին*)

Շատ բնական է, որ երեխան իւր հայրիկին այնպէս ջերմ սիրում է։

Հեղինէ.

Եթէ լաւ երեխայ է, ինձ ինչու չէ սիրում.

Ռժիշկ.

Որովհետև դու կոպիտ ես վարւում նրա հետ։

Հեղինէ.

Ի՞նչ եմ անում. աչքը խօմ չեմ հանում։

Ռժիշկ (*մեղմ բայց զօրեղ*)

Վայրենին անգամ իւր երեխայի աչքը չի հանիլ, բայց այդ բաւական չէ։ Աչքը չես հանում, բայց ծեծն էլ չես խնայում։

Հեղինէ.

Լաւ եմ անում. ինչու է ինձ չարչարում, ինձ մայր չի ծնել։

Ռժիշկ.

Ի՞նչ է անում քեզ։

Հեղինէ.

Ի՞նչ պիտի անի։ Սուրճը թափել է, թէ «հայրիկի մօտն եմ գնում»։ Ասում եմ «դէ գնա». «չէ—ասում է—դու տար»։ Վեր եմ կենում—բերում, հիմա էլ դռներումն է կանգնել, չի ուզում ներս մտնել։ Այս ինչ տեսակ երեխայ է, հոգիս հանում է։ Բայց ամեն բան դու ես անում դու... Ջիգրու ես անում, որ ինձ տանջի։ Այնքան սէր ես ցոյց տալիս, որ երես է առնում։

Ռժիշկ.

Դու կամենում ես որ ես իմ երեխային չը սիրեմ։ Ագռաւն անգամ իւր ձագուկներին սիրում է։ (*Գրկելով երեխային*) Նայիր նրա աչերին, մթթէ կարելի է չը սիրահարւել։ Նայէ՛ր, իսկ և իսկ քո՛ աչերը, միայն ոչ այժմ, ոչ... այլ երբ ես առաջին անգամ ծանօթացայ քեզ հետ։

Հեղինէ.

Աչքերից մինչև անգամ կապրիզ է թափւում։

Ռժիշկ.

Այդ մասամբ ժառանգական է։ Միւս կողմից նա շատ հոգեբան երեխայ է, բայց դու նրան չես հասկանում։

Զանգահարութիւնը լսելով նա բուռն տենչանք է զգացել դէպի հայրիկը։

Հեղինէ.

Թող ուրեմն գար։

Ռժիշկ.

Բայց նա կամենում է տեսնել հայրիկին մայրիկի ներկայութեամբ։

Հեղինէ.

Իսկ ինչու էր դռանը կանգնել և չէր ուզում ներս մտնել։

Ռժիշկ.

Քո խիստ վարմունքը տարակոյս է ծնեցնում նրա սրտում, թէ արդեօք ինքը մի ծանր յանցանք չէ գործում մայրիկի մօտ գալով։ Նա շատ նուրբ երեխայ է, բայց դու չես վարւում նրա հետ հարկաւոր նրբութեամբ։

Հեղինէ.

Դու ուզում ես, որ ես երեխայի ձեռին էլ, ծառաների ձեռին էլ, ամենքի ձեռին էլ գերի դառնամ... Խելքդ ո՞ւր է գնում է՞... Գիտես, թէ ես ում աղջիկն եմ...

Ռժիշկ (*բարկութիւնը զսպելով*)։

Այսօր դարձեալ վատ ես տրամադրւած. ի՞նչ է պատահել։ Դարձեալ սկսել ես խօսալ առանց մտածելու։

Հեղինէ.

Դու միշտ պատրաստ ես ինձ վիրաւորելու։

Ռժիշկ (*իրան զսպելով*)

Լաւ, էլ չեմ վիրաւորիլ։ Նստիր—թերթենք նոր լրագիրները։ Լսիր, Հեղինէ, այս բոպէին մի շատ հետաքրքիր նորութիւն կարդացի (*Նստում է և երեխային մօտը նստեցնում։ Հեղինէն նստում է փոքր հեռու և ակամայ մի լրագիր վերցնում*) Մէկ գերմանացի պրոֆեսօր մի շատ նշանաւոր գիւտ է արել։ (*Հեղինէն նայում է լրագրի չորրորդ երեսը*)։

Հեղինէ.

Թէ սուրճ խմելու ես, արի՛ խմիր, յետո՛յ կը կարդաս։

Ռժիշկ.

Կը կամենայի մի բաժակ հէնց այստեղ խմել։ Այստեղ օդը թարմ է։ Բայց դեռ լսիր։ Բանից դուրս է գալիս, որ գոյութիւն ունի էլէկտրական մի անեւրևոյթ լոյս, որի միջոցով կարելի է հետազօտել մարդու նեարքին գործարանները։ Գիտես թէ որքան նշանակութիւն ունի այդ գիւտը...

Հեղինէ (*կարդում է*)։

«Մազերը գանգուրացնելու նոր գոր-

ծիք» (*Բժիշկը չէ լսում*) Հետաքրքիր է...

Բժիշկ.

Հետաքրքիր է ու շատ կարևոր։ Հենց օրինակ բժշկականութեան տապարիզում։ Այդ ճառագայթները ուղղակի մահի ճանկերից կազատեն շատերին։

Հեղինէ. (*Ինքն իրան*)։

Արժէ ձեռք բերել։

Բժիշկ.

Ի՞նչպէս ձեռք բերել։ Այդ դեռ միայն զուտ գիտնական մի գիւտ է։ Իսկ նրանից օգտուելու համար անշուշտ ապագայում սրոշ գործիքներ կը պատրաստեն, որոնց ամեն մի բժիշկ կը կարողանայ ձեռք բերել, հասկանում ես։

Հեղինէ.

Ի՞նչը։

Բժիշկ.

Դու տկանջ չէիր գնում...

Հեղինէ.

Չես տեսնում, որ տկանջ եմ գնում։ Օ՜հ, կռիւի համար միշտ պատրաստ ես էլի։

Բժիշկ (*ղառն*)։

Հեղինէ...

Հեղինէ.

Էլ, ի՞նչ ես ուզում։

Բժիշկ.

Այսօր մայրիկիդ չե՞ս տեսել։

Բժիշկ.

Առաւօտ—առաւօտ մայրիկը ի՞նչ ունէր քո տանը... Թէկուզ հենց տեսած լինիմ, ի՞նչ կայ որ։

Հեղինէ.

Ոչի՞նչ։ Բայց սովորաբար դու նրա հետ տեսակցելուց յետոյ... էհ թողնենք... (*մէկ գիրք վերցնելով*) ուզարկիր երեխային փոքր ինչ ման գալու։ Մի բաժակ սուրճ ուզարկիր այստեղ (*նստում է ու խորասուզում գրքի մէջ։ Հեղինէն գնում է։ Կարօն երևում է նախասենեակի դռանը*)։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Կարօ.

Կարելի է ներս իկեալ։

Բժիշկ.

Եկէք։ Ի՞նչ էք հրամայում։

Կարօ.

Ներեցէք, պարոն բժիշկ։ Ես եկել եմ խնդրելու, որ զիս արձակիք։

Բժիշկ (*զարմացած*)

Ինչո՞ւ։

Կարօ.

Ես դադրել եմ. ծառայութիւն իմ բանը չի։

Բժիշկ.

Բայց, Կարօ, մթթէ ես քո ճակատին ծառայի անուն եմ դրոշմել։ Ուրեմն դու չը հասկացար ինձ։ Ի՞նչ գիտես, թէ ես ինչ մտադրութիւններ ունէի քո վերաբերմամբ։

Կարօ.

Ես զմեն կէսախ հազիր իմ ձեր հրամանոց, ամա էս տան ապրիլ զիմ համար գօռն ի։

Բժիշկ.

Ախր ի՞նչ է պատահել. ինչո՞ւ է յանկարծակի միտքդ փոխուել։

Կարօ.

Մի ջօկ բան չկայ, ամա... էնէնց, ինձ համար լաւ չի...

Բժիշկ.

Եւ ինչո՞վ ես կամենում դու այժմ զբաղուել։

Կարօ.

Զեմ գիտէ. ինչ Աստուած ռաստ կը բերի։ Իսկի բան չ'էլնի, խօ կարամ սազ ածելով մի կտոր հաց վաստկեմ։

Բժիշկ.

Այո, դու լաւ ես ածում. երբեմն իմ ականջին հասնում է քո սազի ձայնը։ Իսկ երգել գիտե՞ս։

Կարօ.

Զմեր երկրի տաղերից մէ քանիս գիտեմ։

Բժիշկ.

Լաւ, այժմ դեռ գնա, մի փոքր էլ համբերիր, մինչև որ ես քեզ համար մի ծրագիր պատրաստեմ։ Գնա, Կարօ, լսիր իմ խօսքը, դեռ համբերիր, ես կը-մտածեմ քո մասին։ (*Կարօն դուրս է գնում։ Հեղինէն սուրճը բերում է*)։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հեղինէ.

Այդ զմբօն ի՞նչ է զահլա տանում, ի՞նչ է ուզում։

Բժիշկ.

Կամենում է դուրս գնալ։

1564
ՀԱՅ ՀՆՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ. Ազգային Գրադարան
7/31 1922
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հեղինէ.

Ջահաննամը նրա գլուխը. թող կորչի ուր ուզում է, շատ է լպստւել։

Բժիշկ.

Այսօր բան է պատահել։

Հեղինէ.

Ո՞ր օրը չի պատահում։ Երես է առել, խօսացնել չի լինում։ Այնպէս պատասխաններ է տալիս, կասես թէ ծառայ չէ, այլ մի պաշէօանի կավալեր է։

Բժիշկ.

Բայց այդ յանցանք չէ. նա էլ մեզ նման մարդ է։

Հեղինէ.

Ա՛յ, այդ խելքի ես է, որ մենք այս օրի ենք ընկել։

Բժիշկ.

Ի՞նչ օրի ես ընկել, սիրելիս, ինչդ է պակաս։

Հեղինէ.

Շատ բան է պակաս։ Ի՞նչ կեանք ունինք մենք, պաղրուգէքս ամենքը ծիծաղում են վրաս։

Բժիշկ.

Ինչո՞ւ։

Հեղինէ.

Նրա համար, որ նրանց հագածը ես չեմ հագնում, նրանց տուած վէշերները ես չեմ տալիս, նրանց տեսած ուրախութիւնները ես չեմ տեսնում։ Ո՞ր մէկն ասեմ... Տեսնում ես, թէ ինչպէս են ապրում իմ ընկերուհիները... Մազալովի աղջիկը ոտքով երկու շաղ ճանապարհ չի գնում, Հազարապետովի աղջիկը դամաշնի փայտոն ունի, Բաղալովի կինը, որ մի սոված մարդու աղջիկ էր, ամեն տարի Կարլսբադ է գնում։ Իսկ ես... (*Լացակնուած*) Մանգլիսն ու Ախալքալաքն ես ինձ արժան համարում։ Ես նրանցից պակաս մարդու աղջիկ եմ (*լաց է լինում*)։

Բժիշկ (*տխուր*)։

Իւրաքանչիւր մարդ պիտի ապրի իւր միջոցների համեմատ։ Կարծում եմ, որ ես իմ միջոցները չեմ խնայում քեզ համար։

Հեղինէ.

Դու քո ունեցածը սրան—նրան ես բաժանում, իսկ ինձ խրատում ես, որ ընտեսաբար ապրեմ։ Ո՞ր բժիշկն է քեզ նման շարունակ աղքատ հիւանդների եռեւից ընկնում։ Ո՞ր բժիշկն է քեզ նման գրքեր գրում և առանց փող բաժնում։ Ո՞ր բժիշկն է այդքան ընկերութիւնների մասնակցում, ամեն տեղ անխնայ փող ծախսում, բայց իւր կնոջից պահանջում, որ լացք անողի պէս ապրի։

Բժիշկ.

Ես քեզանից երբէք այդպիսի բան չեմ պահանջել։ (*Վիճաբանելով*)։ Ախ, Հեղինէ, այդքան ժամանակ դու չը հասկացար ինձ... կամ թէ ուզդակի չես ուզում հասկանալ։ Դու մոռացել ես այն բացատրութիւնները, որ ես ամուսնանալուց առաջ քեզ տալիս էի... Մթթէ դու չէիր կարդում այն նամակները, որ պսակելուց առաջ ես քեզ գրում էի և դու միշտ հաւանութիւն էիր տալիս։

Հեղինէ.

Մի խօսք էլ չեմ յիշում այն նամակներից։

Բժիշկ.

Որովհետև մի խօսք էլ չես հասկացել, կամ թէ բոլորովին չես կարդացել։ Ուրեմն դու ինձ խաբել ես...

Հեղինէ.

Իսկ դու ինձ չէ՞ս խաբել։

Բժիշկ.

Ինչով։

Հեղինէ.

Նրանով, որ ուրիշի վրա աչք ես ունեցել։ Թէ ինձ չէիր սիրում, ինչո՞ւ էիր ուզում։

Բժիշկ.

Ո՞ւմ վրա եմ աչք ունեցել։ Քո ակնարկը տիկին Մանուշակի՞ն է վերաբերում։

Հեղինէ.

Ի՞նչ շուտ ես գլուխ ընկնում։

Բժիշկ.

Ես իսկապէս աչք եմ ունեցել ոչ թէ այս ու այն որոշ անհատի վրա, այլ իմ ուշադրութիւնը գրաւողը այն էգէալն էր, որ ես կազմել էի հայ կնոջ մասին։ Ես ջերմ ու անկեղծ սրտով էի վերաբերւում դէպի քեզ, որովհետև հաւատում էի, թէ դու կարդարացնես իմ յոյսը։ Սակայն դու շատ հեռու ես այդ մտքից... Զարաչար սխալւած եմ ես... (*Մտնում է Շողակաթը, որը լսում է բժշկի վերջին խօսքերը*)։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Շողակաթ.

Ամենից առաջ բարիլուս։ Շնաւոր

ըլի իմէնինիդ, ամեն տարի էս օրին հասնինք, ուրախ ըլինք։

Բժիշկ.

Շնորհակալ եմ։

Ծողակաք.

Իժում մի ասա—տեսնեմ, էդ ինչ բան է վուր դուք իք անում։ Մարդ ու կնիկ իք, ուրախ խօսեցէք, ուրախ իմացէք, որ բարեկամն էլ տեսնի ուրախանայ, դուշմանի էլ աչքը դուս գայ։

Բժիշկ.

Ես ոչինչ չունեմ այդ բանի դէմ։

Ծողակաք.

Վուր ոչինչ չունիս, ինչի՞ իս ամեն սահաթի ջահիլ կնկադ արունը պղտորում, սիրտը կոտրում։ Ասա՛ տեսնամ՝ խօմ չեմ փոշմանի վուր նրան ուզիլ իս։

Բժիշկ.

Ուզողակի փոշմանելը—դեռ չեմ կարող ասել։ Բայց եթէ միշտ այդպէս շարունակի, գուցէ և փոշմանեմ։

Հեղինէ.

Մամա, ինչ գործ ունես, ինքն է իմանում (վիրաւորած դուրս է գնում)։

Ծողակաք.

Ինչի՞... ինչ է արել քեզ իմ աղջիկը, ան թէ ինչն է պակաս։ Չօլախ չէ, քոռ չէ, խուլ չէ, քաչալ չէ... Սիրունութենով էլ ոչովից պակաս չի, կարմիր թշերը կօսես վարդ ըլին։ Խօսելումը, մարդու մէջ դուս գալումը, սարգ ու կարգ անելումը ամենքին յետ կու թողի։ Էլ ինչ ես ուզում էն խեղճեմէն։

Բժիշկ.

Այդ բարեմասնութիւնների դէմ ես ոչինչ չունեմ, բայց սրանք չեն իմ որոնած գլխաւոր յատկութիւնները։

Ծողակաք.

Դէ մի գամ դրուստն ասա ու պըրծի էլի, թէ ինչն է քու ուզածը, վուր մենք էլ իմանանք, միամիտ ըլինք։ Իքնեբա դուն իմ աղջկայ վրա ծուռ մըտքը՞ ունիս։

Բժիշկ.

Այդ մասին կարող էք միանգամայն ապահով լինել, ես այդպիսի կասկածներ չունեմ։

Ծողակաք (*բաւականութեամբ*)։

Քա, բաս էլ ինչ կայ ձեր մէջ, վուր միալար մէկ-մէկուց նեղանում էք, մէկ-մէկու վրա խօսում էք։ Ախր ինչ է խեղճ էրեխիս մեղքը։

Բժիշկ.

Մէկ բառով ասեմ, թէ ես ինչ եմ որոնում և ինչ չեմ գտնում։ Հեղինէն ինձ ընկեր չէ, և չնայելով իմ բոլոր ջանքերին, նա չէ փոխւում, չէ կամենում ինձ ընկեր դառնալ։

Ծողակաք (*մասամբ հեղնօրէն*)։

Ընկե՞ր... Ի՞նչ է խօսում էս աղէն, քա՛... Դուն նրան կնիկ ես ուզէ, թէ ընկե՞ր։ Մի թամ քի՞չ ընկերներ ունիս։ Էլ վարժապետ, արլակատ, գազեթչիկ չի մնացել, որ քեզ չը ճանչնան։ Դիփ էլ քեզ ընկեր չեն, բաս ինչ են, որ կնիկդ էլ ընկեր ես ուզում։ Կնիկը կնիկ է. ո՞վ է իմացի, վուր կնիկը ընկեր ըլի մարդու համա։ Ես քեզ աղջիկ եմ տուել, վուր դայ ուրախ ապրի, աշխարհքը վայելի, քէֆ անի, ու դու՛ էլ, տղամարդ ես, ուսում ես առել, լաւ աշխատանք տուն բերես ու կնկանդ փառքով ու պատուով պահես։

Բժիշկ (*վհատելով*)։

Այո՛, հէնց այդ է... Եւ Հեղինէն էլ ճիշտ այդպէս է հասկանում իւր կոչումը։ Այո՛. անբաղդ եմ ես, անբաղդ է իմ երեխան, անբաղդ է և իմ կինը... (Զանգահարութիւն)։

Կարօ (*դռնից*)։

Մէ ծերուկ մարդմ՝ է։

Բժիշկ.

Թող ներս գայ։

Ծողակաք.

Քեզ անբաղդութիւն ուզողի աչքը դուս գայ, վուրդի։ Խելքներդ գլուխներդ հաւաքեցէք, թէ չէ աշխարհքի ղէնս մասխարա կու դառնաք։ (Գնում է)։

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մարտիրոս (*ներս մտնելով*)։

Ներեցէք, պարոն բժիշկ, ես... (*հաղում է*) խեղճ (*հաղում է*) մարդ եմ (*նստում է բազկաթոռի վրա*)։ Հիւանդ եմ, պարոն բժիշկ, խղճացէք ինձ, ողորմեցէք իմ երեխաներին (*հաղում է*)։

Բժիշկ.

(*Ցոյց տալով դէպի իւր առանձնասենեակը*)

Համեցէք այստեղ։

Մարտիրոս.

Թողէք շունչ քաշեմ։ Սաստիկ յոգնեցի։ Դուք ուզում էք անդղել ինձ։ Արդէն հարիւր անգամ նայել են, կուրծքս, մէջքս, մի խօսքով դիփ։ Հոգիս հանել են։ Դեղ չի՞ մնացել, որ չը խմացնեն։ Ա՜յ (*հանում է ծոցից մի շարք դեղատոմսեր և տալիս է բժշկին*)։

Բժիշկ.

Իսկ ինչ է եղել հետևանքը։

Մարտիրոս.

Հիւանդութիւնս օրէցօր սաստկացել է ու հիմա շատ վատ եմ զգում ինձ (կրկին հազը սկսում է)։

Բժիշկ.

Ձեզ անհանգստացնողը միայն հազն է։

Մարտիրոս.

Շարունակ հազում եմ, մանաւանդ գիշերը. երբեմն էլ արիւն եմ թքում։ Երբ մի փոքր գործում եմ—ուժասպառ եմ լինում։ Տասն քայլ ճանապարհ գնալուց շնչասպառ եմ լինում։

Բժիշկ.

Տաքութիւն չունէք։

Մարտիրոս.

Գիշերը նախ մի փոքր տաքացնում եմ, յետոյ սաստիկ քրտնում եմ։

Բժիշկ.

Ի՞նչպէս է Ձերախորժակը։

Մարտիրոս.

Առաջւայ խորժակը այլևս չկայ, թէև դեռ ուտել ունիմ։

Բժիշկ.

Ինչո՞վ էք զբաղւում։

Մարտիրոս.

Խարազ եմ։ Բայց որտեղ է առաջւայ աշխատանքը։

Բժիշկ.

Ձեր սնունդը բաւարար է։

Մարտիրոս.

Որքան Աստուած տալիս է։ Թէ լինում է ուտում ենք։ Թէ չի լինում—ցամաք հացով, կանաչիով եալայ ենք գնում։

Բժիշկ.

Ո՞չ, Դուք պիտի լաւ ուշադրութիւն դարձնէք Ձեր վրա։ Ձեր բնակարանը խոնաւ չէ։ Պիտի ըստ կարելոյն քիչ գործէք, սնունդը պիտի պակաս չլինի, բնակարա՞նը պիտի խոնաւ չլինի ու թարմ օդ պիտի ունենայ...

Մարտիրոս (*յուսահատ*)։

Այո՛, պարոն բժիշկ, շա՛տ լաւ էք ասում։ Բայց ախր հնար չկայ։ Վեց երեխայ ունիմ։ Կինս էլ շատ ժամանակ հիւանդ է լինում։ Աղջիկս մարդու էի տուել. մարդը մեռաւ-Աստուած հոգին լուսաւորի։ Իսկ կինը երկու երեխով

թափուեց իմ գլխին։ Ի՞նչ պիտի ուտեն այդ կոտորուածները, եթէ ես հանգստանամ։ Կամ թէ ինչո՞վ վարձենք լաւ բնակարան, քանի որ վատի քրէհն էլ գըժուարութեամբ ենք վճարում։ Խղճացէք իմ երեխաներին, պարոն բժիշկ։

Բժիշկ (*փոքր անբաւական*)։

Զարմանալի է... Քանի՞ տարի է, որ Դուք պարապում էք Ձեր արհեստով։

Մարտիրոս.

Աստուած է իմանում։ Ղարսի կռւի ժամանակ ես յայտնի վարպետ էի։

Բժիշկ (*զարմացած*)։

Եւ այդքան ժամանակ չը կարողացա՞ք մի բան տնտեսել նեղ օրւայ համար։ Դեռ ասում են թէ հայը լա՛ւ տնտես է։

Մարտիրոս.

Ինչո՞ւ չէ. մենք էլ մեզի գեօրայ մի բան յետ գձեցինք։ Մեր աշխատանքը կաթիլ—կաթիլ է լինում։ Էլի մեր երեխեքոնց հացը կարելով, մեր ատամների ջուրը ծծելով, ես ու ինձ նման շատ անբաղդներ, կարողացանք մի բան յետ գցել ծերութեան համար։ Բայց Աստուած խելքներս գլխներիցս հանեց, ագահութիւն արինք, ուզեցինք աւելի շահ ստանալ և դիպ էլ կորցրինք (*յուզմունքից հազը սկսում է*)։

Բժիշկ (*անհամբեր*)։

Ի՞նչ արիք Ձեր տնտեսածը։

Մարտիրոս.

Ես էլ ուրիշների նման շահով տուի, որ էլ աւելի ա՛ճի։ Ընտանիքիս ողջ յոյսը այդ էր։ Երեխեքս ուրախ էին և պարծենում էին, թէ «Մեր հայրիկը շահով տուած փող ունի»։

Բժիշկ (*անհամբեր*)։

Վերջապէս ի՞նչ եղաւ այդ գումարը։

Մարտիրոս.

Կո՛ւլ գնաց։

Բժիշկ.

Ինչպէ՞ս թէ կուլ գնաց։

Մարտիրոս.

Այն հարուստ աղան, որ շահեցնում էր իմ և ինձ նման շատերի գումարները, այժմ սնանկ է, այսինքն թէ սուտ տեղից իրան սնանկ է յայտնում և բոլորը տակովն է անում։ Եւ մթթէ Դուք չը գիտէք, որ ինձ էք հարցնում։

Բժիշկ.

Զարմանալի մարդ, ես որտեղից գիտեմ: Եւ Դուք մտադիր չէք դանդաւելու:

Մարտիրոս:

Ի՞նչ վեր կը դայ ձեռներից: Արդ ու ֆարդ անելու համար էլ փող է հարկաւոր: Բէասիրի ձեռքից ի՞նչ է դալիս:

Բժիշկ.

Մթթէ Դուք մուրհակ չունէք:

Մարտիրոս.

Ունինք:

Բժիշկ.

Կամ մթթէ նա ոչինչ կայք-բան չունի, որից Դուք կարողանայիք գոնէ մի մասը ստանալ:

Մարտիրոս.

Նա փորձուած մարդ է, անձայն—անծպտուն առաջուց իւր բանը տեսել է: Երկու տուն ունի, որից մէկը գրել է կնոջ անունով, իսկ միւսը... Է՛հ, պարոն բժիշկ, Դուք փորձում էք ինձ, մթթէ բոլորը Ձեզ յայտնի չէ:

Բժիշկ.

Հաւատացնում եմ, որ ոչինչ չգիտեմ: Ախր ո՞վ է այդ անզգամը, որ Ձեր նման խեղճերի կոպէկները կարողանում է կլանել:

Մարտիրոս.

Ինչո՞ւ էք անզգամ անւանում. ինչքան չլինի, դարձեալ Ձեր աներն է:

Բժիշկ (*ապշած վեր թռչելով*)

Իմ անե՞ը...

Մարտիրոս.

Ի հարկէ... Եւ ահա այդ տունը, ուր Դուք ապրում էք, իւր բոլոր խանութներով միասին գրել է Ձեր կնոջ վրա:

Բժիշկ (*զարհուրած*):

Եւ իմ կինը գիտէ այդ:

Մարտիրոս.

Անշուշտ պիտի գիտենայ:

(*Բժիշկը շփոթած դէս ու դէն է դնում, մօտենում է ծախ դռան, կարծես թէ կամենում է մէկին կանչել, կրկին յետ է դառնում, նստում է բազմոցի վրա, կամենում է ինչ որ ասել Մարտիրոսին, բայց կանգ է առնում: Կրկին վեր է կենում, խորասուզուած անցուդարձ է անում և վերջապէս կանգ է առնում Մարտիրոսի առաջ*):

Բժիշկ.

Այժմ, յարգելի բարեկամ, Դուք ի՞նչ խորհուրդ կը տայիք ինձ:

Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

Մարտիրոս.

Խորհուրդը Դուք պիտի տաք: Ես հէնց սրա համար եմ եկել Ձեզ մօտ, թէ չէ դեղերից վաղուց եմ բեզրել:

Բժիշկ.

Ես ինչ որ կարող եմ, կանեմ Ձեզ համար: Ո՞րտեղ է Ձեր բնակարանը, ես կը մտնեմ Ձեզ մօտ:

Մարտիրոս.

Ես ինքս կը գամ Ձեր հրամանոց տաքը: Դուք կը խղճաք մեզ, ես գիտեմ թէ Դուք ինչ հոր որդի էք:

Բժիշկ.

Ահա Ձեզ այդ քսան ու հինգ ռուբլին: Փարը ինչ դեռ կարգի դրէք Ձեր դրութիւնը. այնուհետև տեսնենք, թէ ինչ ենք անում: Գնացէք խաղաղութեամբ (ձեռք է տալիս):

Մարտիրոս.

(*Ինքն իրան*) Հալբաթ Աստուած կ'ողորմի մեզ: (*Գլուխ է տալիս և դուրս է գնում*):

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Բժիշկ.

(*Կրդոված անցուդարձէ անում, մտքերի հետ կռուելով*):

Այս ինչ է նշանակում... Ես խուղղակի աւազակի, ըռնադատի դերի մէջ եմ գտնուում: Ինչով է ապրում իմ ընտանիքը. իմ աշխատանքով, թէ թշուառներից խլած հացով: Այդպէս ուրեմն գործնական կեանքը սպառնում է օդը ցնդեցնել իմ երազները, թաղել ինձ ևս ապականութեան տղմի մէջ, որպէս արդէն թաղել է իմ բոլոր ընկերներին: Քանի՞ տարի է, որ ես համալսարանը աւարտել եմ և ինչ ձգտումներով վերադարձել եմ հայրենիք: Բայց ի՞նչ եմ արել, ի՞նչ եմ անում և ի՞նչ կարող եմ անել այդ դրութեան մէջ: Այն ծերուկի պատկերը... սարսափելի՜ է... Եւ իմ կինը նրա հաշուին է պճնուում, զուգուում, զարդանում և մեծ-մեծ խօսում: Իսկ այն թշուառ երեխանե՞ը... Մայրը հիւանդ, հայրը՝ գերեզմանի դռանը... Յուսահատ ճնճղուկներ, որոնց հացի գնով ես երեխայ եմ մեծացնում և ուրիշներին ազնուութիւն եմ քարոզում: (*Յանկարծ սիրտ առնելով*) Ո՞չ, ես չեմ մնալ այդ ապականութեան մէջ... Ես դեռ իմ սրտի խորքում ապականած չեմ: Ես դուրս կը թռչեմ այդ խորխորատից (*ներս է մտնում Հեղինէն*):

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հեղինէ.

Գնա՞ց վերջապէս: Ո՞վ էր այդ շատախօսը: Ի՞նչ էր այդքան երկար խո-

սում։ Դու էլ որ ամեն մի սոված գիւղականի հետ գլուխ ես դնում։

Բժիշկ.

(Լուռ նայում է Հեղինէի վրա, մտքում խօսում է, բայց զսպելով իրան, ոչ մի խօսք չի ասում, միայն տխուր հայեացքով գլուխը Թեթև շարժում է։ Հեղինէն կամենում է փորձել նրա տրամադրութիւնը)։

Հեղինէ.

Գրիգոր, այսօր ախր քո տօնն է. բաս ինձ մի բան չես բախշելու։

Բժիշկ.

Ի՞նչ է հարկաւոր։

Հեղինէ.

Մի փոքր փող է հարկաւոր։

Բժիշկ.

Ի՞նչ պիտի անես։

Հեղինէ.

Շլեապա պիտի առնեմ նոր կաստիւմիս համար։

Բժիշկ.

Բայց քեզ բաւական շլեապաներ ունիս։

Հեղինէ.

Ոչ մէկը չի սազում նոր կաստիւմիս։

Բժիշկ.

Կարող ես սազացնել, եթէ ուզենաս։

Հեղինէ.

Ի՞նչ քո բանն է կնկայ գործերում խառնուելը։ Փող եմ ուզում — տուր էլի. ես խօմ օտար չեմ, քո կինն եմ։

Բժիշկ (զսպելով իրան)։

Որքա՞ն է հարկաւոր։

Հեղինէ.

Մի քսանուհինգ ռուբլի։

Բժիշկ.

Այդքան փող չկայ մօտս։

Հեղինէ.

Առաւօտ մի քսանուհինգանոց կար մօտդ, ի՞նչ արիր։

Բժիշկ.

Գործադրեցի մի անխուսափելի գործի համար։

Հեղինէ.

Գիտեմ, թէ քո անխուսափելի գործն ինչ կ՚լինի։ Ամենքի համար ձեռք բաց է, միայն կնոջդ համար ես սկուպոյ։ Ապառիկ կը վերցնեմ։ (Ուզում է գնալ)։

Բժիշկ (լուրջ)։

Սպասիր։

Հեղինէ.

Ի՞նչ ես ուզում. գործ ունեմ (կամենում է գնալ)։

Բժիշկ.

Սպասիր ասում եմ, խօսելիք ունեմ քեզ հետ։

Հեղինէ.

Քո խօսքերը վերջ չունի, ախ, Աստուած։

Բժիշկ.

Նստիր։

Հեղինէ.

Դէ, պրծիր. շտապում եմ։

Բժիշկ.

Ձեռս ուզում լսել։

Հեղինէ (բարձր).

Աստ՚ էլի... (նստում է)։

Բժիշկ.

Հեղինէ, հայրիկիդ այս օրերս տեսնո՞ւ ես։

Հեղինէ.

Տեսել եմ. ի՞նչ կայ որ։

Բժիշկ.

Ի՞նչ տեղեկութիւն ունես նրա գործերի մասին։

Հեղինէ.

Ոչինչ, ի՞նչ է պատահել։

Բժիշկ.

Ինչպէս են գնում նրա գործերը։

Հեղինէ.

Ես ի՞նչ գիտեմ. ինչպէս պիտի գնան։

Բժիշկ.

Վատ են գնում։

Հեղինէ.

Իմ ի՞նչ գործն է։

Բժիշկ.

Ճշմարիտ է, որ նա իրան սնանկ է յայտնում։

Հեղինէ.

Կարելի՞ է, մեր ինչ գործն է։

Բժիշկ.

Ուրեմն մենք պիտի այս տներից

դուրս գնանք, որովհետև այս տունը կարող է ծախուել։

Հեղինէ.

Ո՞վ է ասում։

Բժիշկ.

Չէ՞ որ նա կը պատկանի պալատատերերին։

Հեղինէ.

Բա՛ս, ինչպէս չէ. այս տունը իմն է իմը։

Բժիշկ (լսում է զանգահարութիւն)։

Ի՞նչ հիման վրա։

Հեղինէ.

Այն հիման վրա, որ ես պէրվոյ դիլդի կուպեց Նազարովի մինուճար աղջիկն եմ։ Աֆ... կուելուդ նիւթը պրծել է, չես իմանում ինչ անես։ (Ներս է մտնում Նազարովը)։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Նազարով (ուրախ)։

Գրիգոր Լուսաւորիչ... Աչքներդ լուս։ Հեղինէ, աչքդ լուս։ Աստուած տայ, վուր մարդ ու կնիկ ուփրո շատ սիրէք մէկմէկու, վունց որ ես ու իմ պառաւը (բարևում է ամենքին ու նստում)։

Բժիշկ.

Շնորհակալ ենք։ Համեցէք։ Հեղինէ, սուրճ բեր հայրիկիդ համա ը։

Նազարով.

Մի քիչ համբերի, հեր օխնած, ինչ ես շտապում. էս է Պաւէլն էլ կուգայ։ Միդի էինք, գնաց տուն, վուր Մանուշակին էլ բերի հետը։ Հեղինէ, դէգէն էստի չի՞, նա պիտի չուստ եկած ըլի։

Հեղինէ.

Այստեղ է (գնում է յատնելու)։

Նազարով.

Վո՛ւնց ես, վուրդի, գործերդ լա՛ւ են գնում.

Բժիշկ.

Շնորհակալ եմ, վատ չէ։

Նազարով.

Աստուած տայ, վուր ուփրո լաւ ըլին։ Ինչի՞ պիտի լաւ չէլի։ Էն թաւուր վախտ է, վուր դիփնից լաւ գօխտուրութիւնն է դուս գնում։ Առուտուրի-բանի մէջ խէր ու բէարաքէաթ չի մնացել։ Համա գօխտուրները օսկի ին կարում, էնդուր վուր մեր ժամանակներում մարդ չկայ, վուր հիւանդ չըլի։ Էն թավուր գօխտուր կայ, վուր տարէնը երկու հազար թումնին փուղ չի ասում։ Համա հաշիւն էլ մենծ բան է։ Գօխտուրն էլ պիտի իմանայ, թէ ում հետ գործ ունի, չաղ հիւանդին իսկի ձեռից բաց չպիտի թողնի, էնդուր վուր մի կաթնատու կով է...

Բժիշկ.

Յարգելի՛ տներ, այդ ինչե՞ր էք դաս տալիս ինձ, այն էլ լուսաւորչի տօնի՞ն։

Նազարով.

(Կեղծ ժպիտ)։ Դաս խօմ չեմ տալի, վո՛ւրդի... խօսում ենք էլի... Պիտի մի բան խօսենք, չէ՞։

Բժիշկ.

Այո՛, պիտի խօսենք։ Եւ ես շատ կարևոր նիւթ ունեմ, որը աւելորդ եմ համարում յետաձգել, որքան էլ ըստ երևոյթին անյարմար գտնէք Դուք այս օրուայ համար։ Ես կարծում եմ, որ հէնց այդպիսի տօների ազդեցութեան տակ մենք կարող ենք բարի գործեր գլուխ բերել, կամ չար գործերից զգուշանալ։

Նազարով.

Ասա՛ տեսնենք, խելօք բանին ո՞վ կօսէ վատ։

Բժիշկ.

Ճշմարիտ է, որ Դուք դադարեցնում էք Ձեր առուտրական գործերը։

Նազարով.

Ի՞նչ տրած, քանի որ էլ խէր ու բարաքեաթ չի՛ մնացել։

Բժիշկ.

Ուրեմն հաստատ որոշե՞լ էք։

Նազարով.

Բա՝ս ինչ անեմ։

Բժիշկ.

Ոչ մի ուրիշ ելք չէ՞ք կարող գտնել։

Նազարով.

Ինչի՞ չիմ կանա, Համա... (չգիտէ ինչ ասել)։

Բժիշկ.

Շատ լաւ. իսկ Ձեր պարտատէրերը...

Նազարով.

Վո՛ւրդի, ինչ քու գործն է առուտուրականի հաշիւների մէջ խառնուելը։ Օսկի փէշակ ունիս ձեռիդ, դուն քու գործը տուաջ տար։

Բժիշկ.

Բայց խնդրի մէջ մի նուրբ կէտ կայ, որի պատճառով ես սաիպլատ եմ խառնուել։ Արդեօք Դուք կարողանալու էք վճարել Ձեր պարտատէրերին իրանց հասնելիքը։

Նազարով.

Վ.ուրդանց պիտի վճարեմ։

Բժիշկ.

Գոնէ մի մասը...

Նազարով.

Ո՛նչ էլ մի կապէկ. խօմ իմ տունը չեմ քանդի նրանց համար։

Բժիշկ.

Դուք շինութիւններ ունէք, որոնց ծախելով կարող էք պարտատէրերին գոհացում տալ։

Նազարով.

Հէ՛շտ է ասելը. բաս իմ ծճախը ինչով պիտի ապրի։

Բժիշկ.

Նախ որ պարտքերը վճարելուց յետոյ Դուք դեռ բոլորովին անճար չէք մնալ։ Իսկ եթէ նոյն իսկ բանը ծայրայեղութեան հասնէր, ես յանձն կառնեմ պահպանել ձեզ, որպէս իմ ծնողներին։ Շատերը կարծում են, թէ ես փողի պատճառով եմ Ձեր աղջիկը առել. թող այդ զրպարտութիւնը այժմ հերքի։

Նազարով.

Խօսքերդ, վ.ուրդի, մի-մի օսկի է, աւետարանի կողքին կուլի գրել։ Համա կենքի մէջ ուրիշ բան է հարկաւոր։ Մարդ վուր քու ասածներու նման ապրի, ո՞ւր կը հասնի բանը... Է՛հ, քու ինչքդ է պէտք. Դուք ապրեցէք, վունց ուզում իք։ Մեր գործերը մենք գիտենք,

(Շողակաթը ներս գալով նստում է և ուշադրութեամբ ականջ է դնում։ Հեղինէն նոյնպէս, միայն պակաս ուշադրութեամբ)։

Բժիշկ.

Շատ բարի։ Այդ դէպքում ես խնդրում եմ Ձեզ՝ ընդ միշտ ազատել իմ կնոջ և երեխային բոլոր այն նուէրներից, որոնցով դուք յաճախ պատուում էք մեզ։ Իսկ երկրորդ, ես իսկոյն ընակարան կը վարձեմ և իմ ընտանիքով դուրս կը գնամ այս տնից, որը այլ ևս...

Հեղինէ.

Ինչքա՞ր ես խօսում, ո՞ւր պէտք է դուրս գնաս։ Այս տունը ո՞ւմն է որ...

Բժիշկ.

Զը գիտեմ թէ ումն է, բայց գիտեմ, որ նա ինձ չէ պատկանում։

Հեղինէ.

Բայց ինձ խօմ պատկանում է։

Բժիշկ.

Եթէ դու իմ կինն ես, նա քեզ էլ չէ պատկանում։

Շողակաթ.

Ի՞նչ է ասում, քա՛... Ա՛յ տղայ, խօմ չէս գժուի։ Իս քեզ խելօք և ուսումնական մարդ եմ գիտացել, թէ չէ ես քու ինչ-ինն էի աղջիկ տալիս։ Խելքդ գլուխդ հաւաքիր, երեխայ խօմ չես։

Բժիշկ.

(Տեղից վեր կենալով և վճռած անցուդարձ անելով)։

Խելօք և ուսումնական (դառն ժպիտ) ահա թէ ինչ... ինձ խելօք և ուսումնական մարդ են իմացել։ (Այդ միջոցին ներս է մտնում Պաւլը ու իւր կինը, և սովորական բարևներից ու շնորհաւորումներից յետոյ նստում են։ Հեղինէի կարգադրութեամբ սուրճը բերում են, որը ամենքը վերցնում են բացի Մանուշակից։ Սուրճը խմում են խօսակցութեան ժամանակ։ Շողակաթը նստելով Պաւլի կողքին, փսփսալով ծանօթացնում է սրան զորձի էութեան հետ)։

ՏԱՄՆՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ.

Նո՛ւ, պարոն Գրիգոր, աչքիս տխուր էք երևում, ի՞նչ կայ։

Բժիշկ.

Ես շատ ուրախ եմ, պարոն Պա՛ւլ, որ հէնց այդ ժամին բաղդ ունեմ ձեզ տեսնելու։

Շողակաթ.

Դրուստ է ասում, Պաւլ, դու էլ խօմ ուրիշ չես, մերն ես, դիփս էլ մի օջախի մարդիկ ենք։ Ի՞նչ ունինք մէկ-մէկուց թագցնելու։ Ինչքա՞ն չես փեսիդ խրատում, նա ջէր ջահիլ է, պարտաւոր է քո՛ւ խօսքը լսել։

Բժիշկ.

Այո՛, ինչո՞ւ չէ։ Ես ուրախութեամբ կը լսեմ ամեն մի ազնիւ խորհուրդ։

Պաւլ.

Ազնուութիւնը իւր տեղում, խելօքութիւնն էլ իւր տեղում։ Ազնուութիւնը վատ բան չէ։ Երբ մարդ ազնիւ գործեր է կատարում, տեսնում ես գովերիան մեծացաւ։ Իսկ գովերիան մեր ժամանակ մեծ նշանակութիւն ունի։ (Մանուշակը անբաւական է ամուսնոյ խօսքերից, բայց զսպելով իրան աչքերը քաշ է գցում) Հա՛, բայց ասէք տեսնենք, թէ ինչո՞ւմն է բանը։

Բժիշկ.

Օգնեցէք ինձ, պարոն Պաւլ, անեռոչս համոզելու։ Նա կամենում է վերջ տալ իւր գործերին։

Պաւլ.

Այդ բոլորը ինձ յայտնի է, բայց բանն ինչումն է։

Բժիշկ.

Ի՞նչ պէտք է անեն նրա խեղճ պարտատէրերը։

Պաւլ.

Ի՞նչ Ձեր գործն է։

Բժիշկ.

Յարգելի՜ բարեկամներ, ես մինչև օրս աշխատել եմ ինքս ինձ հաւատացնել, թէ վաճառականն էլ կարող է ազնիւ լինել, աշխատել եմ փայլուն կէտեր գտնել մամոնայի ասպարիզում, աշխատել եմ հերքել այն կարծիքը, թէ օտարների առաջ ազգի անունը խայտառակողը հայ վաճառականն է։ Իսկ այժմ մ'թթէ պիտի այդ կէտումն էլ ինձ յուսախաբուած տեսնեմ։ Վերջապէս ես չեմ կարող դիմանալ, որ իմ շուրջը տիրէ խարդախութիւնը, մանաւանդ որ այդ խարդախութիւնից կամայ թէ ակամայ պիտի օգուտ և իմ ընտանիքը։

Նազարով.

Խելօք գործ բռնելը օչոգի անպատուութիւն չի՛ բերում։

Հեղինէ.

Տեսնում ես, Գրի՛շա, ամենքն էլ մեր լաւն են ուզում։

Բժիշկ.

Եւ դո՛ւ... իմ կեանքի անբաժան ընկեր, իմ սրտի ղեկավարը... դո՛ւ էլ ես այդպէս համոզուած։ Ախ, որքա՛ն պարզամիտ եմ եղել ես։ Մ'թթէ ես այդպէս եմ երևակայել հայ կնոջը։ Ես հաւատացած եմ եղել, որ հայուհին փայլում է իւր ազնուութեամբ, հեզութեամբ, իւր մաքուր ու անխառն սիրով... Որպէ՞ս խաբուած եմ ես։ Մաքուր-կուսական սրբոտով սեղմել եմ ես հայուհուն իմ սրտին, երևակայելով թէ սրբութեան ծաղիկն եմ գրկում, բայց ահա իմ կրծքի վրա թունաւոր օձ եմ գտնում։ Ո՞ւր է այժմ... ո՞ւր է իմ փայփայած իդէալը, ո՞ւր է իմ պաշտած հայ կինը... (*Մանուշակը սաստիկ ցնցւում է, բայց աշխատում է զսպել իւր հոգեկան տանջանքը, միայն ակամայ մի կարեկցական հնչիւնով արտայատում է մրմունջը*)։

Պաւլ.

Լա՛ւ, եթէ Դուք անպատճառ կամենում էք խառնուել Ձեզ չը վերաբերող գործերի մէջ, ես կ'առաջարկեմ Ձեզ մի խելացի՜ ճանապարհ։ Եթէ Դուք խղճում էք նրա աղքատ պարտատէրերին, կարող էք Ձեր սեփական եկամուտներից փոքրառ փոքր վճարել նրանց, կամ թէ ապագայում մի անգամից կը հատուցանէք նրանց, ինչոր կը կարողանաք։

Հեղինէ.

Ի հարկէ։ Եթէ դու կարգին ուշ դարձնես քո գործին, ինչպէս միւս բժիշկներն են անում, ամեն բան կարգի կ'ընկնի, մենք էլ հարստութեան մէջ կը լողանք։

Ծողակար.

Դէ հիմի թող ասեն, թէ իմ աղջիկը փիս է խօսում։ Վա՛ւրդի, իմ աղջիկն էլ քու լաւն է ուզում։ Ախր ինչի՞ իս խելքդ տանիլ տալի։ Տեսնո՞ւմ ես, ա՛յ, Կէկէլի փեսէն, գօխտուր Պլոզովը, մինչի տասը մանէթ չը վի կալնէ, հիւանդին ձեռը չի դիփցնի։ Խալխն էլ ասում են. բաս վուր նա էդքան թանկ է վիկալնում վիզիտներիմէն, հալբաթ ուսումն էլ, վարպետութինն էլ աւել կուլի։

Բժիշկ.

Այո՛, դուք ամենքդ էլ գործնական փաստերով էք խօսում։ Դուք սովորցնում էք ինձ սակարգութիւն անել իմ խղճի հետ։ Ես պիտի այժմից կեղեքեմ աջ ու ձախ, ոտնակոխ անեմ իմ բոլոր բարոյական պարտաւորութիւնները, որպէս զի երբևէ միջոց ունենամ ազնիւ լինելու։ Գերեզմանի դուռը հասած թշուառները պիտի դեռ համբերեն, մինչև որ ես իմ անձնական բարորութիւնը կարգաւորեմ, մինչև որ իմ ֆանֆարոն կնոջ բոլոր քմահաճոյքներին բաւականութիւն տամ, ապա թէ այդ ողորմելիների առաջը մի քանի ուշացած կոպէկներ շպրտեմ՝ պատան ու դագաղ պատրաստելու համար։ Ա՜խ, դուք ի՞նչ գաղափար ունէք իմ մասին։ Հեղինէ, պատրաստի՛ր, մենք շուտով պիտի տեղափոխուենք այդ տնից, գուցէ և այդ քաղաքից։

Հեղինէ.

Ես իմ հօր տնից դուրս գնացողը չեմ, խելքից դուրս մտքերը մի կողմ թող։ Համալսարան ես աւարտել, դիպլոմ ունես, գոնէ դիպլոմիցդ ամաչի՛ր։

Բժիշկ (*բարկացած*)։

Դիպլոմիցս ամաչեմ... Այո՛, թէկուզ յանուն իմ դիպլոմի ես չեմ կարող այդ դիրքի մէջ մնալ։ Ի՞նչ էք կարծում... Տասնեակ տարիներ տանջուել եմ, ամենամեծ զրկանքներին դիմացել եմ լոյս և ճշմարտութիւն որոնելով։ Եւ այդ թղթի կտորը իմ յամառ աշխատութեան արդիւնքն է։ Վերջապէս ես ուխտել եմ հաւատարիմ լինել իմ դիպլոմին, չ'արատաւորել նրան, բարձր պահել համալսարանի, գիտութեան և ճշմարտութեան դրօշակը... Իսկ այսօր դուք ինչի՞ էք պահանջում ինձանից։ Վաշխառու՞ եմ

ես, կինոջ եմ ես, աւազակ եմ ես... (*Ամենքը անբաւական ցնցումներ անելով միմեանց են նայում: Մանուշակը աշխատում է անտարբեր երեւալ*):

Հեղինէ.

Մէկ մտածիր Ֆ... Երեխայ ունես, պիտի մեծացնես, կարգին ուսում պիտի տաս. փող է հարկաւոր:

Բժիշկ.

Այո, ես երեխայ ունեմ: Պիտի դաստիարակեմ նրան: Բայց ինչ սկզբունքներով: Այդ պատերը, առաստաղը և յատակը կը փսփսան իմ երեխաների ականջին, թէ Ձեր հայրիկը գող է, խաբեբայ է, թէ ճշմարտութիւնը ցնորք է, արդարութիւնը քամի է... Ո՜չ, ո՛չ, ես պիտի ազատեմ ինձ և իմ ընտանիքը այդ պատերից, որոնց խուլ բողոքը մինչև երկինք է հասնում:

Պաւլ.

Այդ խելքով դու բոլորովին մենակ կը մնաս աշխարհքում: Միայն դու ես այդպէս մտածում: Իսկի քո ընկերների մէջ էլ այդպիսի պարզամիտներ չկան: Խելքի՛ եկ, բարեկամ, թէ չէ բոլորովին մենակ կը մնաս:

Մանուշակ.

(*Համբերութիւնից դուրս գալով, կամաց ամուսնուն*):

Հերի՛ք է, ի սէր Աստուծոյ... Նա մենակ չէ և մենակ չի՛ մնալ: (*Այդ նկատողութիւնը լսում է Հեղինէն*): Գնանք. (*վեր է կենում*):

Պաւլ (*վեր կենալով*):

Դո՛ւ էլ նրա խելքի ես: (*Բարևում են և գնում*):

Նազարով.

Սաքի ես էլ գնամ էլի: (*Գնում է*):

Շողակաթ.

Վայ, Աստուծ, ինչ կրակի մէջ գցեցի իմ ճար ու ճրագ էրէխիս (*գնում է ամուսնուն ձանապարհ դրելու: Հեղինէն հետևում է նրանց*):

ՏԱՍՆՈՒՉՈՐՍԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Բժիշկ (*ինքն իրան*):

Ո՛չ մի արգելք չէ կարող փոխել իմ որոշումը: Բաւական է, որքան զիջեցի: Շարունակ զիջելով կարելի է խորխորատի յատակը հասնել: Ապարդի՛ւն է անցնում իմ կեանքը... Եւ մինչև ե՞րբ... Ո՛չ, ես դուրս կը գամ այդ տիղմի միջից և, եթէ անհրաժեշտ լինի քարուքանդ կանեմ ամեն բան: Թող չ'լինի տուն ու տեղ, ազգական, բարեկամ... Թող ես բոլորովին մենակ մնամ...

Եթէ կինս յամառի, նոյն իսկ մենակ դուրս կը գնամ (*ներս է գալիս Պաշան, Անահիտի ձեռքից բռնած*):

ՏԱՍՆՈՒՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաշա.

Не хочетъ играть. Все „папа" да „папа". Никого она не хочетъ кромѣ папы. (*Դառնալով դէպի Անահիտը*) Ну, вотъ твой папа! (*գնում է*):

Բժիշկ.

(*Մի բոպէ մոլորված կանգ է առնում, ապա գրկում է Անահիտին*): Ինչպէ՞ս դուրս կը գնամ... իսկ սրա՞ն... (*Ցնցուելով*) սա նրա՞ն է պատկանում... Մենակ պիտի մնամ... Սարսափելի է մենակութիւնը... (*Ցանկարծ մտաբերելով*), Բայց Մանուշակը գտնում է, որ ես մենակ չեմ... Օ՜, անբաղդ, անբաղդ, դո՛ւ էլ մենակ ես..... Մանուշակ, ինչո՞ւ սխալեցիր... ինչո՞ւ վռազեցիր... (*իբր պատասխան*) Իսկ ե՞ս... Ե՞ս ինչու այնպէս պարզամտութեամբ որոշեցի իմ վիճակը... (*Գլուխը դնում է երեխայի կրծքին*):



ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

ՏԵՍԱՐԱՆ.

Դահլիճ Պարի տանը: Եռերի պատի մեջտեղից դուռն դեպի պատշգամբ՝ դռնից աջ ու ձախ շուռամուտներ դեպի փողոց: Ձախ պատի վրա դուռը դեպի նախասենեակ, նոյն պատի վրա առջեւից դուռը դեպի ներքին սենեակները: Աջ պատի վրա դուռը դեպի առանձնասենեակ:



ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

(Մանուշակը նստած է բազկաթոռի վրա մի գրքոյկ ձեռին և անձայն կարդում է, միայն թէ երբեմն աւելի ընտիր կտորները կրկնում է ձայնով: Պաւլը նախասենեակի դռան մօտ խօսում է Սարգսի հետ):

Պաւլ.

Հասկացա՞ր, Սարգիս, հիմի գնա ու դու նրանց հասկացրու, որ մենք ջէր շատ խղճով ենք վարւում: Ամեն մի դուքնին աւելացնում ենք հարիւր մանէթ մենակ: Եանվարը էս է գալիս է, ով ուզում է, թող հիմիկուց ուսլովիա կապի և մի տրէտը տայ. ով չի ուզում, թող իր համար դուքան ման գայ: *(Մանուշակը լսում է և տխուր հայեացք գցելուց յետոյ շարունակում է կարդալ):* Հա՛, գլխաւորը չը մոռանաս. սապօժնիկ Մարտիրոսին ասա, որ կամ երեք օրւայ մէջ քրէհը բերի, կամ թէ չելթա-փելթան հաւաքի ու դուս գնայ: *(Մանուշակը ինչ որ կամենում է ասել, բայց զսպում է իրան):*

Սարգիս.

Աղա՛, նա ո՞րտեղից պիտի բերի. սոված զկռտում է:

Պաւլ *(փոքր բարձր):*

Ջանը դուս գայ, որտեղից ուզում է, թող բերի, թող պարտք վի կալնի:

Սարգիս.

Ո՞վ նրան պարտք կը տայ, խեղճ քամբաղդ մարդ է:

Պաւլ.

Իմ ի՞նչ գործն է: Թէ չի կարող քրէհը տալ, թող բաս դուս կորչի. ես մեղաւոր չեմ:

Սարգիս.

Լաւ. ոնց որ հրամայում էք, կանեմ *(դուրս է գնում):*

Մանուշակ *(դէպի դուռը գնալով):*

Պա՛ւլ, Պաւլ *(Պաւլը յետ է նայում)* Սարգիս, Սարգիս *(դառնալով դէպի Պաւլը)* Պա՛ւլ *(դժուարանում է խօսքը ասել):*

Պաւլ.

Ի՞նչ ես ուզում ասել:

Մանուշակ.

Պա՛ւլ, կանանց ընկերութիւնը ինձ

խնամակալ է նշանակել այդ ընտանիքի վրա։ Իսկ դու ընտանիքի հօրը նեղում ես . . .

Պաւլ.

Ի՞նչ կ'լինի։ Բարեգործութիւնը ուրիշ բան է, առուտուրը՝ ուրիշ։ Սարգիս, ի՞նչ ես կանգնել, գնա։ (Սարգիսը գնում է) Երբ ստորագրութիւն բացեն, տասն ռուբլի էլ ես կը ստորագրեմ։

Մանուշակ.

Ստորագրութիւնը ի՞նչ կարող է անել այն մի խումբ սոված ու տկլոր երեխաների համար։

Պաւլ.

Ի՞նչ գիտես, որ նրանք սոված ու տկլոր են։

Մանուշակ.

Գիտեմ, որովհետև երեկ անձամբ այցելեցի և ամեն ինչ աչքովս տեսայ։

Պաւլ (անբաւական)։

Մանեա, ինչո՞ւ ես քեզ ցածացնում։ Քեզ ի՞նչ կը վայելի մտնել այնպիսի տներ։

Մանուշակ.

Ինչո՞ւ չի վայելի, նրանք էլ մեզ նման մարդիկ չե՞ն։

Պաւլ.

Հերի՞ք է, ի սէր Աստուծոյ, այդ բժիշկ Մանուէլեանցի փիլիսոփայութիւններն են։ Խօմ այդ սարսաղին այնտեղ չը հանդիպեցի՞ր։

Մանուշակ.

Հանդիպեցի՞։

Պաւլ.

Ասում եմ ախր՝ կրկին թարմ մրքեր ես վերցրել։ (Նստելով) Այդ ի՞նչ գրքոյկ է դարձեալ (Թերթում է) «Մեր ինտելլիգենցիան։ (Կարդալով) Նիւթապաշտ, զուարճամոլ, զուրկ բարձր ձգտումներից»... Եւ ո՞վ է սրա հեղինակը (կարդալով գրքի երեսը) բժիշկ Մանուէլեանց (շպրտելով սեղանի վրա) Դօն-Քիշոտ... (յանկարծ սթափուելով) Որտեղի՞ց է այդ գրքոյկը։

Մանուշակ.

Գնե՞լ եմ։

Պաւլ.

Գնե՞լ ես, թէ նուէր ես ստացել։

Մանուշակ.

Գնել եմ։ Իսկ եթէ նուէր ստացած լինէի, ի՞նչ կայ որ։

Պաւլ.

Ոչի՞նչ։ Կարդացե՞լ ես։

Մանուշակ.

Երկրորդ անգամն եմ կարդում։

Պաւլ.

Հետաքրքի՞ր է։

Մանուշակ.

Վերին աստիճանի։

Պաւլ.

Հաւանո՞ւմ ես։

Մանուշակ.

Պարզ է, որ հաւանում եմ, որովհետև նոյն իմ զգացմունքներն է արտայայտում։

Պաւլ.

Երևի ձեր զգացմունքների մէջ ինչոր համերաշխութի՞ւն կայ։

Մանուշակ (անմեղ)։

Երևի թէ կայ։

Պաւլ.

Մի տեսակ հոգեկան առնչութի՞ւն։

Մանուշակ.

Գուցէ։

Պաւլ.

Մանիա... (ձայնը փոքր բարձրացնելով)։

Մանուշակ.

Ի՞նչ կայ։

Պաւլ.

Դու չափազանց շատ ես հաւանում նրան։

Մանուշակ.

Եւ ինչո՞ւ պիտի չը հաւանեմ։

Պաւլ.

Իսկ իւր կինը բոլորովին չէ հաւանում։

Մանուշակ.

Որովհետև չէ հասկանում նրան։

Պաւլ.

Իսկ դու հասկանո՞ւմ ես։

Մանուշակ.

Բաւականաչափ։

Պաւլ.

Աւելի քան քո ամուսնո՞ւն։

Մանուշակ (հառաչելով)։

Իմ ամուսնո՞ւն էլ հասկանում եմ։

Պաւլ.

Բայց նրան աւելի՞ ես համակրում։

Մանուշակ.

Ինչո՞ւ պիտի չը համակրեմ։

Պաւլ.

Որովհետև դու իմ կինն ես։

Մանուշակ.

Քո՞ կինն եմ... (դառն ժպիտ) Այդ դու գիտե՞ս...

Պաւլ.

Շատ լաւ գիտեմ։

Մանուշակ.

Եւ դու էլ իմ ամուսինն ես։

Պաւլ.

Ի՞նչ ասել կուզի։

Մանուշակ (ամօթխած)։

Միայն իմ ամուսինը...

Պաւլ.

(Չը գիտէ ինչ պատասխանէ և փորը ինչ շփոթում է)։

Մանուշակ (նկատելով նրա շփոթութիւնը)։

Թող այդ խօսակցութիւնը, Պաւլ, ուրիշ բան խօսէր։

Պաւլ (նորից սիրտ առնելով)։

Ո՛չ, ես չեմ սխալւում .. Մանիա, դու սառնասիրտ չես դէպի նա... Նա չափազանց շատ է դուր գալիս քեզ։

Մանուշակ (պարզ սրտով)։

Նա իմ հին ծանօթն է, իմ հին բարեկամն է. նա յիշեցնում է ինձ իմ երջանիկ օրերը...

Պաւլ.

Իսկ այժմ երջանիկ չե՞ս։

Մանուշակ.

Ո՛չ։

Պաւլ.

Ի՞նչ է պակասում քեզ։

Մանուշակ.

Ոչինչ և ամեն բան։ Ես չը գայ այն, ինչ որ սպասում էի։

Պաւլ.

Եւ այդ պատճառով պիտի քո ամուսնուն անհաւատարիմ լինես։

Մանուշակ.

Ես իմ ամուսնուն անհաւատարիմ չեմ։

Պաւլ.

Սիրո՞ւմ ես դու քո ամուսնուն։

Մանուշակ.

Սիրոյ մասին խօսելը ինձ այսուհետև չէ սազում։

Պաւլ.

Կինը պարտաւոր է միշտ սիրել իւր ամուսնուն։

Մանուշակ.

Իսկ ամուսի՞նը...

Պաւլ.

Ամուսինը պարտաւոր է պահել ու պաշտպանել իւր կնոջը։

Մանուշակ.

Այսինքն կերակրել ու հագցնել նրան։

Պաւլ.

Եւ էլ ուրիշ ի՞նչ է հարկաւոր։

Մանուշակ.

Ոչի՞նչ... Ախ, Պաւլ, բաւական չէ՞... Մի՞թէ միևնոյն հարցի մասին հազար անգամ չենք վիճել. բայց որ միմեանց չենք կարողանում համոզել։ Բաւական է։ Դու պահանջում ես, որ ես հաւատարիմ լինեմ քեզ, և ես հաւատարիմ եմ։

Պաւլ.

Իսկ քո սի՞րտը։

Մանուշակ.

Իսկ քո՞ սիրտը... Սրտի հարցը ինձ համար վաղուց փակւած է (լսելով Լեոնիկի ձայնը) Երեխան վեր է կացել (գնում է)։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ (անցուղարձ անելով)։

Զարժէ գլուխ դնել... Է՛հ, սէրը որն է, մի՞թէ սէրը գոյութիւն ունի։ Սէրը և սեռը մի՞թէ միևնոյն բանը չէ։ Հիւանդ հոգիներն են նրանց մէջ զանազանութիւն դնում։ Պատանիներին կարելի է խաբել սիրոյ անունով, իսկ առողջ ու հասուն տղամարդին ոչ թէ սէր, այլ սեռ է հարկաւոր։ Սե՞ռն է կեանքի ամենակարևոր տարրը, իսկ նրան առատութեամբ վայելելու համար դրամ է հարկաւոր, ուրիշ ոչինչ։ Դրա՞մ, դրա՞մ... Ա՛խ, քիչ էր մնում մոռանալի։ Չէ՞ որ պիտի այն անգլիացուն տեսնեմ։ (Ժամացոյցին նայելով) Ճիշտ ժամանակն է։ (Ձեռները տրորելով) Թէ գործը գլուխ կայ, մօտ լիսուն հազար բուբլի շահ ունեմ։ Ցերեկը դրամի եաւից, իսկ գիշերը... Ա՜յ Ձեզ խելացի կեանք... (Գնում է նախասենեակի դռնով)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Ծաղիկ.

(*Ներս մտնելով, սկսում է փոքր ինչ կարգի բերել սենեակը*):

Խաթուն մռուլթ ի։ Ասենք էն զմեն կեախ էտէնց մռուլթ ի, ամա շատ կեախ էնէնց կ'եղնի, կասես արցունք զինք կը խեղտի։ Ա՜խ, մաշտենք էդ էն ի՞նչ դարդ ի, որ էտէնց զէնոր սիրտ հալ ու մաշ կանի... Զիւր մէրն միտ կը բերի, թէ հիւանդ հօր համար դարդ կանի։ Հոգի ի, հոգի... Ամա Կարօ՞ խաթուն... պատանք կարեմ զէնոր։ (*Փողոցից լսում է սազի ձայնը. Ծաղիկը վազում է պատշգամը*) Արէ, արէ, իսկի մարդ չկայ, աղէն տան չի։ (*Մի րոպէից յետոյ Կարօն երևում է նախասենեակի դռանը*):

Կարօ.

Տեսա՞ր, Ծաղո, զիմ ասածը աղորդ ի։ Մեր գեղականից շատեր երթեր են դառել գեղ։ Ես քի կասի, որ զքո մէր չեն զարկէ...

Ծաղիկ (*ուրախ*):

Զիմ մէր չե՞ն զարկի։

Կարօ.

Հալիւոր կնիկ ի. զէնոր ինչէ՞ կը զարկին, քիւրդ խելք չունի՞։ Սաղ-սլամաթ ետ է դարձեր։ Ամա հալ չունի։ Փարա կա՞յ մօտ քի, Ծաղո, որ ճամփես։

Ծաղիկ.

Ո՞ւրտեղից, նո՛ր իմ բան գտէ։

Կարօ.

Ես լէ դիւս եկայ։ Մշակութենից բան դիւս չի կեայ, Ծաղ։ Կառնեմ գի սազ. կենամ քաղքեր աշղութիւն անելու, բալքիմ մի քանի փարա ձեռ բերեմ, մենք էլ օր արև տեսնենք։ Քէջ տեղ ինչպէս ի. բազի՞ խս։

Ծաղիկ.

Իմ Խաթուն լաւ ի։ Թէ դրանք դիւս չանեն, ես չիս միշտ կը կենամ։

Կարօ.

Եանի կը կենաս, չում իմ ձեռ մի բան կընկնի։ Ինորից յետոյ... Դէհ՝ Ծաղո ջան, մի նեղանա, կա՛ց բարի։

Ծաղիկ.

Գնաս բարի (*Կարօն կամենում է ձեռքի գցել Ծաղիկի վզովը, բայց սա չէ թոյլ տալիս*)։ Ամօթ է, ա՛յ տղայ։ (*Դռան ձայն լսելով*) Գնա՛, գնա՛, խաթուն կուգայ (*Կարօն ձեռք է տալիս ու գնում*):

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Մանուշակ (*ներս մտնելով*):

Այն ո՞վ էր, Ծաղիկ։

Ծաղիկ.

Իսկի։

Մանուշակ.

Ի՞նչ կայ թագցնելու։

Ծաղիկ (*ամօթխած*):

Կարօն էր։

Մանուշակ (*յանկարծ*):

Կանչէ՞ր այստեղ։

Ծաղիկ (*կամենալով գնալ*)

Ես կէ՞խ։

Մանուշակ.

Ո՛չ, ո՛չ, հարկաւոր չէ։ Ի՞նչ էիք խօսում, Ծաղիկ։

Ծաղիկ.

Խաբար էր բերի զի համար։

Մանուշակ.

Լա՞ւ խաբար է։

Ծաղիկ.

Մէրս սաղ ի։

Մանուշակ.

Մ՞թթէ. այդ խօ մի մեծ ուրախութիւն է։ Գրի՞ր գայ այստեղ։

Ծաղիկ.

Կեայ ի՞նչ անի։ Դու ասա՛ Ճամբան բացի, մենք լէ գնանք։ Մին էլ Կարօն դիւս է էկէ...

Մանուշակ.

Կարօն քեզ ազգակա՞ն է։

Ծաղիկ. (*ժպտալով*)

Ճանանչ ի։

Մանուշակ.

Ձի՞շտն ասա...

Ծաղիկ.

Խաթուն, մենք խիստ բէբախտ ինք։ Կարօն զիմ նշանածն ի, էտ. է էրկու տարի ի. կոտորածը զմեն բան քանդեց։

Մանուշակ.

Հա՞... ի՞նչ կայ որ. էլի բաղդաւոր կլինէք։ Դու հաւանո՞ւմ ես նրան։

Ծաղիկ.

Խաթուն, ես հէչ չըմ գիտնա, թէ ինչի աղջիկները մարդի կ'երթան։ Ամա

էնէնց լաւ սաղ կածի Կարօն, էնէնց խօրօտ ծլծլալէն կ'երգի որ ..

Մանուշակ.

Լաւ տղայ է Կարօն: Անբաղդ չէ՝ լինիլ, Ծաղիկ: (*Հառաչելով*): Գնա՛, տար Լեւոնիկին, փոքր ինչ մանացրու. հեռու չը գնա՛ք: (*Ծաղիկը գնում է*):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մանուշակ.

(*Տիրուր նստում է և գրքոյկը վերցնում: Փորը ինչ մտքում կարդում է:*)

Այո, նոյնն է... Նոյն մաքուր հայեացքը, նոյն հոգեկան բարձրութիւնը, նոյն գաղափարականութիւնը: Միայն աւելի՛ հաստատուն, աւելի՛ զօրեղ, աւելի՛ գիտակցական: Նա յիշեցնում է ինձ իմ երջանիկ անցեալը... Անցեալը, որը այլևս յետ չի գալ:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հռիփսիմէ.

Մանուշակ, կօսես էլի բան է պատահի քու ու մարդիդ մէջ, ձէններդ իմանում էի: Վո՛ւրդի, ախը ինչի՞ իս ամեն դարդակ բանի համա մարդուդ սիրտը կոտրում, էտէնց խօմ չի ըլի, վո՛ւրդի:

Մանուշակ.

Իսկ դո՛ւ, մայրիկ, ինչպէ՞ս ես վարվել քո մարդի հետ:

Հռիփսիմէ.

Ի՞ս... վայ իմ գլխին. խակի կարող էլ՞ ծպտուն հանել նրա առաջ: Ատածու կրակի կտոր էր, աղէն էլ նրան է քաշէ: Համա քու ասածներից մէկը իս իմ մարդուն ասէի, առանց ձէն հանելու կու մորթէր ինձ:

Մանուշակ.

Դու խակի հարցնում էիր, թէ քու մարդը ի՞նչ կեանք է անցկացնում տնից դուրս:

Հռիփսիմէ.

Ի՞նչ կինք պիտի անցկացնէր: Տնեմէն դուս նա առուտուր էր անում: Էն վուխտը վունչ կլուբ կար, վունչ ցերկ: Տղամարդիկ դիվունքը ցերեկը բազարումն էին անցկացնում, գիշերները դուքներում կողպում էին թէ չէ, էրէսները տան դռնին էին անում: Էնէնց էլ իմ մարդը

Մանուշակ.

Յետոյ նորից դուրս չէր գնում:

Հռիփսիմէ.

Ինչի՞ չէ: Գնում էր ժամ, ան աղջկան տեսուլթին իր գնում: Իս ի՞նչ գիտեմ, հազար ու մէ տեղ էր գնում: Համա ողորմած հոգին առաջուց մեզ տեղը ասում էր, վուր մէրաշ թէ հարկաւորուէր, մենք տեղը իմանալինք ու կանչէինք:

Մանուշակ.

Իսկ այժմ այդպէս չէ, մայրիկ: Այժմ Աստուած էլ չըգիտէ, թէ ուր են գնում...

Հռիփսիմէ.

Ի՞նչ անենք: Փառք Տիրոջը, դուն խօմ մենակ չես մնում: Նա իր համա է ուրախութիւն անում, դուն իլ քի համա արա:

Մանուշակ.

Բայց իմ ու նրա ուրախութեան մէջ սարեր կան ախը: Մայրիկ, քո մարդն էլ այդպիսի ուրախութիւններ արել է...

Հռիփսիմէ.

Վո՛ւյ, լսես դառնայ նրա հոգին. չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛... Էդ թաւուր բաներ մեր վախտը ադաթ չէր:

Մանուշակ.

Այո՛, մայրիկ, Դուք բաղտաւոր էք եղել: Իսկ այժմ...

Հռիփսիմէ.

Հիմի ադաթ է, վո՛ւրդի: Հիմի ամենքն էլ էգինց ին: Մինակ, քու մարդը խօմ չի, վուր միայար հետը կուռում իս: Քեզ նմանները շատ կան, համա ո՞վ է էգէնց կուրշին տալիս իրան մարդուն:

Մանուշակ.

Այնպիսիները չեն հասկանում ամուսնութեան նշանակութիւնը: Իսկ ես սկզբից ի՞նչ յոյսեր եմ ունեցել: Ախ, մայրիկ, դու չես կարող հասկանալ, թէ ինչպէս էի հասկանում ես ամուսնական կեանքը...

Հռիփսիմէ.

Հիմի ի՞նչդ է պակաս ախը: Մարդդ քէ համա փուղ իրան օրումը չի խնայում. շուրեր առնում է, թէկուզ դուն չուզենաս էլ, զարդարանքից խակի չի զրկում, համա դուն վուր չես սիրում զարդարուել, նա՞ է մեղաւոր: Քանի՞ ջէր է նա քեզ ասի. «Մանուշակ, քեզ լաւ պահի, ոչովից պակաս մի հագնուի, —իմ պատիւը, իմ անումը դրանք ին պահանջում: Վաճառական մարդի կնիկը-կօսէ-ինչքան լաւ զուկուի, էնքան մարդը դավիրիէն մինչ կունենայ...

Մանուշակ.

Ինչո՞ւ. ես դավերիայի միջոց եմ...

Գլուխ չես ընկնում, մայրիկ։ Դէ գոնէ ամենակարևորը հասկացիր։ Մայրիկ, Պաւլը ամուսնացել է մի անմեղ աղջկայ վրա, այնպէս չէ՞...

Հռիփսիմէ.

Վա՛յ քոռանամ, դրան ո՞վ կարա բան ասի։

Մանուշակ.

Իսկ ինքը մինչև ամուսնանալը շատ անմաքուր կեանք է վարել։ Ես ճարահատեալ ներել եմ։ Իսկ այժմ... Նա մաքո՞ւր է... Թող նա գոնէ այժմ լինի այնպէս, որպէս ձևանում էր նշանախաւութեան օրերում։ Ինչո՞ւ էր ինձ խաբում։ Մի խօսքով, մայրիկ, ես կամենում եմ, որ նա լինի ազնի՛ւ, բարի՛, մասնակցէ զանազան բարի գործերին թէ փողով և թէ գործով և ինձ էլ իւր հետ առաջ տանի։

Հռիփսիմէ.

Ի՞նչ է ասում, քա՛. էտ խօմ թամամ Էսէնի մարդը դառաւ... խեղճ երէխէս տանջւում է նրա ձեռքին։ Մեղք չե՞ս դուն...

Մանուշակ.

Այո՛, մայրիկ, այդ եմ ուզում ես։ Իսկ եթէ նրա այժմեան յատկութիւններից մինը-միայն նկատած լինէի ես պսակից առաջ, թէկուզ միլիոններ ունենար, ես չէի գալ նրան (խիստ յուզելուց Թուլանում է և նստելով բազմոցի վրա, տրորում է սրտի կողմը։ Նախասենեակում լսւում է Պաւլի ձայնը)։

Հռիփսիմէ.

Արունդ մի՛ պխտորի, վո՛ւրդի, ամեն բան անց կու կենայ։ Էրէխայ է ջէր, դիվ խօմ էլէնց չի՞ մնայ (գնում է)։

(Մանուշակը վիատած նայում է նրա ետևից։ Ներս է մտնում Պաւլը)։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ (ուրախ)

Նու, Մանիա, լսիր թէ ինչ եմ ասում, շտապում եմ, գործ ունեմ։ Երեկոյեան ինձ մօտ պիտի մի քանի հիւրեր գան։ Փոքր ինչ պատրաստութիւն տեսէք։ Խաղաթուղթը, ի հարկէ պակաս չլինի։ Դու էլ որքան կարելի է լա՛ւ հագնւիր և պատրաստ կաց՝ հիւրերին ընդունելու։

Մանուշակ (մեղմ)

Իսկ ես երէկ ի՞նչ խնդրեցի։

Պաւլ (կէս հարցական)

Մոռացել եմ։

Մանուշակ.

Չ՚ասացի՞, որ այսօր երեկոյեան կայանալու է կանանց ընկերութեան ընդհանուր ժողովը, որին ես պիտի անպայման ներկայ լինեմ, իբր վարչութեան անդամ։

Պաւլ.

Մէկը կը բռնի քո տեղը։ Քեզ չեն մեղադրիլ. ոռճիկ են տալիս—ի՞նչ է։ Ես էլ դումայում ձայնաւոր եմ, բայց միայն այն դէպքումն եմ գնում, երբ որևէ բարեկամ մարդու շահը պահանջում է։

Մանուշակ.

Ես էլ այս անգամ, ի միջի այլոց, մի բացառիկ պատճառ ունեմ։ Կոշկակար Մարտիրոսի ընտանիքի մասին խօսք է լինելու։ Ես պիտի ընկերութեան առանձին ուշադրութիւնը հրաւիրեմ։ Չէ՞ կարելի, որ հիւրերը վաղը շնորհ բերեն։

Պաւլ.

Առուտուրի բանը դու չես հասկանում. երկաթը պէտք է տաք-տաք ծեծել։ Ախմախի մէկի խելքին քամի է փչել. կամենում է գործարանը ծախել։ Ես էլ մի անգլիացի գնող եմ ճանկել, որը նրանից էլ ախմախ է։ Եթէ գործը ձգձգւի, երկուսն էլ կարող են խելքի գալ։

Մանուշակ.

(Ինքն իրան) Ա՜խ, ի՞նչ հացով ենք ապրում։ (Ամուսնուն) Թող գան ուրեմն, ամեն բան պատրաստ կ՚լինի։ Իսկ իմ ներկայութիւնը ի՞նչ նշանակութիւն ունի։

Պաւլ.

Ախ, Մանիա, հերի՞ք է... Ես լաւ գիտեմ, թէ ինչ նշանակութիւն ունի։ Հարցի կարևոր մասը այս գիշեր պիտի լուծւի։ Իսկ քո ներկայութիւնը, քո մի մեղմ ժպիտն անգամ նշանակութիւն ունի... Յիսուն հազար բուբլին կատակ չէ՞...

Մանուշակ.

Ի՞նչ... Դու կամենում ես իմ մեղմ ժպիտը անգամ շահագործել։ Ես ո՛չ մի դէպքում չեմ ներկայանալ, եթէ նոյն իսկ ժողով գնալու չլինեմ։

Պաւլ.

Դագարկ մի՛ խօսիլ, Մանիա, կեանքի մէջ մարդ պէտք է մի փոքր զիջող լինի։ Քեզանից ի՞նչ է պակասում։ Դու նախ և առաջ պիտի քո ամուսնոյ գործերի մասին հոգաս. հասարակութիւնը առանց քեզ էլ գործիչներ շատ ունի։ Ինչպէս ասացի—կանես, ես շտապում եմ (գնում է)։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մանուշակ (*յուսահատ*)

Ա՜խ, ի՞նչ բաղդի եմ արժանացել ես... Ինչո՞վ մխիթարւեմ... բարի գործե՞ր կատարեմ... Ո՞ր գումարից... Այն աշխատանքի՞ց, որ ըղխում է արատաւոր աղբիւրներից... Այս ի՞նչ կեանք է... Ինձ նախանձում են ամենքը, որ ես հարստութեան մէջ լողում եմ... Չե՞մ ուզում այդ հարստութիւնը, չե՞մ ուզում այդպիսի երջանկութիւնը... Ցեա՜ ա՜ւէ՛ք իմ անցեալը, այն փոքրիկ պարտէզը, անշուք սրահը, այն փոքրիկ ծառը, որին ես հաւատում էի իմ երիտասարդական երազները (*Դեղձանիկը երգում է: Մանուշակը նայում է նրա վրա, ապա գլուխը սեղանին դնելով, լուռ արցունք է թափում: Ներս է մտնում Միքայէլը*):

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Միքայէլ.

Մանուշակ, դարձեալ ի՞նչ է պատահել (*Մանուշակը աշխատում է հանգիստ լինել*):

Մանուշակ.

Ոչի՜նչ. Միքա՛յէլ, ո՞րտեղից ես գալիս:

Միքայէլ.

Ես երեխա՛յ եմ—ի՞նչ է... Գոյնդ վրադ չէ, աչքերդ կարմրել են:

Մանուշակ.

Մի փոքր տկար եմ: Հայրիկը ի՞նչ պէս է:

Միքայէլ.

Անհանգիստ է քո պատճառով: Բայց դու ո՞ւր ես, որ չես երևում: Հայրիկը պատուիրել է, որ քեզ այսօր տանեմ:

Մանուշակ.

Այսօր չեմ կարող, Միքայէլ:

Միքայէլ.

Ինչո՞ւ:

Մանուշակ.

Ասացի, որ մի փոքր տկար եմ: Մէկ էլ որ գործ ունեմ:

Միքայէլ.

Դարձեալ տկար... Բայց մինչև ե՞րբ պիտի դու տկար մնաս: Տեսնում ես քո բժիշկները չեն կարողանում քեզ օգնել: Այս անգամ էլ իմ խօսքը լսի՛ր: Թող մի անգամ էլ իմ բարեկամը խնամէ քեզ:

Մանուշակ.

Մանուէլեանը:

Միքայէլ.

Իհարկ է: Նա կը վերաբերուի դէպի քեզ առանձին խնամքով և ուշադրութեամբ: Գիտես, քո՛յրիկ, նա քեզ շատ է համակրում: Այսօր ինձանից իմացաւ, որ դու յաճախ տկարանում ես, և այնպէս մռայլւեց, կարծես խօսքը վերաբերում էր հարազատ քրոջը: Այս բոպէին ինձ հետ էր. ես կը հասնեմ նրա ետեւից (*ուզում է գնալ*):

Մանուշակ (*անհանգիստ*)

Միքա՛յէլ:

Միքայէլ.

Ի՞նչ է:

Մանուշակ.

Ես ինձ լաւ եմ զգում, թող մնայ:

Միքայէլ.

Աւելի՞ լաւ. ուրեմն մի փոքր կը խօսակցենք (*ուզում է գնալ*):

Մանուշակ.

Սպասի՛ր, մի ուրի՛շ անգամ:

Միքայէլ.

Ինչո՞ւ ոչ այսօր: Նա վաղուց ցանկանում է այցելել քեզ: Հէնց այսօր յարմար դէպք է:

Մանուշակ.

Ի՞նքն է ցանկանում:

Միքայէլ.

Այո: Ես իսկոյն կը բերեմ (*շտապով դուրս է գնում նախասենեակի դռնից*):

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մանուշակ.

Միքա՛յէլ... Ա՛խ, Աստուա՛ծ: (*Պատշգամբի դռնից նայելով*) Գնա՞ց (*դուռը ծածկելով յետ է դալիս*) Սակայն թող գայ... Ես կամենում եմ հանդիպել նրան, որովհետև նրա անկեղծ դատողութիւնները կարծես վերափոխում են ինձ մի բոլորովին ուրիշ աշխարհ, դէպի այն աշխարհը, որը կորած է ինձ համար անդառնալի կերպով: Զարմանալի է. նրա սիրտը նոյն պատանեկական թարմ սիրտն է: Մի ինչ որ բան կայ նրա հոգոյ մէջ, որ փոփոխութեան չէ ենթարկւում (*մի տեսակ նեարդային սարսուռ զգալով նայում է պատշգամբից և յետ դալիս*) Նա՛ է... Ա՛խ...

ՏԱՍՆՈՒՄԻԿԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

(*Սովորական բարևներից յետոյ*)

Բժիշկ.

Ձեր եղբայրը գանգատւում է,

թէ Դուք երբեմն տկար էք զգում Ձեզ։

Մանուշակ.

Այո՛, երբեմն։

Բժիշկ.

Ինչո՞վ է արտայայտւում Ձեր տկարութիւնը։

Մանուշակ.

Երբեմն գլուխս պտոյտ է գալիս, աչքերս մթնելու պէս են լինում, մի փոքր գլուխս ցաւում է և էլի շուտով անցնում է։

Բժիշկ.

Իսկ սրտի թրթռալ կամ շնչասպառութիւն չէ՞ք նկատում։

Մանուշակ.

Ինչպէ՞ս չէ. երկուսն էլ պատահում է։

Բժիշկ.

Կրծքի ցաւ չէ՞ք զգում։

Մանուշակ.

(Ցոյց տալով ձախ կողմը) Մի փոքր այստեղ ցաւում է երբեմն։

Միքայէլ.

Ինձ մի բոպէ ներողութիւն արէք (գնում է դէպի միւս սենեակ)։

Մանուշակ.

Միքայէլը մեծացնում է բանը. ես այնքան ծանր հիւանդ չեմ։

Բժիշկ.

Իհարկէ։ Թոյլ կտանք մի փոքր Ձեր սրտից...

Մանուշակ (դժուարանալով).

Ինչո՞ւ չէ. (Բժիշկը բոպէապէս ականջ է դնում Մանուշակի սրտից։ Մանուշակն անհանգիստ է, բայց աշխատում է դոպել իրան)։

Բժիշկ.

Ոչինչ չկայ։ Բայց Ձեզ հանգստութիւն է հարկաւոր։ Պէտք է միշտ ուրախ պահէք Ձեզ, չը վրդովւէք, չը բարկանաք, հոգս չանէք...

Մանուշակ.

Դժւար է... Միքայէլը ո՞ւր գնաց...

Միքայէլ (ներս մտնելով)։

Այստեղ եմ։ Պարոն Մանուէլեանց, ի՞նչ կարծիք կազմեցիք։

Բժիշկ.

Առանձին լուրջ բան չ'կայ։ Նեղ դայնութիւն, կամ մի փոքր սրտի յոգնածութիւն—ուրիշ ոչինչ։ Պէտք է պաշտպանել իրան և ամեն բան կ'անցնի։

Միքայէլ.

Նեարդայնութի՞ւն..., որը երևի յառաջ է գալիս հոգեկան պատճառներից։

Բժիշկ.

Հաւանօրէն, բայց որի դէմ բժիշկները անզօր են իրանց դեղերով։ Կամ թէ սրա համար բոլորովին ուրիշ տեսակ բժիշկներ են հարկաւոր, հոգեկան մխիթարիչներ կամ սրա նման մի բան։

Միքայէլ.

Եւ այդպիսի մի բժիշկ, գոնէ Ձեր բարեկամի քրոջ համար, ես Ձեզ եմ համարում։ Չէ՞ որ ես պիտի շուտով գնամ... Ձեր բարեկամութիւնը անհրաժեշտ է Մանուշակին։

Մանուշակ.

Միքայէլ, դու շատ ես նեղութիւն պատճառում պարոն բժիշկին։

Բժիշկ.

Ո՛չ, տիկին, ես բոլորովին չեմ նեղանում և երբէք խոյս չեմ տալ Ձեզ օգնելուց։ Առ այժմ դեղեր նշանակելու կարիք չեմ տեսնում։ Աշխատեցէք՝ շատ չը նստել տանը, օգտւեցէք լաւ եղանակներից. բնութիւնը ամենալաւ բժիշկն է։ Ց'տեսութիւն առայժմ, շտապով գնալու տեղ ունեմ։ Ցոյս ունեմ, որ դարձեալ կը տեսնուենք։ (Միքայէլը առաջնորդում է բժշկին)։

(Ներս է մտնում Պաւլը ներքին սենեակների կողմից)։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ (մի փորր անցուդարձ անելուց յետոյ)։

Այդ ի՞նչ է նշանակում, Մանիա... Դու առաւօտ ոչինչ չ'ասացիր։

Մանուշակ.

Ի՞նչ պիտի ասէի։

Պաւլ.

Եթէ քեզ այսօր բժիշկ էր հարկաւոր, մթթէ աշխարհքում էլ բժիշկ չ'կար։

Մանուշակ.

Էլ դադարկ բանից բան մի՛ շինիլ։ Միքայէլն է հրաւիրել նրան իւր ազատ կամքով. ես դժւարութեամբ համաձայնեցի։

Պաւլ.

Միքայէլը կարող է իւր կամքին ազատութիւն տալ ուր կամենում է, միայն ոչ իմ տանը։ Նրա ի՞նչ գործն է, իմ կինը հիւանդ է թէ առողջ։

Պաւլ.

Եւ իրաւունք ունեմ։

Մանուշակ.

Հա՜... Այդ է վերջ ի վերջոյ իմ անսահման համբերութեան վարձը։

Միքայէլ (*զայրանալով*).

Դուք կամենում էք Ձեր սեփական յանցանքը Ձեր անարատ կնոջ գլխին փաթաթել. լաւ է, խիստ խելացի է... (*Բարձր*) Մանուշակ, դու անպատճառ պիտի գաս ինձ հետ, թէ չէ այս բոպէին քեզ էլ կըսպանեմ, ինձ էլ։

Մանուշակ.

Իսկ երեխան...

Պաւլ.

Գնացէք, ուր կամենում էք, երեխան անտէր չէ։

Միքայէլ.

Երեխային ես կը բերեմ։ Դուրս եկ, կառք նստիր։ (*Մանուշակը տատանելով դուրս է գնում։ Պաւլը կամենում է յետքից դուրս գալ։ Միքայէլը դուռը կտրում է և սուրը կիսով չափ դուրս է հանում ասելով*) Ձը համարձակուէք... (*Պաւլը յետ է կանգնում, Միքայէլը սուրը տեղադրելով դուրս է գնում*)։

ՏԱՍՆՈՒԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ.

(*Սկզբում փոքր ինչ շւարած է, բայց շուտով տիրապետում է իրան*)։

Դարձեալ ինքն իւր ոտով յետ կը գայ, առաջին անգամը խօ չէ։ Чортъ его знаетъ! Կամենում են նորից դաստիարակել ինձ, կարծես թէ ես երեխայ եմ։ Ո՛չ, ես շատ լաւ եմ հասկանում, թէ ինչպէս պիտի անցկացնեմ իմ կեանքը։ Բարոյականութիւն, սրբութիւն... դադարկ խօսքեր, որ շարունակ գոռում են միջոցներից զուրկ երիտասարդները։ Հէնց նոյն իսկ աշխարհքի կատարելագործութեան համար մարդ պիտի չի զսպէ իրան։ Ա՜հ... իմ մէջ նոյնպէս եռում է ոյժը, զօրութիւնը... Իմ օրգանիզմը նոյնպէս արտայայտութիւն է պահանջում, գործ է պահանջում, միայն թէ մի ուրիշ տեսակ գործ... Ես գեղեցկութեան գերի եմ և պաշտում եմ գեղեցկութեան ներկայացուցիչներին. մթթէ այդ յանցանք է։ Ես ինչ մեղաւոր եմ, եթէ հայ կինը գեղեցիկ չէ, չէ գրաւում ինձ։ Իսկ օրինակ պոյլկան, ֆրանցուժենկան, նէմկան... Чортъ знаетъ, իւրաքանչիւրը մի տեսակ գեղեցկութիւն ունի... Ախ այդ շիկահեր պոյլկան... Վաղը երեկոյ կլուբում կը հանդիպենք։



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.
Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

Անխիղճը շատ թանկ է նստեցնում։ Վնաս չունի՞... Գործարանի բանը գլուխ է գալիս։ Իսկ հայ կինը... Նա մի տեսակ տափակ բնաւորութիւն ունի։ Հայ կնոջ աւելի սաղ է գալիս տանը նստել, մանաւանդ որ այդ անհրաժեշտ է մի պատուաւոր մարդու անուան համար։ Դուրսը ինչ ուզում ես արա... Բայց տանը պատուաւոր կին ունենալը անհրաժեշտ է. Это въ порядкѣ вещей. (*Յանկարծ սթափելով*) Բայց Լեւոնիկը... ուր մնաց... Ծաղի՛կ, Ծաղի՛կ... (*Ներս է վազում Ծաղիկը։ Պաւլը նայելով նրան*) Այնուամենայնիւ հայ կինն էլ գեղեցիկ է, մանաւանդ երբ նա դեռ... (*Պ ա տ կ ե ր. Ծաղիկը կանգնած է լուռ և անշարժ, Պաւլը նայում է նրա աչքերին, առանց մի բառ արտասանելու*)։

ՏԱՍՆՈՒՉՈՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ.

Ծաղի՛կ, Լեւոնիկը ո՞ւր է։

Ծաղիկ.

Միքայելի ու խաթունի հետ նստան ֆայտոն գնացին։

Պաւլ (*ինքն իրան*).

Անպիտանը որքան սիրուն է... Օրէցօր գեղեցկանում է... Ծաղի՛կ։

Ծաղիկ.

Ի՞նչ է որ։

Պաւլ.

Տիկինը գնա՞ց։

Ծաղիկ.

Ես լէ գնամ։

Պաւլ.

Ո՜չ, կարիք չ'կայ... Դու մնացիր տանը։ Ծաղի՛կ...

Ծաղիկ (*փոքր զարմացած*)

Ինչ կը հրամայէք։

Պաւլ (*շփելով նրա մազերը*)։

Ի՞նչ լաւ մազեր ունես։

Ծաղիկ (*վախեցած, կամենում է գնալ*)։

Ի՞նչն է լաւ։

Պաւլ (*ձեռքից բռնելով*).

Ի՞նչ գեղեցիկ աչեր ունես։

Ծաղիկ (*շարելով*).

Թող գնամ բանիս։

Պաւլ.

Այդ ապարդիւն է։ (*Բաց է թողնում ձեռքը*) Ծաղի՛կ, դու ո՞րտեղացի ես։

Ծաղիկ (*միամտանալով*)։

Մուշի դաշտիցն եմ։

Պաւլ.

Լաւ, մթթէ այնտեղ ծնողներ բան չունես։

Ծաղիկ.

Մենակ մէրս ի մնացի... էն էլ...

Պաւլ.

Հիմի ինչով է ապրում նա։

Ծաղիկ.

Ի՞նչ ապրի, մեռնի լաւ ի քանց էն ումը...

Պաւլ.

Ինչու՞ դու փող չես ուղարկում նրան։

Ծաղիկ.

Ո՞րտեղից ճամփեմ։

Պաւլ.

Խեղճ Ծաղիկ։ (*Հանելով փողամանը*) Տեսնում ես այդ ոսկիները։

Ծաղիկ (*հառաչելով*).

Ի՞նչ խէր, աղա։

Պաւլ (*մի քանիսը վայր գցելով սեղանի վրա*)։

Ուզարկիր այդ ոսկիները պառաւին։

Ծաղիկ.

(*Ժպտալով*) Հանա՞ք կանէ՞ք։

Պաւլ.

Ո՛չ, լուրջ եմ ասում, վերցրու։

Ծաղիկ (*վերցնելով կամենում է Թաշկինակի ծայրում կապել*).

Ի՞նչ լաւ աղա ունեմ. շնորհակալ եմ։

(*Մինչդեռ Ծաղիկը փողը տեղակում է, Պաւլը կողպում է դռները աննկատելի կերպով*)։

Պաւլ (*բռնելով նրա ձեռքից*)։

Ծաղի՛կ...

Ծաղիկ (*վախեցած*).

Շնորհակա՛լ եմ, աղա՛... Թողէ՛ք գը-նամ բանիս։

Պաւլ (*ձեռները Ծաղիկի մէջքին փաթաթելով*).

Որքա՜ն սիրուն ես դու, Ծաղիկ... Ես սիրում եմ քեզ...



ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ։

(ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ)

ՏԵՍԱՐԱՆ

Քաղաքային այգի. հրապարակ ամառային ժողովարանի առաջ։ Երկինքը պայծառ է։ Արեւը մայր է մտնում, իսկ լուսինը հեսգիհեսէ աւելի պայծառ է։ Ամառը ամբողջ ամբողջովին անցնում է։ Տեղուանում է։ Գործողութեան ընթացքում արեւը բոլորովին անցնում է։ Տեղ-տեղ սկսում է երեւալ ճրագներ։ Աստղերը հեսգիհեսէ աւելանում են։



ԱՌԱՋԻՆ ԵՐԵԻՈՅԹ.

Ռժիշկ (*նայելով դէպի հորիզոն*):

Լոյս, լոյս... Ամեն տեղ փայլ, ճառագայթ... ինչ կը ներկայացնէր տիեզերքը, եթէ լոյս չլինէր։ Իսկ ինչ է մարդկային կեանքը. մի ճառագայթ։ Կեանքը կեանք է, երբ նա թափանցւած է ջերմութեամբ ու լուսով։ Ուր պակասում են այդ ստեղծագործական տարրերը, այնտեղ մեռելութիւն է տիրում։ Կեանքը ինքն ըստ ինքեան գեղեցիկ է, մի անզուգական պարգև է մարդու համար, միայն թէ... Երջանիկ է միայն այն մարդը, որը մենակ չէ... Անտանելի է մենակութիւնը... մահը աւելի լաւ է... (*բեմի խորքում ձախ կողմից յայտնւում է Մանուշակը Լեօնիի հետ միասին: Մանուշակը նկատելով բժշկին կառն հայեացքով բարեւում է և անցնում*)։ Ա՜հա և ջերմութիւնը, և լոյսը, և գեղեցկութիւնը... բայց աւա՜ղ... Ա՜խ, նա խոյս է տալիս ինձանից։ Ինչո՞ւ... Միթէ նա էլ չէ հասկանում ինձ... Ուրեմն ես միանգամայն մենակ եմ... Ինչո՞ւ եմ ապրում ես... Ո՞ւմ կարող եմ ես օգտակար լինել, քանի որ ոչ ոք չէ հասկանում ինձ... (*մտքի գնալով*) Ո՞ւր են այն օրերը, երբ ես շրջապատւած էի ընկերներով, գաղափարակից և համակրող երիտասարդներով։ Այո՛, նրանք համակրում էին ինձ, սիրում էին ինձ... այն անուս պատանիները, այն տարաբաղդ արհեստաւորները... (*ձախ կողմից յայտնւում է Յակոբը, որը յանկարծակի նկատելով բժշկին, ուրախանում է*)։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Յակոբ.

Ա՜, բարև Ձեզ, պարոն Մանուէլեան, Ձե՜զ էլ արդեօք տեսնել կլինի... Անցա՛ն ժամանակները... Ծերացա՛նք-գնացի՛նք...

Բժիշկ.

Դու ծերանող չես, Յակոբ. դու խակի չես փոխւում։

Յակոբ.

Այո՛, ես ոչ ծերանում եմ, ոչ էլ փոխւում։ Ի՞նչ կայ ինձանում փոխւելու, ուսում չունեմ, փող չունեմ, գիպլոմ չունեմ, կին չունեմ, երեխայ չունեմ...

Փափախս ծուռ դրած ման եմ գալիս։ Ինքս իմ գլուխս պահում եմ, ոչ ոքի նեղութիւն չեմ տալիս, ոչոքի չեմ խաբում, ոչ ոք էլ ինձ չէ կարող խաբել։ Երբ փողս պրծնում է, գնում եմ գործարան, մի քանի շաբաթ մուրճ եմ խփում և մի քսան երեսուն մանէթ ձեռք եմ բերում։ Յետոյ էլի պրագզնիկ եմ անում, ման եմ գալիս, գիրք եմ կարդում... Ուսումնականից բան եմ սովորում, իսկ եթէ հանդիպում եմ մէկին, որը ինձանից էլ ախմախ է լինում, պրոֆեսորութիւն եմ անում նրա համար։ Իմ պատմութիւնս պրծաւ, հիմայ Ձերը ասէք։ Ես է՛լ պապանձւեցի։

Բժիշկ (*Թարմանալով*)։

Նոյն Յակոբը, մի մազ անգամ չէ փոխուել... Երանի՛ քեզ, Յակոբ։

Յակոբ.

Ուզում ես ասել, թէ Յակոբ-ջահիլը յիմա՞ր է, բան չէ՞ հասկանում... Աստ, ինչ ուզում ես, բայց ես դեռ քեզ հետ կռիւ ունեմ հա՛... յարմար ժամանակի եմ սպասում։

Բժիշկ.

Կռի՞ւ... ի՞նչ պատճառով։

Յակոբ (*Ծիծաղելով*)։

Միտդ է՞ ձեռնափայտը։

Բժիշկ.

Ի՞նչ ձեռնափայտ։

Յակոբ.

Հա՛-հա՛-հա՛-հա՛... (*Ծիծաղ*)։ Մոռացել ե՞ս... Ի հարկէ կը մոռանաս։

Բժիշկ.

Ոչինչ չեմ յիշում։

Յակոբ.

Դէ՛հ, ականջդ ինձ բախշիր։ (*Կոկորդը մաքրելով և իրան լուրջ կերպարանք տալով։ Շարադրական ոճով*) Ամառային մի պայծառ երեկոյ էր, մեղմ զեփիւռը փչում էր, ծովը սաստիկ ալեկոծում էր... Ձեր աբև, եթէ ուսում առած լինէի՛, երևելի վիպասան կը դառնայի։ Բաֆֆին ի՞նչ կարող էր ինձ հետ ոտք ձգել։

Բժիշկ.

Բայց Բաֆֆին կը հասկանար, որ մեղմ զեփիւռը և ծովի սաստիկ ալեկոծութիւնը միմեանց հակասում են։

Յակոբ.

Ո՛չ, չէ՞ն հակասում, պարոն փիլիսոփայ։ Ապա դեռ լսի՛ր։ Մեղմ զեփիւռը փչում էր և այգու ծառերը հազիւ-հազ շշնչում էին։ Բայց մեր երիտասարդ փիլիսոփայի սիրտն ու հոգին ալեկոծում

էին... Մեր Դոն-Ֆիշոտի (*Ներողութիւն արա, ընկեր ենք*) ոգևորութեան չափ ու սահմանը անցել էր և նա ճառում էր. մարգկային բարեփոխուած կեանք, պարզ, բնական ազնիւ յարաբերութիւն, եռանդ, հերոսութիւն... ոգևորւում էր ինքն իրան իմ յարգելի բարեկամը և քնքոյշ ու շքեղ ձեռնափայտը արագութեամբ պտըտեցնում։ Էլի չես յիշում։

Բժիշկ.

Շատ մութն կերպով։

Յակոբ.

Իսկոյն ճրագ բերեմ։ Զահիլ-Յակոբը, որի գլուխը քիչ տաքացած էր, խլեց փիլիսոփայի ձեռքից քնքոյշ ձեռնափայտը և ասաց. այդպիսի իդէալներով ոգևորուողին սաղ չի գալիս դամսկի կավալերութիւնը, և ձեռնափայտը միջից ծալելով, կախեց ահա այն ծառից (*բժիշկը մտաբերելով ծիծաղում է*)։ Դու գնալուց յետոյ երկար ժամանակ կախուած մնում էր ծառի վրա, և ես ամենքին պատմում էի։

Բժիշկ.

(*Յանկարծ ծիծաղը զսպելով*) Ի՞նչ էիր ուզում ասել, Յակոբ, ինչո՞ւ յիշեցիր ձեռնափայտը։

Յակոբ.

Կարծում ես, կը կեղծեմ։ Ո՛չ. Յակոբ-ջահիլը ամեն հարամզադութիւն ասել է իւր կեանքում, բայց երբէք չի կեղծել։ Ոչ Աստուածանից եմ վախենում, ոչ էլ մարդկանցից. էլ ինչո՞ւ պիտի կեղծեմ։ Մի կտոր հաց որտեղից լինի, կը գտնեմ։

Բժիշկ.

Ուրեմն միտքդ պարզ ասա։

Յակոբ.

Ասում եմ։ Դո՛ւք, յարգելի՛ բարեկամ, փոխուել էք, էլ առաջւայ Մանուէլեանցը չէք։

Բժիշկ.

Ես փչացե՞լ եմ քո աչքին։

Յակոբ.

Ես այդ չասացի։ Բայց դու այլևս առաջւայ Մանուէլեանցը չես, քեզ բան է պատահել ճիշտ այն օրից սկսեալ, երբ դու ամուսնացար... Մենակ ես չեմ ասում, քո բոլոր համակրողներդ նոյն կարծիքի են։

Ռժիշկ.

Այսինքն ինչ կարծիքի։

Յակոբ.

Ասում են, թէ մենք Մանուէլեանցից շատ բան էինք սպասում, մեծ յոյսեր ունէինք։

Ռժիշկ.

Իսկ այժմ։

Յակոբ.

Այժմ իւր համար ապրում է, բաղդաւոր, երջանիկ, և չգիտէ, թէ ուր են մնացել քէասիբ ու քիւսուբները, ինչ են անում իւր նախկին ընկերները։

Ռժիշկ.

Եւ դու էլ, Յակոբ, այդ կարծիքի ես.

Յակոբ.

Ախ, Գրիգորէ, գարգերս մի նորոգիլ, Աստուած սիրես։ (Շեշտելով) Քեզ բան է — պատահել։ Քանի անգամ եմ քո պատճառով ծեծուել. ով կարող է իմ մօտ քո մասին պակաս խօսք ասել։ Բայց տե՛ս (առնելով ձեռնափայտը և գետնին գիծ անելով). Այստեղով ջուր էր հոսում, առողջ, թարմ, զով ջուր, իսկ այժմ չի՛ հոսում։ Պրծաւ գնաց։

Ռժիշկ.

Բայց Դուք գիտէք, թէ ես ինչ հանգամանքների մէջ եմ գտնուում։

Յակոբ.

Զը գիտեմ և չեմ էլ ուզում գիտենալ։ Ի՞նչ հանգամանքներ։ Բայց, ասէք խնդրեմ, հասարակութեան ինչ գործն է, թէ Դուք ինչ հանգամանքներով էք շրջապատել Ձեզ։ Յաղթեցէք այդ հանգամանքներին, դո՛ւրս եկէք Ձեզ աննպաստ դրութիւնից և շահեցրէք Ձեր կապիտալը, ցո՛յց տուէք, որ Դուք բան էք սովորել, փայլեցէք, եթէ ադամանդ էք։ Այն ժամանակ ջահիլ-Յակոբը ոսկի կը դառնայ և ծպտուն հանողի բերանը կը պատռի։ Առ այժմ մնաք բարև։ Իմ ասելիքը ասեցի, սիրտս հանդարտուեց, շարունակութիւնը Դո՛ւք գիտէք (գնում է)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Ռժիշկ.

Շատ ուղիղ է նկատում։ Եւ իսկապէս ինչ է իմ արածը՝ համեմատած այն ծրագիրների հետ, որ մի ժամանակ կազմում էի ես։ Յակոբի նկատողութիւնները անհիմն չեն։ Նա իւր առողջ խելքով ըմբռնում է իմ դրութեան անբնա-



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.
Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

կան լինելը։ Բաւական է գանգատներով զբաղուել. լացկանութիւնը թոյլութեան նշան է։ Պէտք է փոխել կեանքը, կուռել չարիքի դէմ։ Բայց ո՞վ պիտի անի այդ։ Հասարակութիւնը... ի՞նչ կարելի է սպասել հասարակութիւնից, երբ նրա ներկայացուցիչները անգործ են։ Իսկ ի՞նչ կարող է անել անհատը, երբ կեանքը կլանում է նրան, որպէս ահռելի ծովը՝ փոքրիկ նաւակը։ Սակայն չէ՞ որ շատ անգամ նաւակը յաղթող է հանդիսանում։ Ներքին ամրութիւն է հարկաւոր։ Ո՞յժ է հարկաւոր, արտաքոյ կարգի ընդունակութիւն է հարկաւոր, այո՛, նոյն իսկ տաղանդ է հարկաւոր։ Ուրեմն թող տաղանդները զբաղուեն այդպիսի խնդիրներով։ Իմ ի՞նչ գործն է, ես մի համեստ բժիշկ եմ, ուրիշ ոչինչ։ Օհ՜... մի համեստ բժի՞շկ... սակայն ո՞ւր էր մնացել քո համեստութիւնը, երբ ամենքին ոգեւորում էիր, դէպի գործ էիր հրում, ամենքից հաշիւ էիր պահանջում... Իսկ այժմ համեստութիւնը պատրուակ բռնելով, կամենում ես խոյս տալ։ Դաւաճա՛ն դու, վախկո՛տ... Ո՜չ, Մանուշակ, այլևս ես քո համակրութեան արժանի չեմ, ես Հեղինէի՛ն եմ արժանի... բայց... այդպէս պիտի շարունակի՞...

(*Ցայտնում է Մանուշակը բեմի խորքում աջ կողմից և առանց նայելու կամենում է անցնել*)։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Բժիշկ.

(*Ինքն իրան*) Ո՜չ, ես չե՞մ կարող դիմանալ։ Գէթ մի րոպէ պիտի խօսակցեմ, գոնէ առողջութիւնը հարցնեմ. չէ՞ որ ես պիտի անհոգ չվերաբերուեմ դէպի Միքայէլի քոյրը։ (*Մօտ գնալով*) Տիկի՛ն, միայն մի՛ րոպէ։ (*Խօսակցելով գալիս են դէպի բեմի առջևի կողմը*) Տիկի՛ն, ինչո՞ւ այդպէս սակաւ էք երևում. չէ՞ որ ես Ձեզ խորհուրդ եմ տուել, օգտուել լաւ եղանակներից։

Մանուշակ.

Այսօր էլ Լևոնիկի պատճառով դուրս եկայ. ման գալ է ուզում։

Բժիշկ.

Բայց Դո՛ւք, Դո՛ւք... Չէ՞ որ Ձեր առողջութիւնն էլ պահանջում է։

Մանուշակ.

Իմ առողջութիւնը... Է՜հ... Ի՞նչ կարիք կայ... Ծուլանում եմ, շատ ման գալ չեմ սիրում։

Բժիշկ.

Իսկ տանը չէ՞ք տխրում։ Ինչպէ՞ս էք անցուցանում Ձեր օրերը... Երևի կարդո՞ւմ էք, գրո՞ւմ էք...

Մանուշակ.

Առաջ կարդում էի, շատ էի կարդում. իսկ այժմ (*զլխով բացասական շարժում է անում*) Այլևս ախորժակ չկայ, ոչ մանգալու, ոչ կարդալու... Իսկ գրե՞լ... Ես գրող չեմ: Դուք, իհարկէ, միայն կատակի համար էք հարցնում այդ:

Բժիշկ.

Այդ մի անտեղի կատակ կլինէր, տիկին: Ո՛չ, ես լուրջ եմ հարցնում, չէ՞ որ Դուք մի ժամանակ գրում էիք... Կարծում էք, ես մոռացել եմ: Օրիորդ Մանուշակը...

Մանուշակ (*սառն*):

Այն՝ Մանուշակն էր, իսկ ես այլևս Մանուշակ չեմ:

Բժիշկ (*զսպելով իւր կսկիծը*):

Ապա ի՞նչ էք... ի՞նչ էք ասում, տիկին, Դուք պիտի միշտ նոյնը մնաք: Ոչ թէ նոյնը. պիտի շարունակ յառաջադիմէք...

Մանուշակ.

Դուք շատ բարձր կարծիք ունէք կեանքի ու մարդկանց մասին: Է՛հ, թողնենք այդ: Հա՛, ներեցէք, մենք պիտի գնանք, երեխան կը յոգնի:

Բժիշկ.

Զը մոռանամ հարցնել, նամակ ունէք Միքայէլից:

Մանուշակ.

Այո: Նա էլ նոյն խորհուրդներն է տալիս (*մեղմ ժպիտ*): Իսկ Դուք նամակ չունէք:

Բժիշկ.

Ունեմ, և շատ կարևոր:

Մանուշակ.

Իւր գործերի մասի՞ն...

Բժիշկ.

Այո, և բաւական լուրջ նորութիւններ է յայտնում: Գնանք դէպի այս կողմը, ես կը պատմեմ Ձեզ (*գնում են դէպի աջ: Ձախ կողմից գալիս են Հեղինէն և Շողակաթը*):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հեղինէ.

Տեսա՞ր, մամա, տեսա՞ր... Գրիշան էր այն անզգամի հետ: Ամենքը ասում են, բայց դու չես հաւատում: Դէ՛հ, հիմայ աչքովդ տես: Մէկ նայի՛ր, թէ ինչպէս են փսփսում մէկ-մէկու ականջին,

կասես թէ օրինաւոր մարդ ու կին լինեն: Ի՞նչ դալաթ կանեն օրինաւոր մարդ ու կինը: Տեսնում ե՞ս...

Շողակաթ.

Ախչի, գլուխը քարը, ի՞նչ իս սիրտդ նեղացնում: Փառք Աստու. սոված չիս, տկլոր չիս, ի՞նչդ է պակաս: Էնքան կենայ, որ իրան-իրան փոշմնի ու ետ գայ:

Հեղինէ.

Իսկի՞ էլ չի փոշմանիլ, ի՞նչ ունի փոշմանելու: Ես չլինեմ, ուրիշը լինի: Տղամարդիկ ամենքն էլ այդպէս են, իրանց քէֆն են անում: Մենք ենք մէջտեղ զրկւում:

Շողակաթ.

Դուն էլ քու քէֆն իս անում. ի՞նչդ է պակաս:

Հեղինէ.

Շատ բան է պակաս. պառաւել եմ. ի՞նչ է... Ես մարդ չեմ ուզի՞լ... Դու պառաւել ես, բայց էլի պապաշից ձեռ չես վերցնում. ի՞նձ ինչ ցաւ է կպել: Բաս եթէ այդպէս էր, ինչո՞ւ էիր ինձ այդ կուսին տալիս: Շատ էիր բեզրել ինձանից, ի՞նչ կար շտապելու:

Շողակաթ.

Մեղա՛ քեզ, Աստուծ. ի՞նչ իմ քեզ մարդու տալ. դուն ուզիլ իս նրան, մեղքդ ի՞նձ վրա իս բարդում: Իս նրան տէհա թէ չէ, խօսքը իմացայ թէ չէ, սրտումս մի թաւուր վախ նընկաւ, իս նրան չը հաւնեցի: Համա դուն վուր ասեցիր, թէ ուսումնական է, դոխտուր է, իս էլ խաբուեցի: Ի՞նչ գիտէի, վուր մունդրիկը փիլիսոփայ է, ֆարմազոն է: Էլ դոխտուրներ չի՞նք տիհի. դիփ խոմ նրա պէս չեն: Սուս կաց, այ, բիձէդ գալիս է. տեսնենք ինչ խաբար է բերում (*ժողովարանից գալիս է Պաւլը, մի փոքր հարբած և ուրախ տրամադրութեան մէջ*):

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ.

Բարև Ձեզ, մա՞ն էք գալիս:

Շողակաթ.

Դէ՛հ, ի՞նչ անենք: Պաւլ, ես հէնց ուզում էի քեզ տեսնել:

Պաւլ.

Լա՞ւ խաբար է:

Շողակաթ.

Պաւլ, ախր մինչի եվ պիտի բանը էսէնց մնայ:

Պաւլ.

Ի՞նչ է պատահել։

Շողակաթ.

Էլ ինչ պիտի պատահի, խայտառակութիւնք— գնաց էլի։ Դիտէ՞ս, թէ ինչեր են խօսում։

Հեղինէ.

Բա՞ն է մնացել, որ չը խօսեն։

Շողակաթ.

Վուրդի, ինչի՞ կնկանդ կապը չես քաշում. ինչի՞ ես թուլ վարւում հետը։

Պաւլ.

Ախր ինչ է պատահել. խռովել-գնացել է, էլի կը բարձի ու յետ կը գայ։

Շողակաթ.

Էդ մի ասի։ Կնիկը վուր մարդուց հեռու ըլի, ո՞վ գիտէ, ինչե՞ր չի անի։ Խելքդ գլուխդ հաւաքիր, քանի ուշ չէ։ Թէ չէ, ո՞վ գիտէ. չար լեզուների ասածը մէրաշ դրուստ կը դուս գայ (*փսփսում է ականջին*)։ Ա՜յ, տես, վունց քաղցր ըխտիլաթ ին անում մէկ-մէկու հետ։ (*Պաւլը գլխքը խոժոռելով գնում է դէպի աջ, առանց բեմից դուրս գալու*)։

Հեղինէ.

Մամա, դու այս կողմը եկ (*գնում են դէպի ձախ*)։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

(*Բժիշկը և Մանուշակը լարած ուշադրութեամբ խօսակցելով գալիս են, առանց Պաւլին նկատելու*)։

Պաւլ (*ինքն իրան*)

Ասենք, թէ մի մեծ կորուստ չի։ Կինը ինչ է, որ մարդ նրա համար հոգս անի։ Մէկը չլինի—միւսը լինի։ Կինը միրգ է, որը փութերով է ծախւում, միայն թէ գնող լինի։ Սակայն մի՞թէ ես թոյլ կը տամ, որ իմ վրա ուրիշները ծիծաղեն։ Ո՛չ, ես ապուշ չեմ։ Եւ ո՞վ պիտի լինի իմ հակառակորդը... մի իդիոտ...

Բժիշկ (*ոգևորւած*)։

Եւ այդպէս, մենք գիտակցական յուսով դիմում ենք յառաջ, սպասելով մի բարոյական նոր ծնունդ։ Այդ ապագայ ծնունդն է մեր միակ մխիթարութիւնը...

Մանուշակ.

Վերջին դէպքերից ես փոքրինչ թերահաւատ եմ դարձել, բայց Աստուած տայ, որ ծնունդը տղայ լինի։



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.
Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

Պաւլ.

(*Ինքն իրան*) **Ուրեմն սուտ չէ... Արդէն սրանք ծնունդի պատրաստութիւն են տեսնում։** (*յարձակելով Մանուշակի վրա*) **Խայտառակ** (*ձեռքը բարձրացնելով կամենում է խրել։ Բժիշկը ու Մանուշակը սկզբում շփոթում են, բայց շուտով հասկանում են, թէ բանը ինչումն է*)։

Մանուշակ.

(*Ընկնելով բժշկի կրծքին*)։ **Պաշտպանեցէք ինձ։**

Բժիշկ.

(*Աջ ձեռքով Մանուշակին գրկելով, ձախ ձեռքը դէմ է դնում Պաւլին*)։ **Հանդարտ, բարեկամ, ամօթ է, զսպեցէք Ձեզ։**

Պաւլ (*բարկանալով*).

Ես իմ իրաւունքն եմ պաշտպանում, իմ պատիւը։ (*Յայտնւում է Յակոբը, որը կամենում է միջամտել, կարծելով թէ յարձակումը բժշկի դէմ է*)։

Բժիշկ.

Իրաւունքը իւր տեղը։ Ամօթ է, դեռ հանդարտեցէք, ապա իրաւունքից կը խօսէք (*Յակոբին անձայն խնդրում է, որ առաջնորդէ Մանուշակին դէպի տուն։ Յակոբը բռնելով տղայի ձեռը, գնում է Մանուշակի հետ*)։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Բժիշկ.

Յարգելի պարոն, ի՞նչ է նշանակում այդպիսի վարմունքը, որը առնուազն մեծ անքաղաքավարութիւն է։

Պաւլ (*զարմացած*)։

Դուք դեռ թոյլ էք տալիս Ձեզ նկատողութիւններ անել։ Ես վաղուց էի կամենում բացատրութիւն պահանջել Ձեզանից։

Բժիշկ.

Այդ կարելի էր և առանց խայտառակութեան։ Ինձանից կարող էիք բացատրութիւն պահանջել, իսկ այն անմեղ հրեշտակը ինչով էր մեղաւոր, նրան ինչու էք խայտառակում։

Պաւլ.

Անմեղ է, թէ մեղաւոր է, այդ իմ գործն է։ Դուք, եթէ կարող էք, Ձեզ պաշտպանեցէք։ Ի՞նչ է նշանակում Ձեր յարաբերութիւնը նրա հետ։

Բժիշկ.

Նախ մենք ծանօթ ենք, երկրորդ՝ նա տարաբաղդաբար հիւանդ է և պիտի բժիշկներից խոյս չտայ...

Պաւլ.

Բայց մի աւելի զօրեղ կապ չկայ Ձեր մէջ։ Դէհ, խօստովանեցէք, եթէ ազնիւ մարդ էք։

Բժիշկ.

Կայ։ Տիկին Մանուշակը իմ հին բարեկամն է։ Ես ի մօտոյ ճանաչում էի նրան, երբ Դուք դեռ բոլորովին զաղափար չունէիք նրա մասին։

Պաւլ.

Եւ ինչ յարաբերութեան մէջ էիք այն ժամանակ։

Բժիշկ.

Շատ ազնիւ յարաբերութեան մէջ։ Մենք միասին գործում էինք, միասին սովորում էինք, միևնոյն զաղափարներով ոգևորւում էինք...

Պաւլ.

Եւ այն ժամանակից սկսեալ թագնուած կայծեր են մնացել Ձեր սրտերում։

Բժիշկ.

Այո, և այդ շատ բնական է։ Մեր ժամանակ ո՞ր օրիորդն է և ո՞ր երիտասարդն է զերծ այդպիսի կայծերից։ Բայց Դուք մի՞ կարծէք, թէ այդ չարիք է։ Ո՛չ, ընդհակառակը. թագնուած կայծերը շատ մեծ բարոյական նշանակութիւն ունեն։ Այդպիսի կայծերը միանգամայն անարատ երկնային ծագում ունեն և զօրեղ գործօն ոյժ են ներկայացնում ամուսնական կեանքի մէջ։ Կինը կամ տղամարդը պիտի միշտ ի նկատի ունենայ, որ եթէ ինքը չարդարացնէ իւր ընտրեալի ազնիւ յոյսերը, նրա սրտում մի նեարդային տենդ կըսկսի, որի ազդեցութեամբ՝ թագնուած կայծերը կը բորբոքուեն, կը բոցավառուեն... Յարգելի պարոն Պաւլ, ինչո՞ւ էք յուսախաբ անում Ձեզ վիճակուած հրեշտակին, ինչո՞ւ չէք գնահատում այդ ազամանդի երկնային փայլը...

Պաւլ.

Փա՛յլը, փա՛յլը... Ինչպէս երևում է, Դուք սիրահարուած էք նրա վրա. որպիսի՜ յանդգնութիւն...

Բժիշկ.

Ինձ հետ գործ չունէք։ Ես շուտով գուցէ բոլորովին կը հեռանամ այդ քաղաքից։ Գիտէք, ես որպէս բժիշկ նախազգուշացնում եմ Ձեզ, նա լուրջ կերպով հիւանդ է, փրկեցէք նրան։ Եւ ոչ ոք չի յամարձակուիլ խանգարել Ձեր ընտանեկան հանգստութիւնը։

Պաւլ.

Այդ Ձեր գործը չէ։ Ես գիտեմ, թէ ինչպէս պիտի վարուեմ կնոջս հետ։ Նախ թոյլ տուէք խնդրել Ձեզ, որ միանգամայն կտրէք Ձեր յարաբերութիւնը նրա հետ։ Ապա ես գիտեմ, թէ ինչպէս կարգի կը բերեմ նրան, ես նրա հոգին կը հանեմ։

Բժիշկ.

Հոգի՞ն կը հանէք։ Ո՛չ, պարոն։ Այդ դէպքում ես ստիպուած կլինեմ միջամտելու։ Հանեցէք իմ հոգին, եթէ կարող էք։ Ե՛ս եմ մեղաւոր, եթէ միայն սրևէ մեղաւորութեան մասին կարող է խօսք լինել։ Բայց ես չե՞մ թոյլ տալ, որ Դուք նրա հոգին հանէք։ Տիկին Մանուշակը թանկ է իմ սրտին... Նա մի եղբայր ունի, արիւնակից եղբայր, որը հեռու է և չէ կարող պաշտպան հանդիսանալ նրան։ Բայց ունի մի ուրիշ եղբայր, հոգեկից եղբայր, որը մօտ է և պատրաստ է զոհուելու իւր դժբաղդ քոյրիկի համար։ (Խիստ հուզուելով) Հեռու նախապաշարմունք, հեռու մարդկային անմիտ շղթաներ... Ես չե՞մ թոյլ տալ, որ Դուք նրա հոգին հանէք... Համենայն դէպս Դուք դեռ ժամանակ ունէք. լա՛ւ մտածեցէք... (Հեռանում է։ Պաւլը ապշած նայում է նրա ետևից և վերջապէս գլուխը սպառնալի շարժելով գնում է դէպի հակառակ կողմը)։



ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

(ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ)

ՏԵՍԱՐԱՆ.

Փոքրիկ դահլիճ, հասարակ, բայց ճաշակով զարդարուած: Եռերի պատից լուսամուտներ դեպի բակը, ուր մի կանաչազարդ ծառ է երեւում: Հարաւ պատի եռերի մասում՝ դուռը դեպի նախասենեակ: Աջ պատի վրա դուռը դեպի ներքին սենեակները:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ.

Մայor.

(*Նստած է բազմոցի վրա, ձախ ոտը մեկնած և Լեօնիկը կանգնած է նրա մօտ*):

Ի՞նչ ես աչքերդ պլզել, вотъ мошенникъ! Մաշեննիկութիւնը աչքերի մէջ փայլում է: Հայրն է էլի... Խելօք մարդ է, ինչ ասեմ, но... (*գլխի շարժումով անբաւականութիւն է արտայայտում, ապա կամենում է հոգսերը ցրել*) Լեօնիկ ասա տեսնեմ. հայրիկիդ ես շատ սիրում թէ մայրիկիդ: (*Ականջը մօտեցնելով երեխայի բերանին*) Հայրիկը... Что онъ выдумалъ мошенникъ? (*Ականջը կրկին մօտեցնելով*) Ի՞նչ... Ո՞ւմ է ծեծել մայրիկը, հայրիկն... Не могу понять .. Այստեղ ինչ որ բան կայ... Խօսքի ճշմարտութիւնը երեխայից հարցրու: (*Կանչելով*) Մանիա... (*պատասխան չկայ*): (*Բարձր*): Մանուշակ (*Մանուշակը երևում է դռանը*)

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մայor.

Մանիա, այդ ինչ է պատմում փոքրիկդ, դու կը հասկանաս սրա լեզուն:

Մանուշակ (*առաջ գալով*).

Ի՞նչ է ասում:

Մայor.

Ծեծել է, մայրիկը, հայրիկը... ով գիտէ... Այսօր խօ սրան չեմ ծեծել:

Մանուշակ.

Ինչու պիտի ծեծեմ:

Մայor.

Այլ ինչ է ուզում ասել:

Մանուշակ (*վրդովմունքը զսպելով*):

Դուրս է տալիս էլի... Ո՞վ գիտէ, թէ ինչ է տեսել երազում:

Մայor (*տեսնելով Մանուշակի վրդովմունքը*).

Մանիա, милая... (*դժուարանալով*) Ты правду говоришь?

Մանուշակ (*շփոթելով*)

Երեխայ է, ինչ ես դադարկ բանին ուշ դարձնում:

Մայոր (*աչքերը յառելով*)

Մանիա, ես անհանգիստ եմ։

Մանուշակ.

Դէհ, հայրիկ, ինչու՞ ես վրդովվում, անհանգիստ լինելու ոչինչ պատճառ չկայ։

Մայոր.

Ты серьезно говоришь?

Մանուշակ.

Серьезно.

Մայոր (*տեղից շարժելով*).

Դէհ, ես շատ յոգնեցի. օգնիր գնամ պառկեմ։ (*Մանուշակը բռնում է հօր կոնատակից, որը իր ցաւը արտայայտելով քայլ առ քայլ առաջ է գնում, մինչև որ անհետանում են: Մանուշակը իսկոյն յետ է դալիս*):

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մանուշակ.

(*Նստելով բաց լուսամտի առաջ, տխուր հայեացքով նայում է դէպի պարտէզ*)։ (*Ցանկարծ տեղից վեր կենալով*) Ո՛չ, այդպէս չէ կարելի շարունակել... Այլևս սիրտ չկայ, ոյժ չկայ... Սակայն ի՞նչ կարող եմ անել։ Կեանքը բանտ է, ուրիշ ոչինչ... Մանուշակը Պաւլի կինն է՝ պէտք է տանջւի՞, տանջւի՞ և սև հողը մտնի։ «Խայտառակ»... Ի՞նչ էր ուզում ասել։ Եւ ի՞նչ սարսափելի բան. յարձակում հասարակաց այգում... Այժմ ամբողջ հասարակութեան բերանին ծամօն կը դառնանք։ Բայց ի՞նչ է նշանակում այդ... Մթթէ անբնական է, որ ծանօթ այր ու կին միմեանց համակրեն։ Ես համակրում եմ նրան։ Ախր ինչպէս չը համակրեմ. իմ կորցրած իդէալները կենդանի են նրա սրտում։ (*Ցանկարծ վախեցած*) Համակրո՞ւմ եմ... Սիրո՞ւմ եմ... Ես սիրո՞ւմ եմ... ի՞նչ իրաւունքով... Նա կի՞ն ունի, երեխայ ունի... Ո՞չ, ո՞չ... ինչու՞ անբախտացնել նրան... Զի՞ որ ես հիւանդ եմ, ես հիւանդ եմ արդէն (*Զանգահարութիւն, Մանուշակը մօտենում է դռանը*)։ Ո՞վ է... Տէր-Գաբրիէլը։ Հրաւիրեցէք... Ատելով ատում եմ այս քահանային։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Տէր-Գաբրիէլ.

Ողջոյն Ձեզ, յարգելի տիկին։ Վաղուց ցանկութիւն ունէի տեսնել թէ Ձեզ և թէ առհասարակ Ձեր (*դժուարանալով*) ընտանիքը և հէնց Ձեր պատուելի հօրն էլ և թէ ամենքին էլ...

Մանուշակ.

Համեցէք, նստեցէք... Կամենում էք հայրիկին տեսնե՞լ։ Այս րոպէին կը յայտնեմ (*կամենում է գնալ*)։

Տէր-Գաբրիէլ.

Այդ դեռ յետոյ։ Իսկ այժմ կը կամենայի Ձեզ հետ փոքր ինչ խօսակցել, որովհետև հէնց Ձեզ տեսնելու համար եմ եկել յատկապէս (*նստում է*)։ Անցան այն ժամանակները, երբ քահանան միայն իւր հացի մասին էր մտածում։ Այժմ ժողովուրդի աչքը բացւել է, քահանայից շատ պահանջներ են անում և իրաւացի՞ պահանջներ։ Այո՛, քահանան պարտաւոր է մտածել իւր ծուխի հոգեկան պէտքերի մասին, թէև դեռ շատ քչերն են հասկանում այդ պարտաւորութիւնը։

Մանուշակ.

(*Ինչ որ նախադգալով*) Է՛հ, ի՞նչ կարող է անել քահանան եթէ ժողովուրդը...

Տէր-Գաբրիէլ.

Ո՛չ, տիկին, քահանան շատ բան կարող է անել։ Մեր ժողովուրդը կրօնական ժողովուրդ է... Բայց անցնենք այլաւոր խնդրին։ Ես վաղուց մտադիր էի տեսնել Ձեզ։ Մի քանի օր առաջ Ղողակաթին պատահեցի եկեղեցու բակում, բայց... Ա՛խ, ներողութիւն, միտքս ուրիշ տեղ գնաց... Ծերացել եմ, միտքս շեղւում է։ Այն էի ասում։ Վերջերս տկանջիս հասան մի քանի անախորժ լուրեր։ Մենք քահանաներս պարտաւոր ենք անուշադիր չը թողնել այդպիսի, թէկուզ փոքրիկ, թիւրիմացութիւնները...

Մանուշակ.

Իսկապէս հարցը ինչումն է։

Տէր-Գաբրիէլ.

Գիտէ՞ք, յարգելի տիկին, ամբողջ աշխարհքում հայ ազգը հռչակւած է ի՞նչ պատճառով։ Ո՞վ է այն արարածը, որ աչքի է ընկնում իւր գեղեցի՞կ յատկութիւններով... Փայլում է իւր համբերող բնաւորութեամբ, իւր համեստութեամբ, իւ՞ր... հրեշտակայի՞ն անարատութեամբ... Ազգի երեսը պարզ անողը հայ կի՞ն է... Ամբողջ Եւրոպան զարմացած է հայ կնոջ անարատ բնաւորութեան վրա։ Այժմ, տիկին, ես մի խնդիրք ունեմ դէպի Ձեզ, որը Դուք անշուշտ չէք մերժիլ, որովհետև այդ պահանջում է Ձեր ընտանիքի՞, Ձեր զաւակների՞ անունը ու պատիւը։ Գիտեմ, որ Դուք մի փոքր վիրաւորւած էք Ձեր պատուելի ամուսնուց։ Այժմ կը խնդրեի, որ թողնէք Ձեր անբաւականութիւնը և

կրկին հաշտուէք Ձեր ամուսնոյ հետ։

Մանուշակ.

Բայց, ներեցէք հարցնել, Դուք ո՞ւմ կողմից էք խօսում։

Տէր-Դաբրիէլ.

Ե՞ս... իմ կողմից, այդ իմ պարտաւորութիւնն է։

Մանուշակ.

Ուզում եմ ասել, թէ արդեօք Դուք նախապէս տեսնուե՞լ էք իմ ամուսնոյ հետ։

Տէր-Դաբրիէլ.

Ո՜չ, քաւ լիցի։ Բայց նա, ի հարկէ, ուրախ կ՚լինի, եթէ...

Մանուշակ.

Ի՞նչ է իսկապէս Ձեր նպատակը։

Տէր-Դաբրիէլ.

Ես ցանկանում եմ տեսնել Ձեզ այնպէս միաբան, համերաշխ, երջանիկ, որպէս այդքան ժամանակ եղած էք... Քանի՞ տարի է, որ ես Ձեզ պսակեցի. կարծեմ եօթը տարին լրացած լինի, այնպէս չէ՞։

Մանուշակ.

Այնպէս է։

Տէր-Դաբրիէլ.

Եւ այդքան ժամանակ Դուք սերտ և համերաշխ միասին ապրել էք, շրջապատուած պատուելի ազգականներով... Ո՞վ է ձեր տան վերաբերեալ որևէ անախորժ խօսք լսել... Այո՛, տիկին, Դուք պիտի ընդունէք իմ հայրական խորհուրդը... Մենք հոգևորականներս էլ ձեզանով պիտի ուրախանանք։ Դուք պիտի սէր և համերաշխ լինէք, որ մեզ համար էլ լաւ լինի։

Մանուշակ.

Եւ այդքան ժամանակ Ձեր ասածի պէս է եղել, համերաշխ, երջանիկ (*գլուխը տատանելով*)։

Տէր-Դաբրիէլ.

Գոնէ հասարակութեան աչքին այդպէս է եղել և հէնց գլխաւորն էլ այդ է։

Մանուշակ.

(*Անբաւականութիւնը դպելով*) Դուք ա՞յդ էք ուզում...

Տէր-Դաբրիէլ.

Այո, ի հարկէ... Հա, ուրեմն յուսանք, որ ամեն բան լաւ կը վերջանայ։ Ես Ձեր ամուսնուն էլ պիտի տեսնեմ, նրա հետ ևս պիտի խօսեմ։

Մանուշակ.

Փորձեցէք։ Թէև ես այլևս երջանիկ լինել չեմ կարող, բայց չեմ կամենում ընտանիքը քանդել։ Միայն թէ իմ գլխաւոր պահանջը պիտի կատարուի. այսինքն հաւատարմութիւն ոչ միայն իմ կողմից, այլ և իմ ամուսնոյ կողմից, և անխարդախ աշխատանք։ Եթէ այդ երկու բանը հնարաւոր է...

Տէր-Դաբրիէլ.

Անշո՛ւշտ, անշո՛ւշտ... Կաշխատեմ և յոյս ունեմ...

Մանուշակ.

Իսկ ես կը սպասեմ դրական արդիւնքին, թէև շատ քիչ յոյս ունեմ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մայor (*ներս գալով*)։

Ես էլ ասում եմ, թէ այդ ինչ ձայն է լսւում դահլիճից։ Այդ ի՞նչպէս է պատահել։ Նստեցէք, մի վեր կենաք, ես էլ մի բոպէ կը նստեմ Ձեզ մօտ (*նստում է*)։

Տէր-Դաբրիէլ.

Քահանայի պարտքն է ժամանակ առ ժամանակ այցելել իւր ծուխը։

Մայor.

Еще бы! Քահանան շատ պարտքեր ունի, բայց մեր ժամանակում ո՞վ է իւր պարտքը կատարում, որ քահանան կատարի։ Լազրովը կասէր, единственная обязанность человѣка—свято исполнять свой долгъ. Այո՛, լաւ զինւոր էր հանգուցեալը, իսկ ով լաւ զինւոր է, նա և լաւ մարդ է։

Տէր-Դաբրիէլ.

Այո, իհարկէ... Հէնց այս բոպէին մենք յարգելի Մանուշակի հետ նոյն խնդիրն էինք շոշափում և երկուսս էլ եկանք այն եզրակացութեան, որ իւր պարտաւորութեան կատարելը, իւր դիրքին ու կոչման հաւատարիմ մնալը, մարդկային կեանքի անհրաժեշտ պայմանն է, որովհետև...

Մայor.

(*Կասկածելով*) Իսկապէս Ձեր խօսակցութեան գլխաւոր խնդիրը, такъ сказать, սիւժեթը ի՞նչն էր։

Մանուշակ (*վրդովվելով*).

Ոչի՞նչ, հայրիկ, հէնց այնպէս խօսում էինք։

Տէր-Դաբրիէլ.

Առանձին բան չկար։ Երբ իմ ական-

ջին հասաւ երեկւայ անախորժ դէպքի լուրը... (*Մանուշակը վրդովված նայում է քահանային*):

Մայոր.

Ի՞նչ անախորժ դէպք։ (*Նայելով Մանուշակին*): Մանիա, դու փոքր առաջ... (*Դառնալով դէպի քահանան*) Ո՞ր դէպքի մասին է Ձեր խօսքը... (*Տեսնելով որ քահանան դժուարանում է*) Я предчувствую. Ի՞նչ է պատահել։

Մանուշակ.

Հայրիկ, ախր դու տկար ես, մի բարկանալ, չնչին բան է։ Ես կը պատմեմ քեզ, միայն թէ սիրտդ մի վրդովիլ։

Մայոր (*իրան զսպելով*):

Շատ լաւ, գոնէ մի խօսքով ասէք, թէ բանը ինչումն է։

Մանուշակ.

Այգում շրջում էի...

Մայոր.

Ո՞ւմ հետ։

Մանուշակ.

Առաջ միայն Լեոնիկն էր հետս, իսկ յետոյ հանդիպեցինք բժիշկ Մանուէլեանցին...

Մայոր.

Ի՞նչ կայ որ... Честнѣйшій человѣкъ въ мірѣ (*նայում է քահանայի աչքին*):

Տէր-Դաբրիէլ.

(*Գլուխը դրականօրէն շարժելով*) Ի հարկէ, ի հարկէ...

Մայոր.

Յետոյ ինչ։

Մանուշակ.

Պաւլը հանդիպեց և... (*Մայորը իրան այնպիսի դիրք է տալիս, որ դէմ առ դէմ լինի Մանուշակին*): Բարկացաւ վրան. ուրիշ ոչինչ։ Յետոյ ես եկայ տուն։

Տէր-Դաբրիէլ.

Այո, ի հարկէ, հէնց այդ է, ուրիշ ոչինչ չի պատահել։ Երևի պարոն պաւլի տրամադրութիւնը փոքր վատ է եղել։

Մայոր.

Такъ! Ես տեսնում եմ, որ ուղիղ կէսը թագցրիք ինձանից։ Յետոյ նա քեզ որևէ վիրաւորական խօսք չասաց, ձեռք չը բարձրացրեց քո վրա։

Մանուշակ.

Ո՛չ։



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

Տէր-Դարբիէլ.

Ո՜հ, ինչպէս կարելի է, նա մի քաղաքավարի, պատուաւոր մարդ է։

Մայոր.

Թողէք խնդրեմ... ինչ պատուաւոր մարդ... Պաղլէց... Նա ոչինչ պատիւ չէ հասկանում։ Понятія не имѣетъ онъ о чести...! торгашъ! և ուրիշ ոչինչ։

Մանուշակ.

Բայց, հայրիկ, մի բարկանալ... Ախր իմ սիրտն էլ չի դիմանում...

Մայոր.

Չեմ բարկանալ, милая, կը զսպեմ ինձ, որ դու չը վշտանաս։ Голубка ты моя (գլուխը տատանելով)... Ես ինքս իմ ձեռքով անբաղդացրի քեզ։ (Զսպելով իրան) Այո, տէրտէր, իմ աղջիկը իմ պատճառով է անբաղդացել։

Տէր-Դարբիէլ.

Ի՞նչպէս։

Մայոր.

Поздно теперь! Ուշ է, տէրտէր, ուշ է... Տեսնում էք նրան (նայելով դէպի Մանուշակը, որը ամանչելով գնում է դէպի դուռը)։ Տեսնում էք նրա նստելն ու վերկենալը, նրա շարժուելը, նրա խօսալը, նրա վարմունքը մարդկանց հետ... Это просто ангелъ, не человѣ-ѣ-къ. Նա քրիստոնեայ է, ոչ թէ... однимъ словомъ не по теоріи, нѣ-ѣ-тъ... Նա քրիստոնեայ է ի բնէ, իւր ամբողջ էութեամբ... Ինչպէս մի բնական ալմազ, որի փայլը իւր մէջն է... натуральная, чистой воды, հասկանում էք։

Տէր-Դարբիէլ.

(Մի տեսակ պարծանք զգալով, որ ինքը հայերէն լեզուն լաւ գիտէ) Այո, ի հարկէ։ Կամենում էք ասել, թէ նա քրիստոնեայ է ոչ թէ տեսականօրէն, այլ գործնականօրէն...

Մայոր.

Нѣтъ, голубчикъ, այդ չէ իմ ասածը։ Նա քրիստոնեայ է, такъ сказать, իւր մօր արգանդից սկսեալ... Вотъ что я хотѣлъ сказать приблизительно!

Տէր-Դարբիէլ.

Այո, այո, ի հարկէ։

Մայոր (աւելի սիրտ առնելով).

Նա ոսկի էր ամեն բանով, և առողջութեամբ, և գեղեցկութեամբ, մտքով, խօսքով, զգացմունքով... Это просто идеалъ женщины... Պաւլի նման մարդիկ բոլորովին արժանի չէին նրան։ Какой нибудь торгашъ, սրտով էլ, մըտ-

քով էլ, ամեն բանով տարգաշ։ Եւ իմ աղջիկը մասամբ նախազգում էր այդ։ Բայց Պաւլը իւր հնարագիտութիւններով, իւր սատանայական ճարպիկութեամբ շփոթեցրեց նրան... Մանուշակը թագցրեց իւր սրտում կասկածանքի վերջին նշույլը և ինքն իրան խաբելով գնաց նրան... Ինչո՞ւ (նորից սկսում է հուզել)։

Տէր-Գաբրիէլ.

Եւ իրաւ ինչո՞ւ...

Մայոր.

Իւր հայրիկի՞ սիրոյ համար, ի՞նձ համար... Այն ժամանակ իմ մեծ որդին նոր էր մեռել, Միքայէլը դեռ փոքր էր, մայրն էլ հիւանդ էր շարունակ։ Նա կամեցաւ, такъ сказать, վերադարձնել ինձ իմ որդոյն, հասկանո՞ւմ էք։ Նա կամենում էր մխիթարել ամբողջ ընտանիքը... Պաւլը հասկացաւ այդ (собака хитрая, съ тонкимъ чутьемъ) և իւր ակնարկներով պաշտպանում էր նրան սխալ յոյսերի մէջ։ Եւ այդպէս գործը գլուխ եկաւ։ (Գլուխը անբաւական տատանելով)։ Եւ ես թոյլ տուի այդ բոլորը, մինչդեռ մի բառով կարող էի ամեն բան քանդել. ես էլ խաբուեցի... Я′... я′ погубилъ своего ангела: (Անդիտակցաբար տեղից վեր թռչելով)։ Եւ ես կըպաշտպանեմ այժմ նրա պատիւը... (Մանուշակը վախեցած մօտ է վազում և գրկելով հօրը աշխատում է հանգստացնել)։

Մանուշակ.

Հայրիկ, սիրելի՞ հայրիկ...

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

ՏԵՍԱՐԱՆ.

Հասարակական մեծ այգի, որի միջով հեռուից երևում է կառքի ճանապարհ։ Այգին գտնում է գարնանային կատարեալ բարևուրեան մէջ։ Երեկոյեան դեմ է։ Գործողութեան վերջում սկսում է հեստիեստ օրը մթնել, այնպէս որ վարագոյրը իջնելուց քիչ առաջ հեռուից ճրագներ են երևում (այգու շատերներ եւ այլն)։

ԱՌԱՋԻՆ ԵՐԵԻՈՅԹ.

(Զախ կողմից մտնում են Մանուշակը, Լեօնիկը և Ծաղիկը)։

Մանուշակ.

Ի՞նչ ես ասում, Ծաղիկ, մթթէ դու չ՚ընդդիմացար։

Ծաղիկ.

(Արտասուելով) Ես անմեղ ի, խաթուն, ես չը գիտի, ես մոլրայ, գիտի թէ երազ ի։

Մանուշակ.

Ի՞նչպէս եղաւ, որ ոչոք յետոյ չիմացաւ, ոչոք չը պաշտպանեց։

Ծաղիկ.

Ես տնից փախի, փուղնից փուլիսին հաւար կանչեցի, էկաւ։

Մանուշակ.

Ի՞նչ ես ասում, ի՞նչ խայտառակութիւն, յետոյ ի՞նչ եղաւ։

Ծաղիկ.

Չգիտմայ, թէ աղէն ինչ ասաց փուլիսին։ Էն կէսխն ինէ զի տարան փուլիսխանէն, աղի տւած ոսկիք առեցին, գողունիկ դէլի։ Մէ օր տան պահեցին ինձ, ետքը վագօն դրին օրօխկեցին զիկ Երիվան։

Մանուշակ.

Ի՞նչ արիր այնտեղ։

Ծաղիկ.

Ի՞նչ կանի, որ ինչ անի։ Ման կուզի, գիշեր աղքատանոց կընցուցի։ Սև ելնէր իմ ծնած օր... ախ... փուչ էլնէր, որ էդ տեղ չընկնի... Փուլիսներ զի տարան հիւանդանոց։ Էնտեղ երէխէն... *(Ամօթից լռում է)։ (Լաց լինելով)* Ես մեղ չունիմ, խաթուն, ես զոհուկ կեառ եմ։

Մանուշակ.

Լաց մի լինիր, դու ի՞նչ մեղաւոր ես... Ի՞նչ արիր երեխային։

Ծաղիկ *(ամաչելով)*.

Սոված կը մնէր... կը մրսիր... շատ մեռաւ...

Մանուշակ.

Իսկ այժմ ի՞նչ ես ուզում անել։

Ծաղիկ.

Երիվանից էսօր էկայ։ Էկայ ինկնեմ քէօ ոտքեր (*ջոքում է, բայց Մանուշակը հրամայում է վերկենալ*) խնդիրք անեմ, որ զի պախշես, զի տիրուհին անես, մի բրդուճ հաց տաս զիկ, չում Աստուած մեր սև երեսին մտիկ կանի, ճամբահ կը բացի և մենք կը դառնանք մեր երկիր։ Ինչքան չէլնի, մեր հողը կը ծրարի մեզ։

Մանուշակ (*հառաչելով*).

Մնացիր, Ծաղիկ, դու ինչ մեղաւոր ես։ Երկուսս էլ դժբաղտ ենք, միմեանց լեզուն լաւ կը հասկանանք։ Տար Լեւոնիկին փոքր ինչ մանացրու. ես ոյժ չունեմ։ Հէնց այստեղ ման եկէք, հեռու չը գնաք։

(*Ծաղիկը Լեւոնիկի հետ գնում է։ Մանուշակը վհատած թիկն է ընկնում նստարանին և մտքի մէջ ընկղմում։ Բեմի խորքում յայտնւում են Շողակաթը և Հեղինէն աջ կողմից և նայում են դէպի Մանուշակը, որը նրանց չէ տեսնում և չէ լսում*)։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հեղինէ.

Տեսնում ես, մամա, թէ ինչեր է անում այդ անզգամը։ Նա այն կապը կտրած Ծաղիկը չէր, որին Պաւլը դուրս գցեց՝ փող գողանալու համար։

Շողակաթ.

Աղջի, նրան նման չի։

Հեղինէ.

Ի՞նչպէս թէ նման չէ, նա է։ Դու միւսի անզգամութիւնը տես. մարդը տնից դուրս է քցել, իսկ ինքը մարդի ջրոյ բերել է իրա մօտ ու պահում։ Ախ, սիրտս տրաքեց, պիտի մի լաւ խայտառակեմ, թէ չէ կը տրաքւեմ (*գնում է դէպի Մանուշակը*)։

Շողակաթ.

Աղջի, ձեռը վի կալ, ինչ գուրծդ է, չուստ արի (*գնում է*)։

Հեղինէ.

(*Մօտ գալով և անակընկալ*) Շնորհաւորում եմ, Մանուշակ։

Մանուշակ (*վախեցած*)։

Ի՞նչն էք շնորհաւորում։

Հեղինէ.

Ուզում եմ ասել, թէ քո սիրած բժիշկը իմ հարազատ ամուսինն է։

Մանուշակ.

Թող Ձեր ամուսինը լինի, ինձ հետ ինչ գործ ունէք։

Հեղինէ.

Դու պատիւ չէս հասկանում, երեսիդ աբուռը կորցրել ես։ Ամբողջ քաղաքը խօսում է քո մասին. իսկ դու դարձեալ քոնն ես շարունակում։

Մանուշակ.

Բաւական է, Հեղինէ, ամօթ է քեզ համար։

Հեղինէ.

Ամօթը քեզ համար է։ Ես պահանջում եմ որ դու ձեռք վերցնես նրանից։ Նա կին ունի, երեխայ ունի։ Նա իրաւունք չունի՛ ուրիշների հետ քէֆեր անելու։

Մանուշակ (*վերկենալով*).

Ձեր զրպարտութիւնները վերջ չունեն, իսկ ես չեմ կարող Ձեզ հետ շարունակել (*հեռանում է*)։

Հեղինէ.

Բա՛ս, բա՛ս... Դու կարծում ես, հէ՛շտ կը պրծնես իմ ձեռքից, սպասիր դեռ։ Հէնց այսօր ամեն բան կը պատմեմ քո ամուսնուն (*գնում է*)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

(*Մանուշակը դեռ բեմից դուրս չեկած, հանդիպում է բժշկին*)։

Բժիշկ.

Որքան ուրախ եմ։ Ո՞ւր էք մնացել, տիկին, շատ սակաւ էք երևում։ Ինչպէս է Ձեր առողջութիւնը։ Ինչպէս տխուր էք, ինչո՞ւ այդպէս։

Մանուշակ.

Այո՛, պարոն Մանուէլեանց, Դուք յանդիմանում էք, որ ես սակաւ եմ երևում։ Զնայելով այդ բանին, մեր շրջապատողները չեն խնայում մեզ, չեն դադարում զրպարտել մեզ։ Ասացէք, պարոն Մանուէլեանց, մթթէ Ձեր (*դժւարանալով*) ընտանեկան անհամաձայնութիւնների մէջ ես մեղաւոր եմ։

Բժիշկ (*ցնցւելով*)։

Յարգելի՛ բարեկամս, ո՞վ կը համարձակւի այդպիսի անմիտ զրպարտանք բարձել Ձեզ վրա։ Դուք խիստ նեարդային էք դարձել և Ձեզ թւում է, թէ ամենքը հալածում են Ձեզ։

Մանուշակ.

Ո՛չ, պարոն բժիշկ, նեարդայնութիւնը ինքն ըստ ինքեան։ Բայց որ ինձ ամեն կողմից հալածում են, կասկած

չկայ։ Թէ Ձեր և թէ իմ ամուսնոյ ազգականները ինչոր թշնամական դիրք են բռնել դէպի ինձ։ Բայց ես ինչո՞վ եմ մեղաւոր։ Բաւական է մի անմեղ բարև, որ ուրիշներին զրպարտութեան առատ նիւթ տանք։

Բժիշկ (*մտամոլոր։*)

Տիկին, եթէ թոյլ կը տաք... ես կը կամենայի... Այսինքն եթէ չէք նեղանալ, ես կը ցանկայի իմանալ, թէ արդեօք Դուք մտադիր էք նորից համաձայնութիւն կայացնել Ձեր ամուսնոյ հետ։

Մանուշակ.

Այսինքն վերադառնալ նրա տունը։

Բժիշկ.

Թէկուզ այդպէս։ Բայց, ի հարկէ, նախապէս համաձայնութիւն կայացնելով։

Մանուշակ.

Համաձայնութիւն կայացնել նրա հետ... Եօթն տարի շարունակ ես ամեն ջանք գործ եմ դրել՝ նրա հետ համաձայնութիւն կայացնելու, բայց ոչինչ չի յաջողել։ Գիտէք, պարոն բժիշկ, ես հայ կին եմ։ Հայ կինը ամեն դադարկ բանի համար չի սառչիլ ամուսնուց, այլ կը համբերի մինչև վերջին ծայը, և ես համբերել եմ... Սակայն սրանից էլ աւելի համբերելը այլևս անկարելի է... Վերջապէս այն նոր տեղեկութիւնները, որ ես ստացել եմ ամենահաստատ աղբիւրներից, ստիպում են ինձ ընդմիշտ հրաժարուել այդ հրեշից։

Բժիշկ.

Այդ դէպքում իմ խորհուրդը կլինէր... Բայց, ես շփոթւում եմ... Այո՛, բաւական է տանջուել...Ես պիտի վերջապէս մի՛ անգամ բանամ իմ սիրտը Ձեր առաջ։ Դուք գիտէք, թէ ես ինքս որքան անբաղդ եմ... Իմ կինս ինձ չէ՛ հասկանում, չէ՛ ուզում հասկանալ... Ես ամեն ջանք գործ եմ դրել՝ ազդել նրա վրա, բայց նա երկաթեայ յամառութեամբ պահանջում է, որ ես փոխւեմ...

Մանուշակ (*ծանր սրտով։*)

Բայց ո՞վ է մեղաւոր... Մեզանից իւրաքանչիւրը ինքն է պատասխանատու իւր վիճակի համար։

Բժիշկ.

Եւ այդպիսի ալեկոծութեան մէջ ես նորից տեսնում եմ իմ առաջ այն չնաշխարհիկ արարածին, որի հոգոյ մէջ գտնում եմ իմ բոլոր որոնածը... Այդ չնաշխարհիկ արարածը, որով զմայլել եմ ես դեռ պատանեկութեան օրերից,

ներկայանում է իմ առաջ, որպէս մի բանտարկուած դեղձանիկ ոսկեփայլ վանդակի մէջ...

Մանուշակ.

(*Արտասունքը զսպելով*) Հերիք է...

Բժիշկ.

Օ՜, Մանուշակ, իմ իդէալը դո՛ւ ես, դո՛ւ... Ուրիշների մէջ ես քո պատճէնն եմ որոնել, բայց չեմ գտել... Ես քեզ միշտ սիրել եմ, թէև դու ինձ երբէք չես սիրել...

Մանուշակ (*ամօթխած*).

Կարծում էք...

Բժիշկ.

Ո՛հ... Ուրեմն ես մեղաւո՞ր եմ քո առաջ... Ես թոյլ եմ տուել, որ դու անբաղդանաս... Մանուշակ, գիտես թէ դու ինձ համար ինչ ես... Դու իմ աստուածուհին ես, դու իմ մուզան ես, Մանուշակ... իմ ամենալաւ զգացմունքները թափանցուած են քո՛ սիրով։ Մայր Արաքսի գարևոր վիշտը ես տեսնում եմ քո թախծալի աչերի մէջ..

Մանուշակ.

(*Արտասւելով*) Օ՜, Գրիգորէ, բաւական է...

Բժիշկ.

Ո՜չ, ես չեմ կարող հեռու կանգնել քեզանից... Հասարակական նախապաշարմունքները, փիլիսոփայութիւնը, օրէնքը, այդ ահռելի ուրուականները չե՞ն կարող սարսափեցնել ինձ... Առանց քեզ մութն է ամբողջ տիեզերքը, դու իմ լուսատու ճրագն ես... Արի՛ փշրենք բոլոր շղթաները և միասին սլանանք եթերային պայծառութեան մէջ։

Մանուշակ.

Իսկ մեր փոքրիկները...

Բժիշկ.

Նրանց էլ թռցնենք մեզ հետ... Ես ու դու ձեռ-ձեռի տուած հրաշքներ կը գործենք... քո սէրը բազմապատկում է իմ ոյժերը, թևաւորում է իմ հոգին...

Մանուշակ (*հեկեկալով*).

Քեզ անբաղդացնե՞լ... Ո՜չ, երբէք... Ես հիւանդ եմ... Իմ կեանքը խորտակուած է... Հեռո՛ւ... մոռացիր ինձ, սիրիր Հեղինէին կամ ում կամենում ես... Մթթէ կարծում ես, թէ ես դեռ քո Մանուշակն եմ... (*արտասուքից խեղդուելով չէ կարողանում շարունակել։*)

Բժիշկ.

Այո՛, դու միշտ իմ Մանուշակն ես,

իսկ այժմ աւելի, քան երբևէ մինչև օրս։ Ես վաղուց գիտեմ, որ դու հիւանդ ես, օ հոգեակս, քեզ հիւանդացրել են, քո կեանքը թունաւորել են... Բայց ես կը բժշկեմ քեզ... Իմ սրտում վառած զօրեղ հրդեհը կը ջերմացնէ նորից քո կեանքի սառուցեալ ովկիանոսը... Ես ևս հիւանդ եմ, եթէ ոչ մարմնով, գոնէ «սրտով» և ինձ միայն դու կարող ես բժշկել... Քո վշտահար աչերը հալածում են ինձ գիշեր-ցերեկ... Ես չեմ հանգստանալ, մինչև որ այդ երկնագմայլ հայելու մէջ չը շողշողայ նախկին ճառագայթը... Երկար տարիներ ես միմիայն սիրում էի քեզ, իսկ այժմ աւելացել է կարեկցութեան սարսափելի կրակը. . Մէրը կարելի է զսպել, իսկ կարեկցութիւնը ոչ երբէք... Դու էլ ինձ կարեկցիր, օ Մանուշակ (ընկնելով նրա վզովը) այդ թախծալի աչերն են ինձ զժուեցնողը... Թոյլ տուր, թոյլ տուր... (Մանուշակը թեքում է գլուխը բժշկի կրծքին, որը համբուրում է նրան մի քանի անգամ):

(Պաւլը յայտնուելով բեմի խորքում հեռուից ներկայ է լինում այդ տեսարանին, ապա սկսում է զգուշութեամբ մօտենալ).

Մանուշակ.

(Սթափուելով) Հերիք է... Ո՞րտեղ ենք մենք... Հեռացիր, մէնակ թող ինձ... Մարդիկ չար են... Գնա, զգուշացիր, խնդրում եմ։

Բժիշկ.

(Ակամայ) Կատարում եմ հրամանդ, հեռանում եմ... բայց այսուհետև քեզանից հեռու մնալ ես չեմ կարող...

(Զևոբը համբուրում է ու գնում):

Մանուշակ (մէնակ):

Ո՜չ. ուշ է, արդէն ուշ է... Իսկ իմ երեխան... (Ցանկարծ մտաբերելով) Լեօնիկ, Ծաղիկ (Վերջիններս դալիս են ձախ կողմից: Մանուշակը գրկում է Լեօնիկին): Քեզ... Ո՜չ, չեմ բաժանուիլ քեզանից...

Պաւլ.

(Ցանկարծակի յարձակուելով):

(Իլելով Լեօնիկին) Տուր ինձ իմ երեխային, անզգամ, և գնա անառակութիւնդ շարունակիր։ (Պաւլը երեխայի հետ շտապով հեռանում է: Մանուշակը սկզբում շփոթում է, ապա վազում է Պաւլի ետեւից բացականչելով)։

Մանուշակ.

Չեմ կարող, չեմ կարող, երեխա՛ս...

(Մանուշակ բալլամոլոր առաջ է վազում, Ծաղիկն էլ հետեւում է):

Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Տեսարանը նոյնն է, ինչ որ երկրորդ գործողութեան մէջ։

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ.

Հռիփսիմէ.

(Լեօնիկին) Հերիք է, վուրդի, այ, տես հէրդ ինչեր է առել քեզ համար (ցոյց է տալիս մի քանի խաղալիքներ): Նա քեզ շկօլ պիտի տայ, սիրուն շորեր պիտի առնի: Հերիք է քանի լաց ըլես (զանգահարելով), հօրէն հէրդ գալիս է, տեսնենք ինչ է բերում քեզ համար: (Ներս է մտնում Սարգիսը իւր հետ բերելով մի փայտեայ ձի և մի զեղեցիկ հարմօնիկ): Ա՜յ, ի՜նչ սիրուն ձի է: (Փայփայելով ձին) Տես, սիրուն-սիրուն մազեր, ի՜նչ լաւ ագի ունի... (Լեօնիկը սառն է մնում): Տես, ինչ լաւ մուզիկ է բերէ, ապա մի ածա տեսնեմ... (Կամենում է զօռով ձեռքը տալ, բայց Լեօնիկը չէ ուզում: Հռիփսիմէն ինքը սկսում է տղտղացնել. Լեօնիկը անտարբեր է մնում) Վա՛յ, էդ ի՜նչ թաւուր էրէխայ է... Ձեր աշխարհքը կրակն ընկնի, վուր էս օրին է հասի:

Սարգիս.

Արշանքի բանը էլ մի ասի, դէդի, շատ է փչացել... Ամեն կողմ քամբաղատութիւն ա տիրում: Խեղճ Մարտիրոս, մեղք ու կրակ...

Հռիփսիմէ.

Էդ ի՞նչ Մարտիրոս է:

Սարգիս.

Կօշկակար Մարտիրոսը: Մեռել է ախը, խեղճ մարդ: Կնիկն ու աղջիկն էլ հաշուած դի՞ւզ 10 գլուխ քիւֆլաթ է թողել, ի՞նչ պիտի ուտեն սրանք:

Հռիփսիմէ.

Ա՛սածու բանն է, վուրդի:

Սարգիս.

Էդ խօմ դրուստ է: Ամա իմ սըրտումն էլ կրակ է մնացէ: Դէդի, անցեալ տարի որ զօռով դիւքնից դուրս չ'արի, ու քէարաստի-մէարաստին էլ տօրգի հանեցի, նրանից դէսը կասես էդ մարդի հալը հալ չէր: Լա՛ւ էր, վա՛տ էր—մի կտոր հաց աշխատում էր, ամա դուքնից դուրս բերելը էդ մարդի մէջքը կոտրեց: (Գլուխը տատանելով) Բաղ վախտի,

վուր բազարում ռաստ չէր գայ, էնտի աչքիս մտիկ կանէր ու ախ կը քաշէր, վուր, Աստուծ գիտենայ, սիրաս կրակ կընկնէր... Մէղք ու կրակ, աշխարքի բանը էդպէս է... Էհ, դէդի, դարդ մի արա, մէկ լաւ խաբար էլ ասելու եմ. չես ասի, վուր էն ինգլիզի սովդան գլուխ է գալի, հաւատա 30 հազար մանէթի աշխատանք մնայ։ Ես էլ շատ եմ չարչարուել. աղէն խօստացել է, վուր մի ձեռք լաւ շուր առնի ինձ համար։

Հռիփսիմէ.

Վուր խօստացել է—կառնի, վուրդի, սիրադ արխային պահիր։ (Ներս է մտնում Շողակաթը)։

Սարգիս (տեղից վեր կենալով).

Խէղճ մարդ... Մէղք ու կրակ (գնում է)։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Շողակաթ.

Բարի լուս, դէդի։ Տեսաք, վունց բիաբուռ էլանք սաղ քաղաքումը։ Վա՛յ, քանդուէր էն օրը, վուր աղջկաս նրա ձեռը գցեցի։ Լիզուս չորացել էր, վուր ես նրան խօսք չը տայի՝ աղջկաս տալու համար։

Հռիփսիմէ.

Քու մեղքը ինչումն է, քա։ Դուն ինչ անես, վուր քո փեսէն գիժ է դուս էկէ։ Աշխարքը խարաբ է էլէ. դուն ինչ անես։

Շողակաթ.

Հիմի ինչ պիտի ըլի. ով պիտի պահի էդ էրէխին, ով պիտի նրա դարդը քաշի։ Դուն էլ ձլիս ես ոտքդ առաջ դնում, քու ինչ վախտն է նրա դարդը քաշելու։

Հռիփսիմէ.

Աստուծ վոնչ անի, էս գիշեր էլ սաղ գիշերը չեմ քնէ նրա դալմաղալիցը։ Կէս սահաթ քնում է, նորից վեր է թռչում ու մօրը կանչում։ Հէրն էլ քանի ջէր տեղից վեր է կացել-եկէ հանդարտացնի, համա վուր սուս չի անում։ Դուն խօ գիտես, Պաւլի գուրծը գլուխ է գալի, զաւոդը ծախում է։ Քա՛, մաշ Հեղինէին ուր ես թողէ տանը.

Շողակաթ.

Հետս էր։ Մտաւ մաղազա, նուր շլեմպա պիտի առնէր, էս է կը գայ։ Վա՛, էդ ինչ բաղդաւորութին է, աչքներդ լուս։ Մարդու գուրծը վուր լաւ ըլի ամեն բան լաւ կը գնայ։ Աշխարքի ծուծը փուղն է փուղը։ Պատիւն էլ, անումն էլ, առողջութինն էլ—դիփ փուղիցն է։



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.
Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

Հռիփսիմէ.

Էդ վուր քու փեսէն իմացել էր, էս օրին չէինք հասնի։ Մի ասա, ձեր բանն վունց պիտի ըլի։

Ղողակար.

Վունց պիտի ըլի։ Էլէնէն էնքան է բեզրէ երեխի ձեռին։ վուր էսօր էլ չը կարաց համբերել, կուզէր տալ Պաշի ձեռը ու հօր գլխին զրկէր։ Տանջում է, հոգին հանում է երեխա, կրակի կտոր է։ Օրը երեք անգամ ծեծում է, ամա էլի չի ուզում խելօք կենայ։ «Նա ինձ չի ուզում—կասէ—թող իր երեխի դարդն էլ, նեղութիւնն էլ ինքը քաշէ»։

(Ներս է դալիս Հեղինէն։ Նրա ետևից Պաշան Անահիտի հետ)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Հեղինէ (ուրախ).

Մամա, թէ իմանաս, ում եմ պատահել... Բարօ, միտդ է այն տղան, որ ինձ ուզում էր, քիչ էր մնացել, որ նշանը բերէր, երբ յանկարծ բռնեցին բերդ նստացրին և յետոյ էլ Սիբիր ուղարկեցին։ Այն տղան, որ միջին փողոցում պասուգնի մագազին ունէր։

Հռիփսիմէ.

Էն երևանցի կռօն...

Հեղինէ.

Չէ, Բարօ, նա ինչացու էր, իսկի իրա գլուխը չէր կարողանում պահել, կնիկը ինչ կանէր... Նա խամ չէ։ Միտդ չէ՞ այն տղան, որ Ֆայլշիվի փողի համար Սիբիր ուղարկեցին։

Հռիփսիմէ.

Հա, մէրաս է, մէրաս... Հիմի գլխի ընկայ, թէ ումն ես ասում։ Ինչ կայ վուր։

Ղողակար.

Ի՞նչ է պատահէ, քա՛...

Հեղինէ.

Նրան խօ վեց տարով ուղարկեցին։ Մանիֆեստով երկու տարի բախշել են և հիմա յետ է եկել։ Ես մտել էի՝ դէյրի կտորացու ընտրելու, տեսնեմ նա էլ այնտեղ կանգնած։

Ղողակար.

Վայ քէ՛...

Հեղինէ.

Այնպէս խիզճ-խիզճ մտիկ էր տալիս, որ սիրտս մղկտաց ընկաւ։ Բարևեց,

ձեռք տաւ, հարցրեց թէ ինչպէս եմ, քո ու մամաշի քէֆն էլ հարցրեց։ Ասաց որ հէնց այսօր մեզ տեսութիւն պիտի գայ։

Հոխիսիմ.

Խեղճ տղայ, մինչի հիմի աչքը վրէդ է մնացէ։

Հեղինէ.

Այս Աստծոյ-պատիժ երեխան էլ մի կողմից է հոգիս հանում։ Ո՞չ, ես չեմ կարող սրան պահել։ Ինքը որ ինձ չի՛ ուզում, ուրիշին է սիրում, թող երեխի դարդն էլ ինքը քաշի, որ իմ ազատ օրը չը խաւարացնի։ Տունն էլ որ ինձ վրա հաստատել են, հիմայ ես լաւ գիտեմ, թէ ինչպէս կ'ապրեմ։ (Ներս է մտնում Պաւլը)։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Պաւլ.

Դարդ մի՛ անի, դէդի, մի էսօր է քու նեղութիւնը։ Էգուցից լաւ գուվերնանտկա կունենանք։ Գնա՛ցի, տեսայ, խօսեցի, խօսք տաւ, որ էգուց գայ ու իր գործը սկսի։ Հէնց իմ կաբինէտի կողքի օթաղը սարգել տուր—բաւական է նրա համար։ Ինքը ուղորդ է, օտարազգի է, համա տասը հայ կնկանից լաւն է։ (Մօտենալով Լիսնիկին) Խելո՛ք կաց, լաց մի լինիր։ Էն է քեզ համար նոր շորեր եմ զակազ տուել։

Ծողակար.

Էն ինչ օքմին է, վուր պիտի գայ։ քա՛։

Պաւլ.

Մի լաւ, օրրազովանի պոյլկա է։ Շատոնց ծանօթ եմ։ Էն թաւուր մտիկ կանի երէխին, տուն ու տեղին, որ տասն հայիցն էլ լաւ։ Դէդի, դարդ մի արա, քեզ համար լաւ կուլի, ես ապսպրել եմ։

Հոխիսիմ.

Վո՛ւրդի, էդ վո՛ւնց կուլի։ (Գլուխը տատանելով) Երեխին տանց մօր շատ դժար է պահել։ Էն մարդի մօր արգանդը չորանար, վուր իմ տան մէջ էս դալմաղալը չը գցէր։ Գնա՛նք, աղջի, մի բան դնենք բերներիս, չայ էլ է չեմ խմէ, սաղ գիշերը չեմ քնէ, գլուխս պտուտ է գալի։ (Ամենքը գնում են, բացի Պաւլից)։

Պաւլ.

(Մի փոքր անցուդարձ է անում մտածելով)

Դա՛... Սէրը և սեռը միևնոյն չէ՞...

(Ձեռքով է անում և գնում։ Մտնում է Մանուշակը Ծաղիկի հետ միասին, բէդիկիւլը ձեռքին)։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ.

Մանուշակ.

(Սկզբում շատ տխուր ու վախեցած, ապա հետզհետէ աշխատում է սառնարիւն լինել։ Մօտենում է նախ ներքին սենեակների դռան և մի փոքր ականջ անելուց յետոյ գնում է դէպի Պաւլի առանձնասենեակի դուռը, ականջ է դնում, յետոյ կամացուկ դուռը բացում է, նայում և էլի զգուշութեամբ ծածկում ու գալիս դէպի բեմի առջևի կողմը, ուր տեսնում է ձին ու գարմօնիկը։ Դեղձանիկը սկսում է երգել։ Մանուշակը նայում է դէպի նրան և գլուխը դրական կերպով հանգիստ շարժում է, Թաշկինակը բէդիկիւլից հանելով, արցունքը սրբում և ապա Ծաղիկին մօտ է կանչում)։

Հասկացա՞ր ուրեմն, թէ որտեղ է վարպետ Մարտիրոսի տունը։

Ծաղիկ.

Իմա՛ցի, խաթուն։

Մանուշակ.

Այդ փողը կը տաս այրիին և իմ կողմից մխիթարութիւն կասես, հասկացա՞ր։

Ծաղիկ.

Հասկացի։

Մանուշակ.

Կասես, որ ես էգուց կամ միւս օրը կը գամ և կը տեսնեմ իրան, հասկացա՞ր։

Ծաղիկ.

Հասկացի, խաթուն. գի՛ք հասկացի։

Մանուշակ.

Դէհ, գնա՛։ Փողը լաւ պահի՛ր, չը կորցնես։

Ծաղիկ.

Ինչի՞ կը կորցնեմ (գնում է դէպի դուռը)։

Մանուշակ (տատանուելով).

Ծաղիկ, սպասի՛ր։ (Ծաղիկը կանգ է առնում դռան մօտ։ Մանուշակը հանում է բէդիկիւլից մի ծրար, որի միջից դուրս է բերում նամակը և կարդում) «Յարգելի բարեկամ, երեկ մենք չափազանց ոգևորուեցինք և բանը ծայրայեղութեան հասցրինք։ (Հառաչելով)։ Այդ դէպքը ինձ շատ է ցաւացրել. պիտի բանը այդտեղ չը հասնէր։ Ներողութիւն խնդրելով հանդերձ, պիտի հաւատացնեմ Ձեզ, որ ես դէպի Ձեզ միմիայն յարգանք եմ զգում, ուրիշ ոչինչ»։ (Ինքն իրան) Սուտ է, սուտ... սիրում եմ քեզ... Բայց ոչինչ... Այդպէս է պէտք, որ նրա կրակը մեղմանայ։ Ախր ինչո՞ւ տանջել նրան... թող ե՞ս տանջուեմ։ (Կարդում է)։ «Խնդրում եմ, որ այսուհետև վերաբերուեք դէպի ինձ այնպէս, ինչպէս եղել է անցեալնե-

բում։ Մենք պիտի միշտ կանգնած լինենք պատշաճաւոր հեռաւորութեան վրա միմեանցից։ Յոյս ունեմ, որ ուշադրութեամբ կը կարդաք նամակս և միշտ ի նկատի կունենաք։ Ձեզ յարգող տիկին Մանուշակ և այլն»։ (*Ինքն իրան*)։ Ի՞նչպէս ուղարկեմ այդ... Ի՞նչ կը զգայ նա... (*Դեղձանիկը սկսում է երգել։ Մանուշակը լսելով նրա ձայնը դրականօրէն շարժում է գլուխը*) Այո, այո, այդպէս է պէտք։ Ծաղիկ, (*Ծաղիկը մօտ է գալիս*) այդ նամակն էլ կը տաս բժիշկ Մանուէլեանցին. նա այժմ անպատճառ այնտեղ կլինի։ Իսկ եթէ դեռ եկած չլինի, տուր այրիին և խնդրիր, որ բժիշկը գալուց ձեռ-առ-ձեռ յանձնէ իրան։ Հասկացար։

Ծաղիկ.

Դիպ էլ հասկայի։ Յետոյ էլի գամ այստեղ։

Մանուշակ.

Ո՛չ, էլ դու այստեղ ոտք չկոխես։ Կը գնաս մեր տուն և կը մնաս Նանիի մօտ, ինչպէս ասել եմ։ Հայրիկին լաւ հոգ տարէք, ինձանից բարև տրա, ասա ուրախ էր։ Ես շուտ-շուտ կը գամ։ Քեզ համար վարժուհի պիտի վարձեմ, որ քեզ դաս տայ։ Մի վախիր, հանգիստ եղիր, ես ամեն բան կանեմ քեզ համար, գնա դեռ։

Ծաղիկ.

(*Աչքերը սրբելով*) Խաթուն, ես առանց քեզ ի՞նչպէս կապրեմ, առանց Լեւոնիկի... (*ձեռը համբուրում է*)։

Մանուշակ.

Ես շուտ-շուտ կը գամ, Լեւոնիկին էլ կը բերեմ։ Հանգիստ կաց, լաց մի լինիլ (*համբուրում է ձակատը։ Ծաղիկը գնում է։ Մանուշակը կամենում է գնալ դէպի ներքին սենեակները, բայց յանկարծ հանդիպում է այնտեղից դուրս եկող Պաւլին, որը տեսնելով Մանուշակին, շփոթւում է և սկսում է մտածելով անցուդարձ անել։ Մանուշակը մօտենում է բազմոցին և ընդնում է շփոթած-սպասողական դրութեան մէջ, բայց աշխատում է տիրապետել իրան*)։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Պաւլ.

Այդ բոլորը ի՞նչ է նշանակում, Մանիա։

Մանուշակ.

Կարծեմ, ինքներդ պիտի հասկանաք։

Պաւլ.

Ի՞նչ է նշանակում օրինակ երեկուայ դէպքը։ Մի՞թէ բանը պիտի այստեղ հասնէր։

Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2

Մանուշակ.

Զէր հասնիլ, եթէ Դուք ինքներդ չը հասցնէիք։

Պաւլ.

Օտարօտի՜ բան. ինձ հետ «դուք» ով ես խօսում։

Մանուշակ.

Այո՛, և նոյնը պահանջում եմ Ձեզանից. մենք այլևս ամուսիններ չենք և երբէք էլ չենք լինելու։ Այդ մասին նոյն իսկ հարց լինել չէ կարող։

Պաւլ.

Գիտես, Մանիա, մեր ուրախ օրերը դու սևացնում ես։ Գործարանի բանը գլուխ է գալիս։ Առնազն երեսուն հազար ռուբլի...

Մանուշակ.

Այդ ինձ բոլորովին չի հետաքրքրում։

Պաւլ.

Իսկ ի՞նչն է քեզ հետաքրքրում։ Ի՞նչ անունով ես դու վերադարձել քո տաճտունը։

Մանուշակ.

Իմ երեխան է ինձ հետաքրքրում և միայն նրա համար եմ վերադարձել։ Կին լինել ես չեմ կարող այլևս, իսկ մայր լինել կարող եմ և կամենում եմ։ Ես կը մնամ այս տանը միմիայն իմ երեխայի համար։

Պաւլ.

Եւ մի՞թէ իմ բոլոր աշխատանքը այդ նոյն երեխային չէ պատկանում։

Մանուշակ.

Ո՛չ. նրան բոլորովին ուրիշ տեսակ աշխատանք է հարկաւոր։ Նա իմ երեխան է և նրա միակ իրաւունքը ինձ է պատկանում։

Պաւլ.

Այդ ի՞նչ մեծ-մեծ պրէտէնզիաներով ես եկել, կարծես նոր լեզու ես բացել, այն էլ երեկւայ խայտառակութիւնից յետոյ։

Մանուշակ.

Այո։ Իսկ Դուք կարծում էիք, թէ հայ կինը միշտ խաղալի՞ք կլինի Ձեր ձեռքին։ Ես համբերում էի, բայց այդ չէ նշանակում, թէ ես ոչինչ ոյժ չունէի, թէ նոյն իսկ իմ ամենասրբազան իրաւունքը պիտի ոտնակոխ անէիք. պիտի իմ երեխային խլէիք իմ կրծքից և

այլասեռելով ով գիտէ ինչ հրէշ պատրաստէիք նրանից։ Հաւը հաւութեամբ բազէ է դառնում, երբ նրա ճտերին վտանգ է սպառնում։ Այո՛, նրա միակ իրաւունքը ինձ է պատկանում, նա իմ որդին է (Դուք ինչ նեղութիւն էք քաշել նրա վրա) և Ձեզ ընդ միշտ խնդրում եմ բոլորովին չը խառնուել նրա կրթութեան գործին։

Պաւլ.

Ես հրաւիրել եմ նրա համար մի պոյլկա վարժուհի, որը նրան նոյն իսկ ֆրանսերէն խօսալ պիտի սովորցնի և...

Մանուշակ (*ցնցելով*).

Երևի Ձեր բարեկամ մադէմուազէլն... Ներեցէք, իմ երեխային վարժուհիներ հարկաւոր չեն, ես ինքս կլինեմ նրա վարժուհին։

Պաւլ.

Ես մտադիր եմ շուտով զիմնազիա տալ նրան, նա պիտի լաւ պատրաստուի, ես մտադիր եմ...

Մանուշակ.

Թողէք Ձեր մտադրութիւնները։ Այդ բոլորը իմ գործն է։ Դուք անհոգ եղէք։ Ես ինքս գիտեմ, թէ ում ձեռքով և ում խորհուրդներով կը դաստիարակեմ իմ երեխային։

Պաւլ.

Բանը որ քեզ մնայ, դու աւելի շուտ խորհուրդ կը հարցնես Մանուէլեանցից, քան թէ երեխայի հարազատ հօրից։

Մանուշակ.

Եթէ երեխայիս օգուտը այդ պահանջի, անշուշտ այդպէս էլ կանեմ։

Պաւլ (*հետզհետէ բարկանալով*).

Մանուշակ, դու ուրեմն կամենում ես իմ տանը մնալ և շարունակել քո յարաբերութիւնները այդ սրիկայի հետ... Եւ դու կարծում ես, թէ ես թոյլ կը տամ այդ. ես չեմ կարող իմ պատիւը պաշտպանել...

Մանուշակ.

(*Դառն ժպիտ*) Պատիւ... Դուք պատուից էք խօսում... Ողորմելի՜... քո պատիւը ես եմ պաշտպանում, ես... Դու կարող ես խաբել ամբողջ հասարակութիւնը, կարող ես չինովի ջէնտլմէնութեամբ և քո խորամանկ նպատակներով ու բարեգործութիւններով շլացնել ուրիշներին, դիրք և անուն ունենալ հասարակութեան մէջ, բայց հասարակութիւնը կոյր է... Քեզ ճանաչողը, քո իսկական պատկերը ըմբռնողը միայն ես եմ, որ եօթն տարի շարունակ դիտում եմ քո ամօթալի կեանքը... Եւ եթէ չը դադարեցնես քո ոտնձգութիւնները, ես կը մերկացնեմ ամեն բան և միանգամից ջարդ ու փշուր կանեմ քո սարսափելի դիմակը...

Պաւլ (*զայրացած՝ ոտները զետնին խրելով*).

Ձենդ կորի՜ր, լի՜ր, կամ թէ այս րոպէին դուրս կորիր իմ տնից։

Մանուշակ.

Եթէ բանը դուրս կորչելուն հասնի, ոչ թէ ես, այլ Դուք պիտի դուրս կորչէք։ Փաստերը իմ ձեռքին են, որոնցով կարող եմ պաշտպանել իմ և իմ երեխայի իրաւունքները։

Պաւլ (*փոքր ինչ շփոթուած, բայց նախկին եղանակով*).

Ի՞նչ փաստեր... Ինչո՞վ կարող ես վնասել իմ պատուին։

Մանուշակ.

Անթի՜ւ... Բաւական չէ՞ հէնց Ծաղիկի՜ փաստը... Խեղճ, անտիրական որբիկին ես առնում եմ իմ խնամակալութեան ներքոյ, ինձ համար քոյր եմ կամենում պատրաստել, իսկ դու նրա կեանքը խորտակում ես, քո գազանային կրքերին յագուրդ տալու համար։ Քեզ սազ են գալիս քո պոյլկաները, քո ֆրանցուժօնկաները, իսկ անարատ հայուհուց հեռու կանգնիր, թէ չէ...

Պաւլ (*շփոթուած*)

Ի՞նչ, ի՞նչ... Ծաղի՞կը՞...

(*Ներս է մտնում Սարգիսը*)։

Սարգիս.

Բժիշկ Մանուէլեան։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Մանուշակ.

(*Նախ դժուարանալով, ապա վճռականութեան գալով*). Թող ներս գայ (*Սարգիսը դուրս է գնում*)։

Պաւլ.

Թող կորչի՜...

Մանուշակ.

Թող ներս գայ։ Հանգիստ եղէք, ես դարձեալ Ձեր պատիւը կը պաշտպանեմ... (*Պաւլը շփոթուած գնում է ծերը ձակատին և ինչ որ մռմռալով ու գլխով անելով գնում է առանձնասենեակ։ Մանուշակը խիստ մտատանջւում է, մինչև որ ներս է մտնում բժիշկը։*

Բժիշկ (*տխուր ու մեղմ*).

(*Հանդարտ մօտ գալով, և Մանուշակի ծերը սեղմելով*) Նամակը ստացայ։ (*Դժուարանալով, տատանուելով*) Թոյլ կտա՞ք հարցնել Ձեր առողջութիւնը. ինչպէս էք զգում Ձեզ։

Մանուշակ.

Լաւ եմ։

Բժիշկ.

Լաւ էք... (*Նայելով աչքերին*) Ինձ խաբում էք... Նամակը ուշադրութեամբ կարդացի, հասկացայ, թէ ինչ էք ուզում ասել... Այո, իմ ազնիւ բարեկամ, հասկանում եմ Ձեր նամակի ոչ թէ բառը, այլ էութիւնը...

Մանուշակ (*ցնցելով*)։

Որքան միամիտ եմ ես։

Բժիշկ.

Լաւ էք... Մի՞թէ Դուք լաւ էք...

Մանուշակ.

Պէտք է լաւ լինել, հանդիսատեղէք։ Խօսեցէք այնպէս, ինչպէս խօսում էիք մինչև երեկ՝ սառն, գիտակցաբար... Կայծերը թագցրէք...

Բժիշկ.

Ինչպէս թագցնեմ։

Մանուշակ.

(*Հոգեկան տանջանքը զսպելով*) Իսկապէս ի՞նչ էք պահանջում ինձանից։

Բժիշկ.

Քո սիրտը, քո հոգին...

Մանուշակ.

Իմ սիրտն էլ, հոգին էլ քեզ է պատկանում։

Բժիշկ.

Ես կամենում եմ, որ դու երջանիկ լինես։

Մանուշակ.

Իսկապէս կամենում ես այդ։

Բժիշկ.

Մի՞թէ կասկածում ես...

Մանուշակ.

Չեմ կասկածում։ Բայց գիտես թէ ես ինձ երբ երջանիկ կը զգամ. երբ դու կը դառնաս այն, ինչ որ ես միշտ սպասել եմ։ Գիտես թէ ես քեզանում ինչն եմ սիրել... Ես սիրել եմ քո իդեալական էութիւնը, քո փափուկ սիրտը, քո զօրեղ հոգին և միշտ յոյս եմ դրել, որ դու կփայլես երկնային ճառագայթներով... Նորից հարցնում եմ. սիրում ես ինձ, կամենում ես, որ ես իմ սրտի լորքում ինձ երջանիկ զգամ...

Բժիշկ.

Կ՚անքս չեմ խնայիլ, կը թռչեմ անդունդը, միայն թէ դու այդպէս անբաղդ չլինես։

Մանուշակ.

Ուրեմն արդարացրու իմ յոյսերը։

Բժիշկ.

Ամենը բան կանեմ, որ քո աչքերից ցրցունքը սրփի...

Մանուշակ.

Ի՞նչ ես տեսնում իմ աչքերի մէջ...

Բժիշկ.

Մայր-Արաքսի ծանր վիշտը...

Մանուշակ.

Մեղմացրու ուրեմն...

Բժիշկ.

Իսկ քեզ... քե՞զ...

Մանուշակ.

Իմ հոգին միշտ քեզ հետ կլինի...

(*Հեռից լսւում է ննջեցեալի զանգը։ Փողոցի պատշգամբի կողմից լսւում է «Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տ՛էր, ողորմեա...»։*)

Լսում ես. Մարտիրոսին ժամ են տանում։ (*Տխուր մօտենում են պատշգամբի դռանը և նայում են դէպի փողոց։ Քահանայի ձայնը շուտ քաղարում է, բայց զանգը շարունակւում է։ Մանուշակը ու բժիշկը սկսում են դէպի յետ դառնալ*)։

Ո՞վ պիտի պահի այդ որբերին... Եւ որքա՞ն այդպիսի թշւառներ կան... Ի՞նչ. մի՞թէ ամենքն էլ այդ դրութեան մէջ չեն...

Բժիշկ.

Ի՞նչ կարելի է անել։

Մանուշակ.

Շատ բան, միայն կամք է հարկաւոր։

Բժիշկ.

Ո՞վ է մեղաւոր, որ կեանքը այդպէս է։

Մանուշակ.

Ե՞ս... Եւ Դու...

Բժիշկ.

Ուրեմն ի՞նչ ես հրամայում ինձ անել։

Մանուշակ.

Բորբոքիր կայծերը... Թող մարդկայնական սուրբ կրակը բորբոքւի, որ հանքը հալւի, ոսկին զտւի...

Բժիշկ.

Կլինի՛ այդպէս, Բայց քո աչքերը, քո պատկերը...

Մանուշակ.

(*Հանելով այլբոմից լուսանկարը և տալով բժշկին*).

Բաւականացիր սրանով։ Քո լուսանկարը ես վաղուց ունեմ, իսկ քո իսկական պատկերը կամենում եմ տեսնել հորիզոնից արտացոլւող ճառագայթների մէջ։

Բժիշկ (*յանկարծ վհատելով*):

Բայց ես չեմ կարող Հեղինէի հետ ապրել, սարսափելի է այդ...

Հեղինէ (*ներս գալով ձախ դռնից*).

Հեղինէն չի կարօտել քեզ: Պաշա, բեր նրան այստեղ, էլ հոգիս կոկորդս հասաւ (*Պաշան մտնում է Անահիտի հետ միասին*): (*Հեղինէն բռնելով Անահիտի ձեռքը և դէպի բժիշկը հրելով*) **Եթէ ինձ չես ուզում, քս երեխիդ դարձն էլ դու քաշիր, ինձ խօ ազատին չես վարձել: Պաշա, պայդեսմ...** (*Դռնից*) **Մամա, դու էլ շուտ արի, այն տղան կարելի է կը գայ մեզ տեսնելու:** (*Հեղինէն և Պաշան գնում են: Մտնում է Լեւոնիկը և վազում է մօր մօտ*):

Բժիշկ (*մի բոպէ մտածելով*):

(*Բռնելով Անահիտի ձեռքը*) **Իսկ սրան... Սրան ինչ անեմ:**

Մանուշակ.

(*Քաշելով Անահիտին իւր մօտ*) **Տուր ինձ:**

Բժիշկ.

Ուրեմն... (*Բռնելով Մանուշակի ձեռը, մի բոպէ կանգ է առնում անորոշ դրութեան մէջ, ապա ձեռքը համբուրելով արագ քայլերով դիմում է դէպի դուռը, բացականչելով*) **Տէր ինձ ալիքներ... Փոթորիկ տէր ինձ...**

(*Պաւլը բարկացած դուրս է գալիս առանձնասենեակի դռնից և մի քանի քայլ է անում: Մանուշակը գրկում է Լեւոնիկին և Անահիտին, ասելով* **«Ահա մեր գարունը»** *և սկսում է հեկեկալ: Պաւլը խիստ ազդուած կանգ է առնում և ձեռքը դնում է ճակատին*):

...

ՀԱՅԿ. Հանրային Գրադարան
Ս.Ս.Հ.Հ. Столичная Библиотека
7/XI 1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ





Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.
Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.



Дозволено цензурою. Спб. 28 Мая 1903 года.

Худож. Типо-Литографія А. К. Вейерманъ, Спб. Мѣщанская, 2.

ԵՐԵՎԱՆԻ-ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Երկու վէպիկներ . . . . . 20 կ.
2) Հայ ժողովրդի արհեստագործութիւնը . . . . . 40 կ.
3) Ընտանիքի կեանքը. . . . . 20 կ.
4) Գէօտէ (կենսագրութիւն) . . . . . 30 կ.
5) Շիլլէր. Օրլէանի կոյսը } . . . . . 20 կ.
6) » Վիլհէլմ-Տէլլ } պատմուածքի ձևով. . . . . 15 կ.
7) » Աւազակներ } . . . . . 15 կ.
8) Բանաստեղծ-իդէալիստ Շիլլէր (Կենսագրութիւնը և գործունէութիւնը)
շքեղ պատկերազարդ հրատարակութիւն հայ I և II . 3 ր. —
նոյնը փառահեղ կազմով . . . . . 4 ր. —
նոյնը ոսկեպատ . . . . . 5 ր. —
9) «Թագնուած Կայծեր», դրամա 5 գործ., պատկերազարդ . . 1 ր. 25 կ.

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1) Զուդերման. Հայրենական տուն, դրամա 4 գործ.
2) » Սոդոմի կործանումը, դրամա 5 գործ.
3) Բրանդէս. Հիւր, դրամա 2 գործ.
4) Բիօրնսոն. Ձեռնոց, դրամա 3 գործ.
5) Բարիէր. Մարմարեայ գեղեցկուհիներ, դրամա 5 գործ.
6) Թառայեանց, «Արշալոյս», ողբերգութիւն 5 պատկ.
7) » «Հասարակական զանգակահար» (Ա. Կաճկաճեանի կենսագրութ.).
8) » Մեր ներկայ մամուլը.
9) » Փաստաբան (պատկեր) («Մշակ»).
10) » Հայ-բողոքական համայնքը (Մուրճ, 1898, № 2, 3, 4, 5).
11) » Տնտեսագիտական գրոյցներ (Տարագ, 1898).
12) » Օգիւստ Կոնտ (Ազգագր. հանդ.).
13) Շիլլէր. Զանգի երգը։

Հեղինակի հասցեն. **Баку, Др. фил. Седракъ Тараянцъ.**
Հեղինակի բացակայութեան դէպքում դարձեալ այդ հասցէն պահում է իւր զօրութիւնը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0342007

30831

891.99
R-25